# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԸ. ՏԱՐԻ ԹԻՒ 03 (1353) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 9, 2008
VOLUME 28, NO. 03 (1353) SATURDAY, FEBRUARY 9, 2008

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ԿՈՉ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

*1988 Փետրուար 20-ին, ամենէն դժնդակ պայմաններու մէջ, ծայր առաւ Արցախեան ինքնորոշման պայքարը:*

*1988 Փետրուար 28-ին, համաժողովրդական խաղաղ ցոյցերէն հազիւ քանի մը օր ետք, Սումգայիթի մէջ, Խորհրդային Ազրպէյճանը պատասխանեց ջարդերով եւ սպանդով: Յաջորդեցին Պաքուի եւ Կիրովապատի ջարդերը, որոնց զոհ գացին անմեղ հայորդիներ եւ որոնց հետեւանքով բռնի հայաթափման ենթարկուեցան Ազրպէյճանի բոլոր հայկական բնակավայրերը:*

*Արցախի ինքնորոշման արդար պայքարը, հազարաւոր հայորդիներու անձնազոհութեան գնով եւ ամէն քայլափոխին պարտութեան մատնելով ազրպէյճանական նախայարձակումները, հետզհետէ աւելի ծաւալեցաւ եւ ի վերջոյ հրաշակերտեց այն յաղթանակը, որուն կենդանի ապացոյցն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը այսօր:*

*Այսօր, Ազրպէյճան կը շարունակէ հակահայ իր ոճիրներն ու քաղաքականութիւնը:*

*Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոն, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը եւ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը որոշած են Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ միասնաբար ոգեկոչել Արցախեան շարժման 20-ամեակը, միասնաբար բողոքել Ազրպէյճանի կողմէ շարունակուող հակահայ ոճիրներուն եւ քաղաքականութեան դէմ եւ միասնաբար արծարծել Թուրքիայէն հայ ժողովուրդի իրաւունքներու հարցը:*

*Քսան տարի առաջ այս օրերուն կը սկսէր արցախահայութեան պայքարը Հայաստանի հետ վերամիանալու համար. ան վճռած էր ամէն գնով վերամիանալ մայր հայրենիքին վերջ տալով ստալինեան բռնատիրութեան պարտադրած անարդարութեան: Ինքնորոշման միջազգային իրաւունքէն բխող, Խորհրդային Միութեան սահմանադրութեամբ երաշխաւորուած եւ խաղաղ միջոցներով արտայայտուած այդ պահանջը փորձ եղաւ խեղդել արեան մէջ: Համահայկական ճիգերով տարուած այդ պայքարը հանգեցաւ Արցախի ազատագրումին. այս յաջող պայքարին առիւծի բաժինը ինկաւ Արցախի ժողովուրդի ուսերուն վրայ. իսկ Արցախի ժողովուրդին օգնութեան հասաւ համայն հայութիւնը իր բոլոր քաղաքական հոսանքներով:*

*Արցախեան շարժման սկիզբէն 20 տարի անց, կը գտնուինք նոր մարտահրաւէրներու առջեւ: Արցախի փաստացի ազատագրումին իրաւական ամրագրումը, Արցախի ներկայի սահմանները անխոցելի դարձնելը եւ ազատագրուած Արցախի վերաբնակեցումը այն առաջնահերթութիւններն են, որոնց շուրջ պէտք է համախմբուի համայն հայութիւնը: Ապահով եւ ուժեղ Արցախը Հայաստանի գոյութեան համար կենսական է: Միասնաբար նշելով Արցախեան շարժման 20-ամեակը, մեր նպատակն է այս գիտակցութիւնը վառ պահել մեր ժողովուրդին մէջ եւ միջազգային համայնքին առջեւ:*

*Սումգայիթի սպանդէն 20 տարի անց, Ազրպէյճան ոչ միայն կը շարունակէ հայութեան եւ հայկական ամէն ինչի դէմ իր ոճիրները, այլ նաեւ կը սպառնայ Արցախի եւ Հայաստանի գոյութեան: Ազրպէյճանի այս ոճիրներուն եւ սպառնալիքներուն, ինչպէս նաեւ Ազրպէյճանի կողմէ անցնող 20-ամեակի իրադարձութիւններու խեղաթիւրումին դէմ մեր միասնական բողոքի նպատակն է միջազգային հասարակական կարծիքին առջեւ բացայայտել Ազրպէյճանի իսկական դէմքը:*

*Համահայկական համագործակցութեան ուրիշ յաջող մէկ օրինակն է Թուրքիոյ գործադրած ցեղասպանութեան միջազգային ճանաչման հարցը: Արդարեւ՝ նախորդ դարու վաթսունական թուականներուն, Հայոց Ցեղասպանութիւնը միջազգային ընտանիքին կողմէ գրեթէ ամբողջութեամբ մոռցուած ու պատմական արխիւներուն մէջ վերջնականօրէն դասաւորուած կը համարուէր: Մեծ Եղեռնի յիսնամեակի օրերուն երեք ազգային կուսակցութիւններուն կողմէ միջազգային ճանաչման հարցը միասնական ճիգերով յառաջ տանելու համաձայնութիւնը նոր թափ տուաւ այդ աշխատանքին. նոյն օրերուն Սփիւռքի մէջ ծաւալող այդ շարժումին բոլորովին անկախ կերպով միացաւ նաեւ հայրենի հայութիւնը: Շնորհիւ միասնական ուժերով տարուած աշխատանքին այսօր Ցեղասպանութեան ճանաչման հարցին մէջ մեծ նուաճումներ արձանագրուած են. կը մնայ կրկին համահայկական համախոհութեամբ կատարել Թուրքիայէն հայկական պահանջներու տարազումը եւ այդ ուղղութեամբ լծուիլ աշխատանքի:*

*Առ այդ կոչ կ՚ուղղենք համայն հայութեան.*

*2008-ը հռչակել Արցախեան շարժման 20-ամեակի տարի եւ միասնաբար նշել զայն: Բոլոր միջոցներով շարունակել արցախեան գոյամարտի արդիւնքներու ամրապնդման գործը:*

*Միասնաբար շարունակել Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման աշխատանքները, մինչեւ որ Ցեղասպանութեան պատասխանատու Թուրքիայի Հանրապետութիւնը եւս փոխէ հայութեան հանդէպ իր վերաբերմունքը՝ ճանչնալով հայութեան իրաւունքները եւ մարդկութեան դէմ կատարուած այդ ոճիրին համապատասխան ամբողջական հատուցում կատարելով հայ ժողովուրդին:*

*Յետ այսու ամէն տարի Փետրուար 28ը յայտարարելով Սումկայիթի եւ Պաքուի հայութեան ոչնչացումը խորհրդանշող օր, համապատասխան ճիգով իրազեկ պահել միջազգային հանրային կարծիքն ու բոլոր պետութիւնները, մատնանշելով Ազրպէյճանի բոլոր տեսակի՝ անցեալ եւ ներկայ իշխանութիւններուն հայութեան հանդէպ վարած ոճրային քաղաքականութիւնը:*

*Վերջապէս ճիգ չխնայել սատարելու համար Հայաստան-Արցախի պետական կառոյցին զարգացման ու ամրապնդման:*

*Երեւան, 6 Փետրուար 2008*

**Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն**
**Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրօ**
**Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն**

## ԱՐՏԱՇԱՏԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ Է ՔԱՐԵՐՈՎ ՅԱՐՁԱԿՈՒՄ ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԱՆՐԱՀԱՒԱՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՎՐԱՅ

***Փետրուար 6-ին Արտաշատի մէջ քարերով ու սառոյցի կտորներով յարձակում տեղի ունեցած է Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի հանրահաւաքի մասնակիցներուն վրայ: Ապա, տեղի ունեցած է Քաշքշուք եւ ծեծկռտուք, որու ընթացքին վիրաւորուած է Լեւոն Տէր-Պետրոսեանի պետական թիկնապահներէն մին:***



**Իշխանութիւններուն կողմէ հրահրուած երիտասարդներ քարեր կը նետեն հանրահաւաքի մասնակիցներուն վրայ**

***«Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեան դէպքի կապակցութեամբ «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է.- «Փորձեցին քարեր նետել ժողովրդի վրայ, ինչից յետոյ հասնելով նախագահի մեքենային՝ բոլորը միասին յարձակուել էին թիկնազօրի պետի տեղակալի վրայ եւ մարմնական վնասուածքներ հասցրել նրան»:***

**Շար.ը էջ 4**

## «ՀԻՒՄԸՆ ՌԱՅԹՍ ՈՒՈԹՉ» ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

***«Հիւմըն Ռայթս Ուոթչ» միջազգային իրաւապաշտպան հեղինակաւոր կազմակերպութիւնը Յունուար 31-ին հրապարակած իր զեկոյցին մէջ անդրադարձած է անցեալ տարուայ ընթացքին Հայաստանի մէջ արձանագրուած մարդու իրաւունքներու ոտնահարման փաստերը:***

***«Միջազգային դիտորդները որոշած են, որ Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրութիւնները զգալի չափով կը համապատասխանէին միջազգային չափանիշերուն, թէեւ անոնք նկատած են նախընտրական խախտումներ, որոնց շարքին՝ ճնշում աշխատողներու վրայ, որպէսզի անոնք քուէարկեն յօգուտ «Հանրապետական» կուսակցութեան, քուէներու դիմաց ապրանքներու եւ ծառայութիւններու բաժանում, ինչպէս նաեւ վարչական միջոցներու չարաշահում»,-ըսուած է «Հիւմըն Ռայթս Ուոթչ»-ի տարեկան զեկոյցին մէջ:***

***Ըստ կազմակերպութեան՝ Մայիսի 12-ին եղած են հաղորդումներ նաեւ կեղծիքներու, կրկնակի քուէարկութեան, ինչպէս նաեւ ընտրութիւններու թափանցիկութեան, քուէներու հաշուարկման եւ արդիւնքներու հրապարակման հետ կապուած խնդիրներու մասին:***

***Կազմակերպութիւնը կը յայտնէ, որ Հոկտեմբերի 23-ին ոստիկանութիւնը Երեւանի մէջ ձերբակալեց ընդդիմութեան եօթ գործիչներ, որոնք անցորդներուն կը տեղեկացնէին նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ Հոկտեմբեր 26-ին կայանալիք հանրահաւաքի մասին: «Խումբը ազատ արձակուեցաւ, սակայն հետագային անոնցմէ հինգին մեղադրանքներ***

**Շար.ը էջ 4**

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԱՆԻՄԱՍՏ ԴԻՄԱԴՐՈՒՄ ԵՆ

Այն բանից յետոյ, երբ Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարեց, թէ նախագահ ընտրուելուց յետոյ անպայման անելու է ամէն ինչ Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնը մինչեւ վերջ բացայայտելու համար, իշխանական ճամբարում խուճապ սկսուեց:

Բայց խուճապը, որքան էլ զարմանալի է, տարօրինակ դրսեւորումներ ունեցաւ: Սերժ Սարգսեանի թիմակիցները, այդպէս էլ չկարողանալով բացատրել, թէ ի՞նչ վատ բան կայ այդ ոճրագործութիւնը մինչեւ վերջ բացայայտելու ցանկութեան մէջ, իրենց կարծիքով անցան «հակայարձակման» ու «սոսկալի մեղադրանքներ» ներկայացրեցին այսօրուայ ընդդիմութեանը: «Ամենաահաւոր» մեղադրանքն այն էր, որ ոճրագործութիւնից ընդամէնը ժամեր անց պաշտպանութեան նախարարութիւնում հաւաքուած զինուորական եւ քաղաքական գործիչները կառավարութեան նոր կազմ էին հաստատել ու ներկայացրել Ռոբերդ Քոչարեանին:

Հիմա փորձենք վերլուծել իրավիճակը: Երկրում ահաբեկչութիւն է տեղի ունեցել, սպաննուել են վարչապետը, Ազգային ժողովի նախագահն ու փոխնախագահները, Ազգային ժողովն ու կառավարութեան մի շարք անդամներ պատանդի վիճակում են: Տեսականօրէն երկրի ղեկավարումը կարող է իրականացնել միայն Ռոբերդ Քոչարեանը, բայց իշխող քաղաքական ուժի («Միասնութիւն» դաշինքի) եւ ուժային կառոյցների ներկայացուցիչները կասկածներ ունեն, որ կարող է Ռոբերդ Քոչարեանի «մատը խառը լինել» այդ ամէնին: Ի՞նչ անել: Վազգէն Սարգսեանն ու Կարէն Դեմիրճեանը զոհուած են, Ռոբերդ Քոչարեանին չեն վստահում, իսկ երկիրն առանց ղեկավարման թողնել չի կարելի: Միակ տրամաբանական քայլն է՝ անյապաղ կառավարութեան նոր կազմ ձեւաւորել եւ փորձել վերահսկողութեան տակ վերցնել իրավիճակը:

Հիմա փորձենք կէտ առ կէտ հիմնաւորել այս ամէնը:

1. Երկրում իսկապէս ահաբեկչութիւն էր տեղի ունեցել (կարծում ենք, որեւէ մէկն այս փաստը չի հերքի):

2. Քաղաքական մեծամասնութեան եւ ուժային կառոյցների ներկայացուցիչները կասկածում էին Քոչարեանին ու Սերժ Սարգսեանին: Ապացոյցներ՝ որքան ցանկանաք: Մուշեղ Սաղաթէլեանն, օրինակ, նոյնիսկ բարձրաձայն ասել էր այդ մասին (եւ աւելի ուշ յայտնուեց բանտում): Խորհրդարանական մեծամասնութեան ներկայացուցիչները պահանջում էին Սերժ Սարգսեանի հրաժարականը: Աւելին. նոյնիսկ այսօր էլ Սերժ Սարգսեանի կողքին կանգնածները չեն թաքցնում, որ իրենց կարծիքով՝ ահաբեկիչների թիկունքում կազմակերպիչներ կային: Բայց զարմանալի բան՝ իրենց թեկնածուից չեն պահանջում գոնէ ձեւի համար յայտարարել, որ ինքը նոյնպէս ձգտելու է մինչեւ վերջ բացայայտել այդ ոճրագործութիւնը:

3. Այդ ծանր ժամերին, երբ երկրում բառիս բուն իմաստով իշխանութիւն չկար, առկայ էր արտաքին ագրեսիայի վտանգը եւ այլն, Ռոբերդ Քոչարեանն ակնյայտօրէն ի վիճակի չէր ղեկավարել երկիրը (ինչպէս հետագայում պարզուեց, մարդը պարզապէս սափրուած չէր): Բա ուրիշ ինչպէ՞ս պիտի վարուէին Վազգէն Սարգսեանի ու Կարէն Դեմիրճեանի զինակիցները:

Հիմա անդրադառնանք այսօրուայ քաղաքական իրավիճակին: Զարմանալի զուգադիպութեամբ, այսօր նախագահի «իշխանական թեկնածուն» այն նոյն մարդն է, ում հրաժարականը ժամանակին պահանջում էին Վազգէն Սարգսեանի ու Կարէն Դեմիրճեանի զինակիցները, նախընտրական քարոզչութիւնը փաստացի վերահսկում է այն նոյն մարդը, ով ժամանակին Հոկտեմբերի 27-ի գործով կասկածեալ է եղել, իսկ Վազգէն Սարգսեանի եղբայրն ու Կարէն Դեմիրճեանի որդին կանգնած են նախագահի այն միակ թեկնածուի կողքին, ով խոստանում է անպայման բացայայտել Հոկտեմբերի 27-ի կազմակերպիչներին: Մի քիչ շատ չե՞ն պատահականութիւնները:

Յ. Գ. Վերջապէս ե՞րբ են ժամանակին Վազգէն Սարգսեանի անունով երդուողները պահանջելու մի թեթեւ հարցաքննել Սաշիկ Սարգսեանին:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ
«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

# ՔԵՆԻԱՅԻ ԵՒ ԱՄՆ-Ի ՄԻՋԵՒ

Ինֆորմացիայի պակասը յաճախ մեզ դրդում է մտածել, որ մենք չափազանց իւրայատուկ ազգ ենք, եւ, հետեւաբար, մեր ընտրութիւններն էլ են իւրատեսակ: Բայց արժէ յիշել, որ նախագահական ընտրութիւններ անց են կացւում բազմաթիւ այլ երկրներում: Այս առթիւ ուզում եմ երկու խօսքով անդրադառնալ Քենիայի եւ ԱՄՆ-ի նախագահական ընտրութիւններին. այդ երկու ծայրայեղութիւնները վերցնում եմ այն պատճառով, որ Հայաստանն իր զարգացածութեան աստիճանով, իմ կարծիքով, դրանց ուղիղ մէջտեղում է: Նախկինում բաւականին հանգիստ եւ զբօսաշրջիկների համար գրաւիչ Քենիայում նախագահական ընտրութիւնները տեղի են ունեցել անցած տարուայ Դեկտեմբերի 27-ին: Արդիւնքները, բնականաբար, կեղծուեցին, եւ դա առաջացրեց սարսափելի բռնութիւնների ալիք, որոնք շարունակւում են մինչ այս պահը, իսկ զոհերի թիւն արդէն անցել է հազարից: Ինչպէս նման դէպքերում յաճախ լինում է, խժդժութիւնների պատճառները ոչ միայն քաղաքական պայքարն է, այլեւ՝ էթնիկ թշնամանքը: Նախագահ Կիբակին ներկայացնում է իշխող կիկույու ցեղը, իսկ նրա մրցակից Օդինգան՝ լուօ: Նախագահական ընտրութիւնները պատճառ դարձան, որ կիկուիները եւ լուօները իրար կոտորեն, մորթեն եւ ողջակիզեն: Փառք Աստծոյ, մեզ նման սցենար չի սպառնում՝ նախեւառաջ այն պատճառով, որ մենք մեզ ընկալում ենք որպէս մէկ ազգի ներկայացուցիչներ:

Իսկ ահա ԱՄՆ-ում նախագահի ընդդիմադիր (դեմոկրատական) կուսակցութեան յաւակնորդներ Հիլարի Քլինթոնը եւ Բարաք Օբաման վիճում են, թէ նրանցից ով է իրական այլընտրանք գործող իշխանութեանը: Օբաման մեղադրում է նախկին առաջին տիկնոջը, որ նա ուզում է երկիրը հետ տանել դէպի 20-րդ դար, երբ իշխում էր Հիլարիի ամուսինը (մեր լեզուով ասած՝ «նախկին յանցաւոր ռեժիմը»): Սեւամորթ սենատորը նաեւ ամբաստանում է իր մրցակցին, որ վերջինս յատուկ ներդրուած է ընտրապայքարի մէջ՝ դեմոկրատական կուսակցութիւնը պառակտելու համար (այսինքն՝ «իշխանութեան պրոյեկտ է»): Ամբողջ խնդիրը, սակայն, այն է, որ ԱՄՆ-ում «ընդդիմութեան միասնական թեկնածուն» նոյնպէս որոշւում է ընտրութիւնների միջոցով (primaries), իսկ բուն նախագահական ընտրարշաւի ժամանակ ընդդիմադիր թեկնածուներն իրար այլեւս չեն հարուածում: Այդ մակարդակին մենք դեռեւս չենք հասել:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
«ԱՌԱՒՕՏ»

# ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Այսօր Հայաստանի նախագահի գրեթէ բոլոր թեկնածուները քննադատում են նախագահի հիմնական թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանին, բայց չեն գլանում կրկնօրինակել առաջին նախագահի կարգախօսներն ու մարտավարութիւնը:

Կիրակի օրը Ազատութեան հրապարակում հանրահաւաք հրաւիրեց Արթուր Բաղդասարեանը: Ճիշդ է՝ այս հանրահաւաքը ոչ միայն առաջին նախագահի մարտավարութեան կրկնօրինակումն էր, այլեւ հետագայում նրա հետ միասնաբար հանդէս գալու բացայայտ ակնարկ: Չենք կասկածում, որ իր լծակներն օգտագործելով՝ Սերժ Սարգսեանն էլ կը յաջողացնի մայրաքաղաքում բազմամարդ հանրահաւաք անել, դաշնակցութիւնն էլ իր հնարաւորութիւնների սահմաններում կ՛անի: Հանրահաւաքների հարցում նախագահի միւս թեկնածուներն, իհարկէ, չեն կարողանայ կրկնօրինակել ու նմանակել Տէր-Պետրոսեանին այն պարզ պատճառով, որ Ազատութեան հրապարակը գոնէ մէկ քառորդով լցնելը միւս թեկնածուների ուժերից վեր է:

Նրանք էլ փորձում են իրենց հնարաւորութիւնների սահմաններում առաջին նախագահին նմանակել ու կրկնօրինակել: Օրինակները բազմաթիւ են, բայց այս պահին ուզում ենք նշել դրանցից ամենացցունը:

«Կենտրոն» հեռուստաընկերութեան մեկնաբան Պետրոս Ղազարեանն իր «Ուրուագիծ» հաղորդման մէջ քարոզարշաւի սկզբից սկսած՝ ցանկանում էր հաղորդման մէջ ներգրաւել նախագահի թեկնածուներին. Նրանցից մի քանիսի հետ, այդ թւում՝ Տիգրան Կարապետովիչի հետ, Պետրոսը հաղորդումներ արեց: Բայց այն բանից յետոյ, երբ Պետրոսին հիւր գնաց ոչ թէ անձամբ Տէր-Պետրոսեանը, այլ առաջին նախագահի նախընտրական շտաբի պետ Ալեքսանդր Արզումանեանը, նախագահի միւս թեկնածուները Պետրոսի հաղորդման սկսեցին ուղարկել իրենց նախընտրական շտաբների պետերին:

Մեկնաբանութիւնները երեւի աւելորդ են:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

# ՊԱՏԱՍԽԱՆԸ ՉԻ ՈՒՇԱՆԱՅ

Երբ ուշադիր հետեւում ես վարչապետ Սերժ Սարգսեանի ընտրարշաւին, հասկանում ես, որ դրա իմաստը ոչ թէ տուեալ թեկնածուին, այսինքն՝ Սերժ Սարգսեանին գովազդելն է, այլ մարդկանց, ՀՀ քաղաքացիներին ճնշելն ու ստորացնելը: Բռնի կերպով մարդկանց հանրահաւաքների տանելը ոչ մի բանով չի բարձրացնում Սերժ Սարգսեանի վարկանիշը, այլ ընդհակառակը՝ կարող է միայն իջեցնել, որովհետեւ բռնութեան ենթարկուած մարդիկ կարող են միայն հայհոյել նրան: Բայց գործող վարչապետի համար կարեւոր է ոչ թէ իր վարկանիշը, այլ այն, որ մարդն իրեն մարդ չզգայ, այլ զգայ առարկայ, ուրիշի սեփականութիւն: Սերժ Սարգսեանը հասկանում է, որ միայն այս պարագայում է հնարաւոր իր յայտնուելը երկրի նախագահի պաշտօնում: Ցամենայնդէպս, տասը տարի քոչարեանասարգսեանական գոյգը հենց այսպէս է մնացել իշխանութեան եւ այս բանաձեւը փոխելու անհրաժեշտութիւն չունի: Այս է պատճառը, որ իր հանդիպումների ընթացքում Սերժ Սարգսեանը երբեմն բացայայտ ձեռ է առնում ներկաներին: Մասնաւորապէս, երեկուայ երեւանեան հանդիպումներից մէկի մի մասնակից ուղղակի շշմել էր գործող վարչապետի ցինիզմից: Բանն այն է, որ հանրահաւաքների տարուած մարդիկ, բնականաբար, ոչ մի կերպ չեն արձագանքում Սերժ Սարգսեանի ասածներին: Այս հարցը լուծւում է ձայնագրուած ծափեր եւ վանկարկումներ միացնելով: Այս ամէնը պարզ է եւ հասկանալի. բայց զարմանալին այն է, որ ամէն անգամ, երբ ծափերի եւ վանկարկումների ձայնագրութիւնը վերջանում է, Սերժ Սարգսեանը ներկաներին շնորհակալութիւն է յայտնում օվացիաների համար: Սա այլ կերպ, քան ներկաներին ձեռ առնել, դժուար է անուանել: Ու քիչ չի՝ մարդկանց բռնութեամբ քշում են հանդիպումների, վերջում մի հատ էլ ձեռ են առնում: Բայց ոչինչ, Փետրուարի 19-ին Սերժի հանդիպումների քշուածները իրենց հերթին ձեռ են առնելու իրենց ձեռ առնողներին:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

## ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ ՀԱՍՑԷԻՆ ՀՆՉԵՑՈՒԵԼ Է ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ


Տեսարան մը թեկնածու Արթուր Բաղդասարեանի հանրահաւաքին ներկայ եղած բազմահազար ժողովուրդէն

«Եթէ ինձ հետ որեւիցէ մի բան պատահի, ապա դրա անմիջական պատասխանատուն այսօրուայ գործող իշխանութիւններն են»,- Փետրուարի 3-ին Ազատութեան հրապարակում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահաւաքի ժամանակ յայտարարեց ՀՀ նախագահի թեկնածու, «Օրինաց Երկիր» կուսակցութեան նախագահ Արթուր Բաղդասարեանը՝ յայտնելով, որ նախօրէին իր հասցէին հնչեցուել է սպանութեան սպառնալիք: «Հոկտեմբերի 27-ին գլխատուեց Հայաստանի քաղաքական վերնախաւը, իսկ հիմա ուզում են ահաբեկել ինձ՝ որպէս նախագահի թեկնածուի: Ես յայտարարում եմ. ինձ ահաբեկել հնարաւոր չէ, ես ունեմ անկոտրուն վճռականութիւն»,- նշեց Ա.Բաղդասարեանը:

Ըստ ՕԵԿ-ի առաջնորդի, ժողովրդական շարժումը թափ է հաւաքում, եւ ինքը համոզուած է, որ այդ բազմահազարանոց հանրահաւաքին վաղը միանալու են Լեւոն Տէր-Պետրոսեանը, Րաֆֆի Յովհաննիսեանը եւ ընդհանրապէս բոլոր նրանք, ովքեր ուզում են ապրել արժանապատիւ կեանքով ազատ երկրում: Նա նշեց, որ անկախ կուսակցական պատկանելիութիւնից նրանք պէտք է համախմբուեն: «Թէ ով ում կը միաւորուի, ցոյց կը տայ ժամանակը, ցոյց կը տան բանակցութիւնները, որոնք այսօր տարւում են Տէր-Պետրոսեանի եւ Րաֆֆի Յովհաննիսեանի հետ»,- ասաց Ա.Բաղդասարեանը:

Նրա խօսքերով, փողով ընտրուած նախագահի իշխանութիւնը դատապարտելու է ազգին ստրկութեան: Ա.Բաղդասարեանը կոչ արեց ընտրական յանձնաժողովների անդամներին զերծ մնալ կեղծիքներից, իսկ ընտրողներին՝ իրենց առաջարկուող կաշառքը վերցնելուց: Նախագահի թեկնածուն, ի դէպ, նշեց, որ այսօր որոշ տեղերում ընտրակաշառքի գումարը հասել է աննախադէպ չափերի՝ 60 հազար դրամի (մօտ 200 ԱՄՆ դոլար):

## ՄԻ ԽՈՒՄԲ ԱՆԴԱՄՆԵՐ ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ «ԲԱՐԳԱՒԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՇԱՐՔԵՐԻՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ինչպէս երկուշաբթի օրը «Ազատութիւն» ռադիոկայանին տեղեկացրեց «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան Աւանի տարածքային կազմակերպութեան նախկին քարտուղար Գոռ Խլղաթեանը, իրենց կառոյցի մի խումբ ակտիվիստներ դուրս են եկել կուսակցութեան շարքերից եւ յայտարարել են նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանին սատարելու մասին:

Համապատասխան յայտարարութիւնը ստորագրել են «Բարգաւաճ Հայաստան»-ի Աւանի կազմակերպութեան 10 ակտիվիստներ: Խլղաթեանի խօսքով, սակայն, եւս 300 անդամ «բանաւոր յայտարարել են» կուսակցութիւնից դուրս գալու մասին:

«Պարզապէս ես հիմա չեմ կարող եւ ինձ թոյլ չեմ տայ այդ մարդկանց անձերը բացայայտել», - ասաց նա՝ խոստանալով, որ անունները կը ներկայացնի առաջիկայում: - «Իրավիճակը պարզ է մեր երկրում, [այդ] մարդիկ աշխատում են եւ մտավախութիւններ ունեն»:

«Կուսակցութեան քաղխորհուրդը որոշում է կայացրել առաջիկայ նախագահական ընտրութիւններում պաշտպանել Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը: Շատ մարդիկ, որոնց ես համարում եմ կուսակցութեան սերուցք, որոշեցին դուրս գալ կուսակցութեան շարքերից», - շարունակեց նա՝ յաւելելով, որ իրենք «պահպանում են նոյն յարգանքը կուսակցութեան ղեկավարի [Գագիկ Ծառուկեանի] հանդէպ»:

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան Աւանի տարածքային կառոյցի ղեկավար Լեւոն Ասատրեանը, մինչդեռ, «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց, որ Խլխաթեանը կուսակցութիւնից դուրս է եկել Յունուարի 22-ին, սակայն պատճառը «գաղափարական կամ քաղաքական տարաձայնութիւնները» չեն եղել:

«Ոչ մի յայտարարութիւն չի արել», - ասաց Ասատրեանը: - «Ինքը այդպիսի բան չի ասել, որ կապուած է կուսակցութեան քաղաքականութեան հետ: Խօսքը գնացել է զուտ ֆինանսական հարցերի շուրջը: Այնտեղ ֆինանս են առաջարկել, այդ մարդիկ գնացել են»:

## ՊԷՏՔ Է ՄԻԱՒՈՐՈՒԵԼ

Ռուսական «Արգումենտի ի ֆակտի» պարբերականը երէկ հրապարակել է ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանի հետ հարցազրոյց, որում նա նշել է, թէ ընդդիմութեան առաջնային խնդիրը միաւորումն ու ազատ եւ արդար ընտրութիւնների ապահովումն է:

Միաժամանակ, նա ընդգծել է, որ ոչ մի ընդդիմադիր ուժ ի վիճակի չէ դա անել ինքնուրոյն, եւ որ պէտք է միաւորուել մէկ ուժեղ թեկնածուի՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի շուրջ, որը արդէն իսկ քաղաքական պայքարի մեծ փորձ ունի: Դեմիրճեանը նշել է, որ առաջիկայ օրերին իրենց են միանալու այլ ընդդիմադիր ուժեր, եւ քաղաքական իրավիճակի վերջնական բեկում է ակնկալւում: Իր հերթին, լրագրողը նշում է, որ Հայաստանում կայանալիք առաջիկայ նախագահական ընտրութիւնների ինտրիգն այն է, որ առաջին անգամ ընդդիմադիր ուժերի մեծ մասին յաջողուել է միաւորուել եւ առաջադրել միասնական թեկնածուի՝ ի դէմս առաջին նախագահի: Յօդուածագիրը նշում է, որ մեծ թուով յայտնի քաղաքական գործիչներ մի կողմ են դրել իրենց ամբիցիաները՝ գիտակցելով այդ պատմական պահի կարեւորութիւնը, եւ մասամբ հենց այդ դիրքորոշման շնորհիւ Լեւոն Տէր-Պետրոսեանը դարձել է համազգային թեկնածու:

## ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ՉԵՄ ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ՄԻ ԱԶՆԻՒ ՄԱՐԴ, ՈՐԸ ԿԱՆԳՆԻ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԿՈՂՔԻՆ»


Կոտայքի մարզ կատարած այցի ընթացքին հազարաւորներ եկած էին լսելու Լեւոն Տէր-Պետրոսեանին

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Նախագահութեան թեկնածու, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն Փետրուար 5-ին կարծիք է յայտնել, թէ ազնիւ մարդիկ չեն սատարի վարչապետ, նախագահութեան թեկնածու Սերժ Սարգսեանին:

«Ես չեմ պատկերացնում այսօր մի ազնիւ մարդ, այս երկրի հոգսերով տառապող մարդ, որը կանգնի Սերժ Սարգսեանի կողքին», - յայտարարել է Լեւոն Տէր-Պետրոսեանը Կոտայքի մարզում՝ քարոզարշաւային շրջագայութեան ժամանակ:

«Եթէ դուք ընտրում էք Սերժ Սարգսեանին՝ դուք ընտրում էք Նաիրի Յունանեանին, դուք ընտրում էք Թոխմախի Մհերին, դուք ընտրում էք «ՊԱԶ»-ի շոֆեր Սաշիկին, դուք ընտրում էք Մխչեանի Մկանը, Սերվիսի Անդոյին, Կրակեմ Հրաչին, Նեմեց Ռուբոյին: Ահա թէ դուք ում էք ընտրում», - ասել է Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ աւելացնելով. - «Ով ընտրեց Սերժ Սարգսեանին՝ նա պղծում է Վազգէն Սարգսեանի եւ Կարէն Դեմիրճեանի սուրբ գերեզմանները»:

Դիմելով Կոտայքի մարզում բնակուող մեծահարուստ, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանին, որը «դուրս չի եկել ժողովրդի դէմ եւ բարոյականութիւն ունի», թեկնածուն յորդորեց. - «Ահա քո ժողովուրդը: Այսօր դու ընտրելու ես՝ դու կամ կանգնելու ես քո ժողովրդի կողքին, կամ յաւերժ դատապարտուած ես լինելու՝ լինել ստրուկ, արժանանալ այս ժողովրդի քամահրանքին: Դու ունես հնարաւորութիւն հպարտ քայլելու այս քաղաքով եւ ունես հնարաւորութիւն փողոց դուրս չգալու: Ընտրիր քո իրաւունքը»:

Լեւոն Տէր-Պետրոսեանը պնդեց, որ «եթէ Գագիկ Ծառուկեանը արագ չգիտակցի», «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը կը միանայ իրենց ճամբարին: «Նա կը մնայ մենակ, բոլորը գալու են մեզ հետ», - համոզմունք յայտնեց թեկնածուն:

Վերջերս «Բարգաւաճ Հայաստանի»-ի մի խումբ անդամներ յայտարարել են, թէ դուրս են գալիս կուսակցութիւնից եւ սատարելու են Լեւոն Տէր-Պետրոսեանին:

«Ես այսօր համոզուած եմ, որ ինձ հետ է նաեւ Արտաշէս Գեղամեանի կուսակցութիւնը, նրա բոլոր կառոյցները: Նա մնացել է մենակ», - վստահեցրեց Լեւոն Տէր-Պետրոսեանը:

## ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՄԵԾ, ԵՐԿԱՐԱՏԵՒ ՄԻԱՑՈՒՄ ԵՒ ՈՉ ԹԷ ՀԵՐԹԱԿԱՆ ԿԱՐՃ ՄԻԱՑՈՒՄԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Ժառանգութիւն» կուսակցութեան վարչութիւնը, ըստ կուսակցութեան նախագահ Րաֆֆի Յովհաննիսեանի, պաշտօնապէս վերջնական նախընտրական որոշումը կը կայացնի, հաւանաբար, այս շաբաթավերջին, իսկ այսօր եւ այս շաբաթ խորհրդակցութիւններն այլ ուժերի հետ կը շարունակուեն:

«Ուրախ ենք, որ ամէն մէկը իր խօսքն ասում է, իր ենթադրութիւնը կատարում է, բայց ես կարծում եմ, որեւէ մէկը հիմք չունի «Ժառանգութիւն» կուսակցութեան անունից յայտարարութիւններ կատարել», - «Ազատութիւն» ռադիոկայանի եւ «Նոյեան Տապան»-ի հետ զրոյցում յաւելեց Յովհաննիսեանը:

Անցած շաբաթավերջին նախագահի առնուազն երկու թեկնածու ակնարկել էին «Ժառանգութեան» աջակցութեան մասին. Լեւոն Տէր-Պետրոսեանը ուրբաթ օրը Կոթիում ասել էր. - «Ես լուրջ հիմքեր ունեմ ասելու, որ մեզ միանալու են նաեւ Րաֆֆի Յովհաննիսեանն ու Արթուր Բաղդասարեանը»: «Օրինաց երկիր»-ի նախագահը, իր հերթին, կիրակի օրը Երեւանի Ազատութեան հրապարակում վստահութիւն է յայտնել, թէ իրենց հանրահաւաքին «վաղը կը միանան Լեւոն Տէր-Պետրոսեանն ու Րաֆֆի Յովհաննիսեանը»:

«Ժառանգութեան» առաջնորդը, վկայակոչելով կուսակցութեան կոչը նախագահի չորս թեկնածուներին՝ Արթուր Բաղդասարեանին, Վահան Յովհաննիսեանին, Վազգէն Մանուկեանին ու Լեւոն Տէր-Պետրոսեանին՝ միանալ մինչեւ Փետրուարի 19-ի քուէարկութիւնը, ասաց, որ իրենց այդ կոչը «ոչ միայն ծրագրային է, այլեւ կազմակերպչական»:

«Իսկապէս գիտակցում լինի, որ առանձին վերցրած, որքան էլ յարգարժան թեկնածուները ունեն հասարակական նաեւ նեցուկ, անհնար է Հայաստանի պայմաններում իրացնել այդ յաղթանակը», - յաւելեց Րաֆֆի Յովհաննիսեանը:

Իսկ իրենց կոչը, ըստ նրա, թեկնածուներից ակնկալւում է ռազմավարութեան արմատական վերանայում. պատկերաւոր ասած. - «Հայաստանում անհրաժեշտ է մեծ, երկարատեւ միացում եւ ոչ թէ հերթական կարճ միացումը»:

Րաֆֆի Յովհաննիսեանը ասաց, որ բոլոր չորս թեկնածուների հետ էլ «Ժառանգութիւն»-ը այս օրերին շփումներ ունի. - «Տեսականօրէն ամէն ինչ հնարաւոր է, ու կուսակցութիւնը պէտք է որոշի, ոչ թէ ես միայնակ»:

«Մեր ցանկութիւնը այն է, որ հիմնական ընդդիմադիր թեկնածուները դուրս գան հռետորականութեան ասպարէզից եւ զբաղուեն կոշտ, սառը, լուրջ դատողութիւններով, որոնք վճռական եւ բախտորոշ են լինելու Հայաստանի ապագայի համար», - յաւելեց Յովհաննիսեանը:

## ԼՈՒՐԵՐ

# «ԲԼԵՖ« ԿԱՄ Ս. ՍԱՐԳՍԵԱՆԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ՝ 17%

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: IRI-ի (Միջազգային Հանրապետական Ինստիտուտի) նախաձեռնութեամբ 2006-ից Հայաստանում իրականացուող Հանրային կարծիքի հարցումները կապ չունեն Gallup Incorporated-ի հետ:*

*Հայաստանեան հարցումներին, ոչ թէ որեւէ կերպ մասնակցել է Gallup-ը (Gallup-ի ազգային ստորաբաժանները իրաւասու չեն իրենց երկրի սահմաններից դուրս հանդէս գալ Gallup-ի անունից), այլ հարցախոյզի աշխատանքներին փորձագէտի կարգավիճակով ներգրաւուած է եղել մէկ մասնաւոր անձ՝ Ռասա Ալիսաուսկյենէ, ով Լիտւայի քաղաքացի է, ապրում եւ աշխատում է Վիլնյուսում սոցիոլոգիայի բնագաւառում կրթութիւն չունի, Gallup scientist-ի կամ expert-ի /գիտաշխատող, կամ փորձագէտ/ որակաւորում նոյնպէս չունի: Ընդամէնը Ալիսաուսկյենէն 1992-ից հիմնադրել եւ ղեկավարում է շուկայի եւ հասարակական կարծիքի ուսումնասիրման "Baltic Surveys" կոչուող ՍՊԸ-ն, որի գործունէութեան մի ուղղութիւնը վերջերս դարձել է Gallup-ի հետ համագործակցութիւնը:*

*Փաստօրէն, Հայաստանում տեղական մի ՀԿ /Հայաստանի Սոցիոլոգների Ասոցիացիան/ իրականացնում է հարցախոյզեր, դրանցում փորձագէտի կարգավիճակով ներգրաւուած է Լիտւայի քաղաքացի մասնաւոր անձ, ով իր հերթին ղեկավարում է Վիլնյուսում տեղակայուած մի ՍՊԸ, որի գործունէութեան մի սեկտորը Gallup-ի հետ համագործակցութիւնն է, այն էլ միայն Լիտւայի սահմաններում: Ակնյայտ մի ձեռնարկութիւն, որը որեւէ կերպ չի կարող նշանակել եւ չի նշանակում Gallup Poll:*

*Իսկ IRI-ի հարցման հանրայայտ դարձած հատուածը, որ վերաբերւում է ՀՀ նախագահական ընտրութիւններին ընդառաջ գնացող քաղաքական գործիչների վարկանիշին, պարզուել է՝ չի կարող կապ ունենալ անգամ IRI-ի հետ՝ առանց IRI-ի մանդատ ստանալու:*

*IRI-ի կողմից իր պաշտօնական կայքէջում պաշտօնապէս յայտարարուած է, որ IRI հարցախոյզները չեն կարող անդրադառնալ ընտրարշաւի ընթացքում վարկանիշների թեմային, թէ որ թեկնածուն կամ կուսակցութիւնն է ընտրապայքարի առջեւում: Հետեւաբար, IRI-ի անունից հարցում իրականացնելը, որը IRI-ի մանդատով ուղղակի արգելուած է, ակնյայտ զեղծարարութիւն է:*



Հայաստանի նախագահի ինը թեկնածուները

*Փաստօրէն բացայայտուել է, որ մի քանի ամիս Հայաստանում տարփողուող Գելլափ անուանանշումով հարցախոյզերը եղել են բլեֆ՝ հայաստանեան մի ՀԿ IRI-ի անունից իրականացրել է նոյն այդ IRI-ի մանդատով արգելուած հարցում եւ դա հասարակութեանը ներկայացուել է որպէս Gallup Poll՝ ելնելով հանգամանքից, որ հարցախոյզում ընդգրկուած Լիտւայի քաղաքացի փորձագէտը ղեկավարում է Վիլնյուսում գործող ՍՊԸ, որը համագործակցում է Gallup-ի հետ:*

*Առաւել հետաքրքիր է, որ այս բլեֆի բացայայտումը ժամանակային առումով զուգադիպել է Gallup-ի պաշտօնական կայքէջում "GALLUP EXCLUSIVE: Conflict in the Caucasus. New Surveys on Azerbaijan-Armenia" յօդուածի հրապարակման հետ, որտեղ ներկայացւում են Սերժ Սարգսեանի կառավարութեանը հայաստանցիների տուած գնահատականները: Դրանք հրապարակուել են Վաշինգտոնում՝ Gallup World Poll (Gallup համաշխարհային հարցախոյզի) շրջանակում: Յօդուածը միաժամանակ տպագրուել է Հարվարդի համալսարանի "Harvard International Review" հանդէսում: Հայաստանցիների 83%-ը վարչապետի ու նրա կառավարութեան գործունէութիւնը գնահատում է «վատ» կամ «շատ վատ»:*

# «ԿՈՄԵՐՍԱՆՏ». «ՎԻԿՏՈՐ ԶՈՒԲԿՈՎԻ ԱՅՑԸ ԱՒԵԼԻ ՇԱՏ ՊԷՏՔ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Զուբկովի Երեւան կատարելիք այցը աւելի շատ պէտք է Հայաստանի վարչապետ, նախագահութեան թեկնածու Սերժ Սարգսեանին: Այս կարծիքն է յայտնում այսօր ռուսաստանեան «Կոմերսանտ» թերթը:*

*«Վիկտոր Զուբկովը Երեւան է այցելում իր գործընկեր Սերժ Սարգսեանի հրաւէրով, ով նախագահական ընտրութիւնների արդիւնքում առաջխաղացման յոյս ունի: Զուբկովի այցելութիւնը ընտրարշաւի բուռն շրջանում Մոսկուայի աջակցութեան աներկբայ ապացոյցն է», - գրում է թերթը եւ նշում. - «Հայաստանում անցեալ տարուայ խորհրդարանական ընտրութիւններում ռուսաստանցի պաշտօնեաները ակտիվօրէն քարոզում էին պարոն Սարգսեանի Հանրապետական կուսակցութեան օգտին: Այդ քարոզարշաւի ժամանակ Հայաստան մեկնեց արտգործնախարարութեան ղեկավար Սերգէյ Ավրովը, իսկ վարչապետ Միխայիլ Ֆրադկովը նոյնպէս ամենայն աջակցութիւն ցուցադրեց Սերժ Սարգսեանին, ճիշդ է, Հայաստան չեկաւ՝ նախընտրելով յայտարարութեամբ հանդէս գալ Մոսկուայից»:*

*«Մինչդեռ, սպասուող նախագահական ընտրութիւններում հարցի արժէքը զգալիօրէն աւելի բարձր է՝ խօսքը պետութեան առաջին պաշտօնին է վերաբերում: Մանաւանդ, որ իշխանութիւններն անհանգստացած են փողոցային ակցիաներից, որ ամէն շաբաթ նախաձեռնում են գործող վարչապետի ընդդիմախօսները՝ ամէն անգամ հաւաքելով աւելի ու աւելի շատ մարդ», - նկատում է «Կոմերսանտ»-ը:*



Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Զուբկով

*Ըստ ռուսաստանեան թերթի՝ «իշխանութիւնների համար ոչ այնքան հաճելի նորութիւն էր նաեւ այն, որ պարոն Բաղդասարեանը եւ նրա կուսակցութիւնը հնարաւոր է պաշտպանեն Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածութիւնը»:*

*«Եթէ միաւորումը, այնուամենայնիւ, տեղի ունենայ, ապա ամենեւին էլ փաստ չէ, որ երկրի յաջորդ նախագահի անունը յայտնի կը դառնայ քուէարկութեան առաջին փուլում, ինչպէս կը ցանկանար Սերժ Սարգսեանը», - ամփոփել է «Կոմերսանտ»-ի մեկնաբանը «Հայաստանեան ընտրութիւնները փողոց են դուրս եկել» վերնագրուած յօդուածում:*

# «ՀԻՒՄԸՆ ՌԱՅԹԶ ՈՒՈԹՉ»

*Շարունակուած էջ 1-էն*

*առաջադրուեցան՝ ոստիկանութեան վրայ յարձակելու համար»,- կը յայտնէ զեկոյցը:*

*Զեկոյցը կ՚անդրադառնայ նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան երիտասարդական թեւի գործիչ Նարեկ Գալստեանի ծեծին: «Այս միջադէպէն երկու օր առաջ ոստիկանութիւնը կարճ ժամանակով կալանքի ենթարկեց Նարեկ Գալստեանին եւ այլ ընդդիմադիր երիտասարդներու՝ վարչապետ, նախագահութեան թեկնածու Սերժ Սարգսեանը քննադատող թռուցիկներ փակցնելու համար:*

*Ըստ զեկոյցի՝ Նոյեմբեր 12-ին Հարկային պետական ծառայութիւնը Գիւմրիի մէջ գործող «Գալա» անկախ հեռուստատեսային ալիքին մեղադրեց հարկերէն խուսափելու համար: Հեռուստակայանի ղեկավարութիւնը, սակայն, համոզուած է, որ հարկային զննումը եւ իշխանութիւններու կողմէ կիրառուած միւս ճնշումները պատասխան են Լ. Տէր-Պետրոսեանի սեպտեմբերեան ելոյթի հեռարձակման հետ, որու ժամանակ վերջինս կառավարութիւնը անուանեց «կոռումպացուած եւ մաֆիոզ»:*

*Ինչպէս կը տեղեկացնէ «Հիւմըն Ռայթզ Ուոթչ»-ը, Երեւանի մամուլի ակումբի եւ «ԹԻՄ» հետազօտական կենտրոնի հետազօտութենէն պարզ դարձաւ, որ 2008-ի նախագահական ընտրութիւններէն առաջ, հեռատեսիլի ութը ալիքներու վարչապետ Սերժ Սարգսեանին վերաբերող երեկոյեան լրատուական լուսաբանումները անհամաչափօրէն աւելի դրական էին, քան ընդդիմադիր թեկնածուներունը:*

*Զեկոյցի «Խոշտանգում եւ վատ վերաբերմունք» բաժինին մէջ կազմակերպութիւնը կ՚անդրադառնայ ոստիկանական բաժանմունքէն ներս Լեւոն Գուլեանի մահուան, Լոռու մարզի դատախազ Ալբերտ Ղազարեանի սպանութեան հետաքննութեան ժամանակ որոշ վկաներէն ցուցմունք կորզելու նպատակով անոնց ծեծի ենթարկելու դէպքերուն, ինչպէս նաեւ սպանութեան մեղադրանքով դատապարտուած զինծառայողներ՝ Ռազմիկ Սարգսեանի, Մուսա Սերոբեանի եւ Արայիկ Զալեանի վճռաբեկ դատարանի կողմէ ազատ արձակման եւ գործը լրացուցիչ քննութեան ուղղարկելուն: Յայտնենք, որ Ռ. Սարգսեանի խօսքերով, զինուորական հետաքննողները ծեծած եւ սպառնացած են իրեն՝ խոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով:*

*Զեկոյցի «Լրատուամիջոցներու եւ խօսքի ազատութիւն» բաժինին մէջ կազմակերպութիւնը կ՚անդրադառնայ նաեւ 2007-ի Յուլիսի կէսերուն Հանրային ռատիոյի կողմէ «Ազատ Եւրոպա/Ազատութիւն» ռատիոկայանի հաղորդումներու հեռարձակման դադարեցման (ռատիոկայանի հաղորդումները ներկայիս կը վերահեռարձակուին մասնաւոր ցանցերով), անյայտ անձի կողմից «Իսկական իրաւունք» ընդդիմադիր թերթի խմբագիր Յովհաննէս Գալաջեանի ծեծին, «Ֆուտբոլ Պլիւս» թերթի հիմնադիր Սուրէն Բաղդասարեանի, ինչպէս նաեւ «Իմ իրաւունք» թերթի եւ «Panorama.am» լրատուական կայքէջի խմբագրական խորհուրդի նախագահ Արա Սաղաթելեանի ինքնաշարժի հրկիզման, ազատ լրագրող Գագիկ Շամշեանի նկատմամբ կիրառուած բռնարարքներին, «Ժամանակ Երեւան» ընդդիմադիր թերթի խմբագիր Արման Բաբաջանեանի նկատմամբ պարտադիր զինուորական ծառայութենէ խուսափելու մեղադրանքով սահմանուած չորս տարի ազատազրկման:*

*Իրաւապաշտպան կազմակերպութիւնը կը տեղեկացնէ, որ Հայաստանի մարդու իրաւունքներու պաշտպան Արմէն Յարութիւնեան 2007 տարուայ առաջին 6 ամիսներուն 1.353 բողոք ստացած է, որոնք հիմնականին մէջ կը վերաբերին քաղաքային իշխանութիւններուն եւ ոստիկանութեան:*

# ԱՐՏԱՇԱՏ

*Շարունակուած էջ 1-էն*

*Լեւոն Տէր-Պետրոսեանի կենտրոնական շտաբը միջադէպի կապակցութեամբ հանդէս եկաւ յայտարարութեամբ՝ պնդելով, որ «յանցաւոր այս սադրանքը կազմակերպուած է աւազակապետական իշխանութեան կողմից»:*

*«Յայտնի է դարձել, որ այն անձամբ նախապատրաստուել է [տարածքային կառավարման նախարար] Յովիկ Աբրահամեանի եղբայր, Ազգային Ժողովի պատգամաւոր Ջոնիկ Աբրահամեանի եւ մարզպետարանի սոցապ բաժնի պետի գլխաւորութեամբ: Վերջինս նաեւ ընտրատարածքային յանձնաժողովի նախագահն է: Ոստիկանութեանը հրահանգուած է եղել չմիջամտել, ինչը եւ նրանք կատարել են», - ըսուած է Տէր-Պետրոսեանի շտաբի յայտարարութեան մէջ:*

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՄԻԵՒՆՈՅՆԸ ՉԷ՛

**ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ**

Վերեւի խորագիրը մեր կտրուկ պատասխանն է բոլոր անոնց, որոնք կ՚ըսեն թէ Հայաստանի նախագահական ընտրութիւններու արդիւնքը կանխորոշուած է. ուստի միեւնոյնն է, այսպէս թէ այնպէս, Սերժ Սարգսեանը պիտի դառնայ նախագահ: Ընդունելով հանդերձ, որ ազատ ու արդար ընտրութիւններու պարագային, Սերժ Սարգսեանը չի՛ կրնար նախագահ ընտրուիլ, անոնք յանձնուած կը թուին ըլլալ այդ կանխորոշուած արդիւնքին: Ու իրենց կարծիքին որպէս ապացոյց, կը նշեն իշխանական բոլոր լծակներու շահագործման, ու այդպիսով ժողովուրդի վրայ իրենց կամքը պարտադրելու անխուսափելիութիւնը: Կը նշեն անցեալի կեղծուած ընտրութիւններու փաստը, կը նշեն Նոյան Տապանի ու Ա1+-ի փակման փաստը: Կը նշեն ահաբեկչութեանց փաստը եւ հրեշային Հոկտեմբեր 27-ը: Այս եւ շատ մը այլ փաստեր նշելով, ու իրենց մտածելակերպը «իրապաշտ» որակելով, եզրակացնողներ կան, թէ «այն ձեռքը որ չես կրնար կտրել, պէտք է համբուրես ու ճակտիդ դնես»:



Եթէ այդ մտայնութիւնը գերակշռող ըլլար հայ ժողովուրդի պատմութեան ընթացքին, մենք շատոնց կորսնցուցած պիտի ըլլայինք մեր ինքնուրոյնութիւնը եւ անհետացած աշխարհի թատերաբեմէն, ինչպէս անհետացան ուրիշ ազգեր: Ուստի, այդպէս մտածողներուն մենք կ՚ըսենք թէ ատիկա պարտուողական եւ ստրուկային մտայնութիւն է: Երազելի ու իր երազները իրականացնելու վեհանձն զգացումներէ զրկուած անձը միայն այդպիսի մտայնութիւն կ՚ունենայ: Կեանքի մարտահրաւէրները դիմագրաւելու վճռակամութենէ պարպուած անձը միայն այդպիսի մտայնութիւն կ՚ունենայ: Իր ճակատագրի տնօրինումը ուրիշին յանձնած ստրուկը միայն այդպիսի մտայնութիւն կ՚ունենայ: Ուստի, արժանապատուութեան եւ սկզբունքի տէր ոեւէ անձ, ինքզինքին պէտք չէ՛ վայելցնէ այդպիսի մտայնութիւն: Հայրենասէր ու ազգասէր ոեւէ անձ, ինքզինքին պէտք չէ՛ վայելցնէ այդպիսի մտայնութիւն: Այլ՝ յանուն մարդավայել կեանքի ու ապագայի, ամէն ձեւով պէտք է պայքարի այդ մտայնութեան դէմ:

Ազգի բարօրութեամբ մտահոգ ոեւէ անձի համար էական առաջնահերթութիւն պէտք է ըլլայ պայքարիլ այդ մտայնութեան դէմ եւ իշխանութեան հասցնել միայն արժանաւոր մարդիկ: Որովհետեւ որեւէ իշխանութիւն, որ կեղծիքներով ու խախտումներով կը հասնի առաջնորդող դիրքի, չի՛ կրնար ծառայել ազգի յառաջդիմութեան: Նորագոյն փաստը անցնող տասը տարիներուն Հայաստանի մէջ տիրող մթնոլորտն է, ուր կը քաջալերուի ստրուկային մտայնութիւնը, փոխան՝ ազնիւի, վեհանձնի եւ արժանապատիւի: Այն աստիճանի ստրկացածներ կան, որ կ՚արդարացնեն ընտրական կաշառք ընդունելու եւ «առիթէն օգտուելու» պատեհութիւնը: Այդպիսիներուն մտայնութիւնը այնքան փթթացած է, որ չեն իսկ կրնար տրամաբանել, որ եթէ ամէն ինչ «միեւնոյնն» է եւ իշխանութիւնները պիտի վերարտադրեն իրենք զիրենք, ուրեմն ինչո՞ւ անոնք աւելորդ ջանք կը թափեն մարդիկ կաշառելու, բռնութիւններու դիմելով եւ գործէ արձակելու սպառնալիքներով քուէներ կորզելու: Իշխանութիւնները կը դիմեն այդ միջոցներուն, որովհետեւ համոզուած են, որ ազատ ու արդար ընտրութիւններու պարագային իրենք ժողովուրդի քուէն չեն ստանար: Հետեւաբար եթէ ժողովուրդը ձերբազատուի ստրուկի, պարտուածի, վախկոտի մտայնութենէն եւ իր արդար իրաւունքներուն տէր կանգնի, ուրեմն անկարելի կը դառնայ այս իշխանութեանց վերարտադրումը, եւ այսպիսով նոր էջ մը կը բացուի մեր նորանկախ պետականութեան կեանքին մէջ: Ժողովուրդի էջը: Ժողովրդավարութեան էջը: Արժանապատիւ կեանքի էջը:

Փետրուարեան այս օրերուն, երբ կը նշենք Վարդանանց եւ Վահանեանց ազատագրական պայքարներու տօնը, այդ մէկը սոսկ սովորական նշում պէտք չէ ըլլայ, այլ՝ ներշնչում: Պէտք է ներշնչուինք մանաւանդ Նուարսակի դաշնագրի (484 թ.) այն նուաճումներէն, որ օտար իշխանաւորէն կը կորզէինք կրօնքի ու խղճի ազատութիւն եւ միայն արժանաւոր մարդոց պաշտօնի կոչում: Եթէ աւելի քան 1500 տարիներ առաջ, մեր պապերը պայքարի ելան ու իմացեալ մահով անմահութեան ճամբան հարթեցին, գալիք սերունդներուն համար, մենք այսօր իրաւունք չունինք ստրուկի ու պարտուածի հոգեբանութիւն ու մտայնութիւն ունենալու: Եթէ քսան տարի մը առաջ, մենք այդ նոյն մտայնութիւնը դրսեւորէինք, ծնունդ չէր առներ Արցախեան շարժումը եւ չէինք ունենար Արցախեան ազատամարտը: Հետեւաբար, այդ նոյն ոգիով ներշնչուած, ժողովուրդը դարձեալ պէտք է ոտքի ելլէ ու կոչ ընէ բոլորին՝ ըլլան անոնք բռնատէր թէ ճորտ, մեծամիտ թէ ստրկամիտ, գոռոզ թէ հլու, որ տէ՛ր է իր արդար իրաւունքներուն, ու արժանապատիւ կեանքի ու ապագայի հաստատ համոզումով կը յայտարարէ՝ «Միեւնոյնը Չէ՛»:

## ՅԱՒԱՏՈՒՄ ԵՆՔ ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆԸ, ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԶՕՐ ԿԱՄՔԻ ՈՒԺԻՆ

*Աշխարհի ժողովուրդների քարտէզի վրայի փոքրացած, աղամանդացած ժողովուրդն ենք: Մեր կապիտալը քանակը չէ, բնական հարստութիւնները չեն, երկրի ծաւալը չէ, այլ մտքի ուժն է, հնարամտութիւնն ու ձեռներեցութիւնն է, տաղանդն ու ճաշակն է: Պատմութեան աղէտներին դիմակայել ենք մեր ազգային մշակոյթով, մեր ինքնուրոյն բառ ու բանով, ճարտարապետական ինքնատիպութեամբ, եւ մեր մտաւոր կարողութեամբ: Մեզ սազական չէ նիւթապաշտութեան յոռի ցոփութիւնը: Մենք ստեղծող, կառուցող, արարող ժողովուրդ ենք: Մենք չենք կարող շռայլել մեզ տրուած ոսկի պատմական առիթը՝ կարգի դնելու մեր ազգային տունը, օճախը, վայելելու անկախ ապրելու բացառիկ առիթը: Եթէ երկիրը կայուն հիմքերի վրայ չդրուի եւ տեղի չունենայ ժողովրդավարութիւնը, ապա պատմութեան ալիքը կարող է նորից շեղել իր ուղղութիւնը:*

*Մեր ուժը Մատենադարանի բովանդակութեան մէջ է եղել, մեր արուեստի եւ գրականութեան մէջ է եղել, աստղագիտութեան եւ ճարտարապետական կոթողների մէջ է եղել, մեր ինքնուրոյն գրելակերպի եւ մտաւոր հարստութեան մէջ է եղել: Մենք պէտք է տէր կանգնենք մեր մտաւոր հարստութեանը, ոչ թէ նիւթը դարձնենք պաշտամունք:*

*Հայաստանի առաջին նախագահ, յայտնի պետական եւ քաղաքական գործիչ, միջազգային ճանաչում գտած դիւանագէտ, ականաւոր մտաւորական-գիտնական Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահ ընտրուելու թեկնածութեան առաջադրումը, մեզ շատ ոգեւորել է:*

*Մենք հաւատում ենք Լեւոն Տէր-Պետրոսեանի հայրենասիրութեան ուժին, քաղաքագէտ լինելու տաղանդին: Հաւատում ենք, որ նա քաջատեղեակ է աշխարհի քաղաքական անցուդարձից եւ գիտակցում է մեր երկրի դերը աշխարհում: Նա, ով մեծ եւ օրինակելի մարդ է, հասկանում է արդարութեան հարցերը, իսկ փոքր մարդիկ միայն հասկանում են շահի հարցերը:*

*Հաւատում ենք, որ նա նիւթից բարձր անհատ է, եւ իր մտքի զօրութեամբ, հզօր տրամաբանութեամբ կը ծառայի մշակոյթի, գիտութեան, եւ տնտեսութեան բարձրացմանը հայրենիքում: Կը նպաստի, որպէսզի եկող սերունդը իր երկրին տէր կանգնի, իր ապագան իր երկրում տեսնի, հայրենիքին ծառայի, ոչ թէ միջոց փնտռի հայրենիքից հեռանալու: Սփիւռքում ապրող բազմաթիւ մտաւորականներ եւ արուեստի մշակներ սպասում են, որ այս ինքնակոչ եւ խարդախութեամբ իշխանութեան գլուխն անցած կառավարութիւնը, որը սեփականացրել ու առուծախի է ենթարկել Հայաստան աշխարհը, հեռանայ: Փոխարէնը գայ պայծառատես եւ անաչառ Լեւոն Տէր-Պետրոսեանը, որը գիտի, թէ որտեղ է մեր երկրի մտաւոր կապիտալը, թէ ինչից են բխում ժողովրդի տնտեսական դժուարութիւնները, եւ որն է մեր ազգային հպարտութիւնը:*

*Հպարտ կը լինենք այդպիսի արժանաւոր անհատ տեսնել որպէս մեր երկրի նախագահ: Յորդորում ենք հայրենաբնակ մեր քոյրերին եւ եղբայրներին՝ համախմբուել Լեւոն Տէր-Պետրոսեանի շուրջը եւ նեցուկ կանգնել նրան: Հաւատում ենք մեր ժողովրդի հեռատեսութեանը, պայքարի ուժին, եւ ոչ հեռու ապագայում, Հայաստանի ժողովրդավարութեան յաղթանակին:*

**«Արդարութիւն» Սփիւռքահայ Մտաւորական**
**Նոյնախոհների Յանձնախումբ**
**E-mail-ի հասցէն է՝ardarutiun@gmail.com**


*The Quality and Safe Choice for Your Child's High School Education*

AGBU HIGH SCHOOL – PASADENA

*OPEN ENROLLMENT FOR 2008-2009*

*Grades 9-12*

**The administration will be happy to meet with you, answer your questions and give you a campus tour.**

**Please call (626) 794-0363**

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

# ԲԱԶՄԱԽՆԴԻՐ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

***ԴՈԿՏ. ՓՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ***

*Փետրուար 2008-ի նախագահական ընտրութիւններին բնորոշ են մի շարք առանձնայատկութիւններ: Դրանց շարքում իր ինքնատիպ տեղն է գրաւում այն իրողութիւնը, որ այն կոչուած է ընտրելու ոչ միայն հերթական նախագահը, այլ նրա սեպուհ առաքելութիւնն է հայ կեանքը տեղափոխել նոր ընթացքի մէջ, Հայաստանում կերտել ինքնատիպ մի վերածնունդ, վերադարձնել դարերի ընթացքում մշակուած հայ առաջաւոր աւանդոյթները, եւ հայ կեանքից վերացնել չարը, մոլախոտը, մակաբոյծ օտարամուտ տարրերը:*

*Նախ նշենք, որ ընտրութիւններին գործօն կերպով մասնակցում են այնպիսի քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, որոնք հենց սկզբից գիտեն, որ իրենք տուեալ պայմաններում չունեն այնպիսի ժողովրդականութիւն, որ հաւանական դարձնի նրանց ցանկութիւնը : Նրանց մի մասը ընտրապայքարին մասնակցում են ժողովրդին ինչ-որ պատգամ փոխանցելու, կարծեցեալ կարեւոր մի ճշմարտութիւն յայտնելու համար՝ կարծես անհնար է այն կատարել աւելի արդիւնաւոր ու նուազ ծախսարար միջոցներով: Որոշ տեսաբաններ կարծում են, որ նիւթականը նրանց չի մտահոգում, քանի որ այն լուծում են կողմնակի ուժեր: Ուրիշներ մասնակցում են պարզապէս ցոյց տալու համար, որ իրենք դեռ գոյութիւն ունեն, որ իրենք դեռ կենդանի են եւ կարող են ծառայողական դերեր ստանձնել, եթէ վճարուեն: Կան նաեւ այնպիսի թեկնածուներ, որոնք ներքնապէս համոզուած են, որ իրենք ընտրուելու յոյսեր չունեն, բայց իրենք իրենց խաբելով յայտարարում են յաղթանակի մասին: Իրեն գերադաս է նկատում իշխանամէտ ջոկատը, որը ձգտում է իր կամքը թելադրել միւս թեկնածուների վրայ եւ սարսափի ու վախի մթնոլորտ ստեղծել թերահաւատ ընտրողների միջավայրում: Այդ ուժը նոյնիսկ սպառնում է իր նախկին դաշնակիցներին:*

*Նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան դէմ պայքարում էին երեք ուժեր: Ատրպէյճանը մինչեւ 1994-ը զինուած պայքար էր մղում, իսկ զինադադարից յետոյ շարունակեց պայքարը դիւանագիտական ու հետախուզական եղանակներով: Միւսը՝ գործելով ներքին ճակատում նպատակադրուած էր անգործունակութեան մատնել ՀՀ պետական մեքենան ու ստեղծել ժողովրդական դժգոհութեան ալիք: Նա իր պայքարում ընդգրկեց նաեւ ՀՀՇ-ի ղեկավարութեան դժգոհ տարրեր: Երրորդ ուժը խիստ ընդյատակեայ էր ու մաս էր կազմում «իշխանութեան» եւ վարում էր խլրդային մեթոտներ: Այդ խմբի նպատակն էր տիրանալ պետութեան ղեկին: Այնտեղ գործօն էին Սերժ Սարգսեանն ու Ռոբերդ Քոչարեանը: Նրանք շուտով եկան այն եզրակացութեան, որ առանց Լեւոն Տէր Պետրոսեանին իշխանազուրկ դարձնելու իրենց համար անհնարին պիտի լինի իրականացնել իրենց ծրագիրը: Շուտով, ՀՀՇ-ի ղեկավարութեան որոշ անդամներ իրենց կողմ քաշելուց յետոյ, նրանք կարողացան Պետրոսեանին հեռացնել իր պաշտօնից ու նրա շուրջ հիւսել բացասական առասպելներ: Բայց շուտով փոխուեց կացութիւնը: Պետրոսեանից հեռացած ընկերների մեծ մասը հասկացան իրենց սխալը: Հայաստանի քաղաքական դաշտ մտաւ մեծ ժողովրդականութիւն վայելող ու ղեկավարման հարուստ փորձ ունեցող հայրենասէր Կարէն Սերոբի Դեմիրճեանը, որը հակաքոչարեանական ճակատում գրաւեց տիրակալ դիրք: Սարգսեան-Քոչարեան ծրագիրը տապալւում էր: Վերջիններս իրականացրին ազգային նոր ուժերի խմբային սպանութիւնը՝ Ազգային Ժողովի նիստի ընթացքում: Նրանք ոչ միայն անդամալուծեցին հայ քաղաքական կեանքը, այլեւ ցուցադրեցին իրենց դաւաճանական, հակաժողովրդական, բռնակալական ուժն ու տիրապետութիւնը: Այդ օրուանից սկսեց Քոչարեանի ու Սարգսեանի տիրապետութիւնը: Տասը տարի գահակալելուց յետոյ այսօր Քոչարեանը , ըստ պայմանաւորուածութեան, նախագահական աթոռը պիտի յանձնի Սարգսեանին: Ընտրութիւնը, մինչեւ Լեւոն Տէր Պետրոսեանի վերադարձը, նրանք նկատում էին որպէս աւելորդ ձեւականութիւն , պատրանք:*

*Քոչարեանն ու իր խումբը ստանձնելով ՀՀ իշխանութիւնը նախ Ղարաբաղի պետութիւնը զրկեցին իր դատը շրջանային ու միջազգային բանակցութիւններում պաշտպանելու իրաւունքից, երբ Տէր Պետրոսեանին նրանք փորձեցին ներկայացնել, որպէս «պարտուողական» Ղարաբաղի հարցում: Մի ժամ տեւող հեռուստատեսային ելոյթով ամէն կերպ Քոչարեան աշխատեց ժողովրդին համոզել, որ իր քայլը խիստ գործնական է, տրամաբանական, արդիւնաւոր, դիւանագիտական արդի եղանակներին յարիր, ազդու եւ համահայկական պահանջները խտացնող: Նա ժողովուրդին ձգտում էր համոզել, որ բանակցութիւններում հայերի երկու ձայնը նուազ իմաստալից է, քան իր միակ ձայնը: Երբ այսօր ցոյց է տրւում, այդ քայլի բացասական հետեւանքները, նա ձգտում է արդարանալ եւ պնդել, որ այդպէս ստացուեց եւ ինքը ոչ մի մեղաւորութիւն չունի: Միաժամանակ նոր ղեկավարութիւնը գաղտնի առաջ քաշեց Մեղրիի վարկածը, ըստ որի Ատրպէյճան-Նախիջեւան միասնութիւնը ամրապնդելու համար նա ուզում էր զոհաբերել Մեղրին ու Հայաստանը կտրել արտաքին կապից: Երբ նոր գործարարների մեծամասնութիւնը մերժեց այդ գաղափարը պաշտպանելու առաջարկը, քոչարեանական ղեկավարութիւնը սնանկացրեց նրանց ու դուրս քշեց տնտեսական կեանքից:*

*Այդ տասը տարիների ընթացքում Քոչարեանն ու Սարգսեանը փորձեցին ղեկավարել սովորել, բայց դժբախտաբար չկարողացան, քանի որ ղեկավարելու համար անհրաժեշտ է ղեկավարուել իմանալ: Իրաւ ղեկավարը պէտք է ղեկավարուի սահմանադրութեամբ, օրէնքով, մեծամասնութեան ձայնով: Բայց նորաթուխ ղեկավարութիւնը նախընտրեց ենթարկուել այն սկզբունքին, որ «իմ կամքը, իմ ցանկութիւնը օրէնք է»: Աւելին: Նա որդեգրեց խորհրդային այն փիլիսոփայութիւնը, որ ղեկավարը լինելով բնակչութեան պահանջների լաւագոյն գիտակը, ըմբռնողն ու արտայայտիչը միայն ինքը իրաւասու է նրա փոխարէն որոշելու, մտածելու ու գործելու: Նա որդեգրեց այն դրոյթը, որ ուժն է ղեկավարման հիմքը: Այսպիսով, ղեկավարել սովորելու իր ջանքերում նորաթուխ ղեկավարութիւնը դարձաւ մաֆիավէլիական դպրոցի ներկայացուցիչ՝ խարդաւանքների վարպետ, երկդիմի, ցինիկ եւ պատեհապաշտ: Այդ տարիներին նա սովորեց իր պարապ գրպանը լեցնելով դառնալ տարածաշրջանի ականաւոր միլիոնատէրներից մէկը: Ինչպէս այսօր ակնյայտ է դառնում, այդ տարիների ընթացքում Լեւոն տէր Պետրոսեանը գիտականօրէն վերլուծում էր իր եւ ՀՀՇ-ի քաղաքական գործունէութիւնը եւ բացայայտում իր գործունէութեան լուսաւոր ու չփոթ երեսները, իր թերութիւններն ու սխալները, որպէսզի քաջաբար կարողանայ հպարտանալ դրականով ու անկեղծօրէն ներողութիւն խնդրել իր վրիպումների ու սխալների համար: Այդ տարիներին նա զգալի ներդրում է ունենում նաեւ հայագիտութեան, մանաւանդ Հայկական Կիլիկիայի պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում:*

*Նոր վարչակարգի ղեկավարները գիտակցում էին, որ իրենք զուրկ են գաղափարակիցների ու ժողովրդական զանգուածների հիմքից, քանի որ իշխանութեան տիրապետել էին մարդասպանութեամբ, բռնութեամբ ու կեղծիքներով: Նրանք որոշեցին ստեղծել իրենց իշխանութեան հիմքը: Իրենց շուրջ հաւաքագրեցին բռնատիրական մեթոտների եւ խարդաւանքների ու կեղծիքների մեծ վարպետների, յանցաւոր աշխարհի ներկայացուցիչների, գողական օրէնքներով ղեկավարուող թաղային ուժերի: Միւս կողմից, զանազան կեղծ եղանակներով ստեղծեցին օլիկարխների մի այնպիսի խմբակ, որոնք իրենց գոյութեամբ, նիւթական կարողութեամբ եւ ուժով միշտ պարտական զգան միայն իշխանութեան տէրերին՝ Քոչարեանին ու Սարգսեանին: Նրանց մէջ, անկասկած, չեն մտնում ազնիւ ճանապարհով հարստացածները: Եւ վերջապէս աշխատեցին սիրաշահել երիտասարդների որոշ խաւերի: Այս հիմքի վրայ է բարձրանում այսօր Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը: Այսպէս ստեղծուեց նախագահութեան թեկնածու Սերժ Սարգսեանը:*

*Այս իրադրութեանը քաջ ծանօթ են Հայաստանում գործող բոլոր քաղաքական ուժերը, նախագահութեան յաւակնող բոլոր թեկնածուներն անխտիր: Հետեւաբար, զարմանալի չէ, որ նրանք, առանց խտրութեան, քննադատական կեցուածք որդեգրեցին Քոչարեան-Սարգսեան քաղաքականութեան նկատմամբ: Նրանց մի մասը հենց այդ քննադատական առաքելութեամբ հանդէս էին եկել որպէս քաղաքական ուժ ձեւաւորուելու օրից ու այսօր չեն կարողանում այլ դիրք որդեգրել: Միակ տարբերութիւնն այն է, որ այժմ փորձում են Քոչարեան-Սարգսեան իշխանութեան մէջ նկատել «լուսաւոր» այնպիսի կէտեր, որոնք անցեալում նրանց համար անիմաստ են թուացել: Միւս կողմից, նրանք փորձում են Լեւոն Տէր Պետրոսեանին այնպէս «սեւացնել», որ հակառակ կողմը սպիտակ երեւայ: Իսկ նրանք ովքեր անցեալում դաշնակցել կամ համագործակցել են Քոչարեան-Սարգսեան իշխանութեան հետ այսօր ամէն կերպ ձգտում են իրենց վրայից վերանել նախկին դաշնակցի իրենց վրայ թողած բացասական ազդեցութիւնը,*

*Շար.ը էջ 17*

ABA
A.B.A. INSURANCE SERVICES
Life, Health
Group Health
Disability
Long Term Care
Blue Cross of California
Blue Shield of California
1975-2008
33th ANNIVERSARY
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI- TAD"

## ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

# «SUPER-DUPER FEBRUARY 5» ԵՒ ԵՐԿՈՒ ԿՈՃԱՏ ԶՈՅԳԵՐԸ

***ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ***

*Ամերիկեան նախագահական ընտրութիւնները արդէն կը մտնեն կարեւոր հանգրուանի մը մէջ: Ամիսներու վրայ տեղի ունեցող նախնական (primary) եւ միջ-կուսակցական (caucus) նկատուած ընտրութիւններէն ետք, որոնց ընթացքին դեմոկրատ եւ հանրապետական կուսակցութեանց նախագահական թեկնածուներու ցանկերը արդէն հասած են նուազումի, բազմութիւններու հրաժարումովը կամ հրապարակէն քաշուելովը, բա-*



Ճօն Մքքէյն

*տարար ձայն չապահովելով, ուրեմն այս բոլորէն ետք, ընտրութեանց կը շարունակեն մնալ այս յօդուածի ակնարկուած երկու կոճատ զոյգերը – դեմոկրատներու պարագային, Հիլըրի Քլինթըն, նախկին նախագահին կինը, եւ Պարաք Օպաման, սեւազգի երիտասարդ սենաթըրը: Իսկ հանրապետականներու մօտ, թէեւ կայ 3րդ եւ 4րդ մըն ալ, յանձին պատուելի Հուքապիի, եւ ծերակուտական Ռոն Փօլի, սակայն գլխաւոր թեկնածուները կը հանդիսանան սենաթըր Ճօն Մքքէյն եւ Միշիկընի կառավարիչ Միթ Ռոմնի:*

*Այս երկու զոյգերը նկարագրեցինք իբրեւ «կոճատ զոյգեր» (the odd couples) նկատի ունենալով իրենց իւրայատուկ յատկանիշերը: Անոնք թէեւ կը պատկանին նոյն կուսակցութեան, Հիլըրի Քլինթըն եւ Պարաք Օպամա – դեմոկրատ, իսկ Ճոն Մքքէյն եւ Միթ Ռոմնի՝ հանրապետական, բաւական հեռու են իրարմէ իրենց սկզբունքներուն եւ հետեւած եւ ընտրուելու պարագային ալ, հետեւելիք քաղաքականութեան:*

*Ինչ որ ալ ըլլան, սակայն, իրենց որդեգրած ներկայի սկզբունքային հարցերը, անոնք կը վերաբերին.*

*– Երկրի ազգային ապահովութեան,*

*– տնտեսական դժուարին կացութեան:*

*Այս երկու հարցերու նկատմամբ է որ կը տարուին հրապարակային վէճերն ու քննարկումները: Այս երկուքէն դուրս անշուշտ կան ուրիշ հարցեր ալ, ինչպիսիք են.*

*– Երկրի առողջապահական դրութեան վերանայումը,*

*– աղքատութեան վերացումը,*

*– Ամերիկայի Միացեալ Նահանգներու կորսնցուցած դերը միջազգային գետնի վրայ,*

*– Ընդհանուր կերպով անցեալի եւ ապագայի վերագրումները, թեկնածուներու հասցէին, եւ*

*– Վերջապէս ցեղային, (Պարաք Օպամա կը պատկանի աֆրօ-ամերիկեան, այսինքն սեւ ցեղի) իգական-արական սեռի (Հիլըրի կը պատկանի իգական սեռի) հարցեր:*

*Այս հիմնական հարցերու կողքին կայ նաեւ Հիլըրիի պարագային, իր ամուսնոյն, նախկին նախագահ Պիլ Գլինթընը, մասնակցութիւնն ու երբեմն անփափկանկատ միջամտութիւնները ընտրական գործողութեանց վրայ, յատկապէս Պ. Օպամայի պարագային: Այս բոլորի կողքին կամ ետին, կը գտնուին ընտրութեան իջած այս երկու կուսակցութեանց սկզբունքային, հիմնական կեցուածքները որոնց լոյսին տակ կը տարուին ընտրական աշխատանքները: Հանրապետական կուսակցութեան պարագային, վէճ տեղի կ՚ունենայ թէ ո՞վ կը հանդիսանայ զտարիւն պահպանողականը, (conservative), որուն վերջերս կցուեցաւ Ռէկընեան (նախկին նախագահ Ռոնըլտ Ռէկըն) զտարիւն պահպանողական մտածողութիւնը: Օրինակի համար, շատ մը զտարիւն եւ ծայրայեղական պահպանողականներու համար, ինչպիսիք են ռատիոյի մեկնաբաններ եւ «TV»ի կայաններ, (Fox News) կուսակցութեան հաւանական թեկնածու, Ճօն Մքքէյն չի նկատուիր իսկական պահպանողական մը, տրուած ըլլալով իր կեցուածքները քաղաքական, տնտեսական եւ ընկերային որոշ հարցերու նկատմամբ: Մքքէյն շրջան մը առաջ քուէարկած է գաղթականներուներում (amnesty) շնորհելու մասին, հարկային դրութեան նկատմամբ երկդիմի դիրք ունեցած, վիժումներու մասին յստակ դիրք չէ բռնած (flip-flop) եւ նման նկատումներ ծայրայեղ պահպանողականները զինք անընդունելի կը նկատեն: Միւս կողմէ սակայն Մքքէյն ինքզինք կը ներկայացնէ իբրեւ «իրաւ պահպանողական» (true conservativ), քանի որ համաձայն եղած է երկրի անվտանգութեան համար մղուող պատերազմներուն – Իրաք, Աֆղանիստան, Իսլամֆաշիստ ճակատ-եւ կը խորհի թէ Պուշի նման, այս ճակատներէն ներս Ամերիկա անպայման յաղթանակ պէտք է տանի:*

*Իր հակառակորդները, յատկապէս Ռոմնին, Հիւքապին եւ Փօլը, կը մտածեն որ իրենք են բուն պահպանողականները, եւ կը քննադատեն Մքքէյնը իր ոստոստուն կեցուածներուն համար:*

*Փետրուար 5ը ընտրական այս ընթացքին մէջ կը նկարագրուի «Super-Duper», քանի որ մինչ միւս ընտրութիւնները նախնական եւ միջ-կուսակցական (caucus) կը նկատուէին եւ կը սահմանուէին մէկ նահանգի, Փետրուար 5-ի ընտրութեան կը մասնակցին շուրջ 22-23 նահանգներ, Գալիֆորնիայէն մինչեւ Նիւ Եորք եւ բազմաթիւ ուրիշներ:*

***

*Ի՞նչ է կացութիւնը դեմոկրատ կուսակցութեան պարագային:*

*Եօթը-ութը թեկնածուներէն, սկզբնական շրջանին, ժամանակի ընթացքին 3-ի իջան, Հիլըրի, Օպամա եւ Էտուըրտզ: Այս վերջինն ալ իր իսկ նահանգի մէջ 3րդ տեղը գրաւելէ ետք, հրապարակէն քաշուեցաւ, ընտրական թատերաբեմը թողելով Հիլըրիին եւ Օպամային:*



Պարաք Օպամա եւ Հիլըրի Քլինթըն

*Ներկայիս կուսակցութեան դրօշակակիրները կը հանդիսանան այս երկուքը եւ պայմաններու բերումով, կը նկատուին պատմական դէմքեր, մէկը սեւ ցեղի եւ միւսը կին սեռի պատկանող: Հիլըրիի չար բախտէն, Պարաք Օպաման շատ խելացի, շատ աշխոյժ, շատ կազմակերպուած, եւ շատ հարուստ (մէկ Յունուար ամսուայ մէջ 32 միլիոն տոլար հաւաքած) մրցակից մըն է: Մանաւանդ դեմոկրատ կուսակցութեան շատ մը յայտնի դէմքեր, ինչպէս Թետ Քենետին, նախագահ Քենետիի աղջիկը, Գարոլայն, Գալիֆորնիայի Շուարցենեկըրի կինը եւ սեւ համայնքէն, Օփրա Ուինֆրի եւ ուրիշներ նեցուկ կը կանգնին: Յատկապէս մեծ յաջողութիւն կը գտնէ Օպաման երիտասարդներու մօտ, որոնց կը խօսի իտէալիզմով, երկիրը միացնելու կարգախօսով, փոփոխութեան անհրաժեշտութեան լոզունգով եւ մանաւանդ իրաքեան պատերազմին վերջ տալու յստակ դիրքորոշումով: Հիլըրի Գլինթըն ինք եւս վերջերս սկսաւ խօսիլ փոփոխութեան մասին, Պուշի իշխանութեան վերջ դնելու մասին, փորձառութեան մասին եւ սակայն Օպաման կը յաջողի զինք գերադասել որոշ շրջաններու մէջ: Հոս եւս Փետրուար 5-ի ընտրութիւնները կրնան որոշիչ ըլլալ, հակառակ որ Հիլըրի աւելի տարածուն եւ ճանաչողութիւն ունի ազգային գետնի վրայ:*

*Նախագահական այս ընտրութեանց առիթով, վստահ կարելի է ըսել որ քուէախոյզ օրկանները (polls) լման ձախողեցան իրենց նախատեսութեանց մէջ, եւ թեկնածուները իրենց յաջողութիւնը կամ ձախողութիւնը կը պարտին միայն ու միայն ընտրողներու քուէարկութեան: Ինչ որ «credit» մը կը հանդիսանայ ամերիկեան ժողովրդավարութեան...*

*Սպասենք Փետրուար 5-ի ընտրութիւններուն:*



## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ԴԻԼԻՋԱՆ ՍԵՆԵԿԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐԳԱՇԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ

*ԱՆԳԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ-ՄՈՒՐԱՏԵԱՆ*

*2008, Կիրակի, Յունուար 20-ին, կէսօրէ ետք ժամը երեքին, Լարք Երաժշտական Ընկերակցութեան Դիլիջան սենեկային երաժշտութեան համերգաշարի բարձրարուեստ եարժիշտները, համարձակ քայլերով մտան Colburn Երաժշտական դպրոցի Zipper սրահի բեմէն, ներկայացնելու «Դիլիջան» համերգաշարի երրորդ տարուան չորրորդ համերգը՝ որ կը բաղկանար քիչ մը անծանօթ, արդի բարդ բայց չքեղ ստեղծագործութիւններով:*

*Ութ արուեստագէտներ, Մովսէս Պօղոսեանի, Steward Canin-ի եւ Արմէն Անասեանի առաջնորդութեամբ, ներկայացուցին հրապոյրներով լեցուն, ժամանակակից երաժշտութեան գործերու փունջ մը, եւ ինչպէս «Դիլիջան»-ի հերթական համերգներուն, այս անգամ ալ նուաճեցին այս դժուարին գործերուն ներկայացուցած մարտահրաւէրը, ու փայլեցան նուագելով ներշնչուած, խորունկ նուիրուածութեամբ, ցուցաբերելով բարձր թեքնիք, նուրբ ճաշակ, զգայուն մեկնաբանութիւն, եւ հրաշալի փոխըմբռնում:*



*Շոստակովիչ Կոստանդին Օրբելեան եւ Ղազարոս Սարեան*

*«Դիլիջան»-ը արժանի է գովեստի որ գաղութին կը ներկայացնէ այսպիսի որակեալ, բացառիկ յատկութիւններով օժտուած, միջազգային բեմերու արժանացած երաժիշտներու խումբ մը, որոնք տիրացած են երաժշտական արհեստավարժութեան (virtuosity) բոլոր հնարանքներուն, այլազան ոճերու թափանցման, ըմբռնումին եւ մեկնաբանելու հմտութեան: Շնորհակալ ըլլալու ենք Դիլիջանի ղեկավարութեան այսպիսի վայելքին եւ երաժշտական դաստիարակութեան համար: Կը գիտակցինք եղած մեծ զոհողութիւններուն եւ ծախսերուն: Արժանի են ամէն քաջալերանքի:*

*Հաճելի անակնկալ էր տեսնել, նոր անդամ Արմէն Անասեանի մուտքը Դիլիջանի կազմէն ներս: Դեռ երէկ պատանի (կը յիշեմ) եւ այսօր արդէն հասուն երաժիշտ, որ իր արժանի տեղը կը գրաւէ բարձրակարգ նուագողներու շարքին մէջ: Ինծի համար շատ խրախուսիչ էր երեւոյթը:*

*Լսեցինք Alfred Schnitke-ի (1914-1998) "Praeludium" բրելիւտ□ նախանուագը երկու ջութակի համար, նուիրուած Shostakovich-ի յիշատակին: Ինքնատիպ, վերացական մտածողութեամբ գործ է: Հեղինակը կարելի է բնորոշել որպէս բազմառճ երաժիշտ որ այս գործին մէջ կը միաձուլէ շլացուցիչ այլազանութիւններ: Երբեմն Մոցարթեան հնչողութեան կողքին, յանկարծ ժամանակակից հնչողութիւն կը լսես՝ վարպետօրէն շաղկապուած: Կարծես իր մռայլ, անստոյգ հոգեվիճակի պատկերացումն է: Մովսէս Պօղոսեան շատ զգայուն եւ զուսպ դրսեւորեց գործի այլազան տրամադրութիւնները, Արմէն Անասեանի զուգորդութեամբ:*

*Յայտագրի միւս գործերն էին Լարային Քառեակները, Ղազարոս Սարեանի (1968), Կոստանդին Օրբէլեանի (1963), Շոստակովիչի՝ Թիւ 1 (1938), եւ Թիւ 8 (1960), նաեւ Prelude & Scherzo ութեակ-Octet-ը (1924-25):*

*Կոստանդին Օրբելեանի (ծ. 1928) Լարային Քառեակը (D minor), շատերուն համար անակնկալ յայտնութիւն մըն էր: Ծանօթ ըլլալուս, այս անգամ լիովին ըմբոշխնեցի զայն: Գրուած է 1963-ին (հազիւ 35 տարեկան), եւ ձօնուած՝ «Կոմիտաս»-ի անուան նշանաւոր Քառեակին, որոնք եղած են գործի առաջին լաւագոյն կատարողները:*

*Շար.ը էջ 19*

# Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

*Իւրայատուկ, արտասովոր եւ հետաքրքրական տօնակատարութիւն մը տեղի ունեցաւ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի «Գալայճեան» սրահին մէջ, Հինգշաբթի, Յունուար 31, 2008, երեկոյեան ժամը 6:00էն սկսեալ: Տօնակատարութիւնը կը վայելէր նախագահութիւնը Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, իսկ հովանաւորներն էին հետեւեալները. Լոս Անճելոսի Ս. Յակոբ եկեղեցին, Գոսթա Մեսայի Ս. Աստուածածին եկեղեցին, Իսթ Լոս Անճելոսի Ս. Սարգիս եկեղեցին եւ Երուսաղէմի Ս. Թարգմանչաց վարժարանի ԱՄՆ-ի Սանուց Միութիւնը:*

*Սոյն թղթակցութեան սկզբնաւորութեան գործածուած ածականները չունին ոչ քննադատական եւ ոչ ալ գովասանական հանգամանք, այլ կը վերաբերին ձեռնարկի բնոյթին: Նախաձեռնող միաւորները ուզած էին երթալ սովորական Վարդանանց տօնակատարութենէն անդին, անոր միացնելով «Տէրունական Աղօթքի ուղղափառ մեկնութիւն» գրքոյկի հրատարակութիւնը: Նախընտրելի պիտի ըլլար, հաւանօրէն, Վարդանանց Տօնը առանձին նշել, տրուած ըլլալով անոր նշանակութիւնը հայ ժողովուրդի կեանքի պատմական հոլովոյթի ընթացքին եւ գրքոյկի շնորհանդէսը կատարել այլ առիթով: Ամէն պարագայի, մենք ներկայ եղանք ձեռնարկին իր զոյգ բովանդակութեամբ եւ կ'ուզենք արժեւորել իբրեւ այդպիսին: Ինչ կը վերաբերի գրքոյկին, 78 էջնոց, մաքուր տպագրութեամբ գրքոյկ մըն է, այդ երեկոյ ժողովուրդին ձրիօրէն բաժնուած, որուն էջադրողը, կողքի ձեւաւորում կատարողը եւ հրատարակիչներէն մէկը կը հանդիսանայ Նահապետ Մելքոնեան, շուրջ 6000 օրինակ տպուած է, եւ մօտօրէն պիտի թարգմանուի անգլերէն, ֆրանսերէն եւ ռուսերէն լեզուներու: Ան արդէն ղրկուած է բազմաթիւ գրադարաններու եւ հրատարակչական տուներու:*



*Կ'անցնինք տօնակատարութեան նկարագրութեան: Հետաքրքրական գտանք որ հովանաւորները կարեւոր մասնակցութիւն ունէին յայտագրէն ներս: Այսպէս Ս. Յակոբ եկեղեցին՝ պատարագիչն էր Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեան, իր տպաւորիչ ձայնով եւ պաշտօնի կատարեալ գիտակցութեամբ: Կը խորհիմ որ գեղարուեստական յայտագրի մաս կազմող, շնորհալի երգչուհի Մաննիկ Մանուկեան, որ յաջողութեամբ կատարեց Ժ. Յակոբեանի «Հայ Եկեղեցին» երգը, նաեւ մաս կը կազմէ Ս. Յակոբ եկեղեցւոյ դպրաց դասին: Ս. Սարգիս եկեղեցին ներկայացուած էր իր հովիւ Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Մատարեանով, որուն արժանիքներու վրայ, այդ օր, վերահաստ եղանք խմբավարի շնորհքին, թէ պատարագի ընթացքին, եւ թէ տօնակատարութեան ընթացքին, «Ղեւոնդեանց» ներկայացուած եկեղեցական երգչախումբի կատարողութեամբ: Իսկ Սանուց Միութիւնը, իր կորովի ղեկավար Նահապետ Մելքոնեանի ներկայութեամբ, կ'իմանմանք թէ այդ տօնակատարութեան մղիչ ուժը կը հանդիսանար:*

*Ինչ կը վերաբերի յայտագրին, անգամ մը եւս ականատես եղանք Բարսեղ Գարթալեանի հեզասահ եւ փորձառու հանդիսավարութեան, իւրաքանչիւր մասնակցի ներկայացման ընթացքին, թէեւ ինք կրնայ նուազ գովասանք մատուցել:*

*Համակրելի եւ զգայուն Սեդա Հայրիեան ապրումով արտասանեց Թորգոմ Արք. Գուշակեանի «Աղօթք՝ վասն հայ եկեղեցւոյ» քերթողու-*

*Շար.ը էջ 16*




# Massis Weekly

Volume 28, No. 03 Saturday, FEBRUARY 9, 2008


## Government Loyal Thugs Hurl Stones At Ter-Petrosian Supporters During Artashat Rally

ARTASHAT -- A group of government loyalists hurled stones at and scuffled with supporters of Levon Ter-Petrosian on Wednesday in an attempt to disrupt the former president's rally in Artashat, an Armenian town notorious for election-related violence against opposition activists.

The incident, which heightened tension in the run-up to Armenia's presidential election, was condemned by Ter-Petrosian as a government "provocation" aimed at derailing his election campaign. Ter-Petrosian and his allies specifically laid the blame on Hovik Abrahamian, Prime Minister Serzh Sarkisian's influential deputy and campaign manager who holds sway in Artashat and surrounding villages.

The normally reserved ex-president struggled to keep his cool as a dozen thugs tried to pick a fight with his activists after the latter led a female heckler away from a crowd of more than 1,000 people attending the rally. The youths went on to pelt rally organizers with pieces of ice and stones, one of them landing near Ter-Petrosian. Uniformed police officers, present at Ter-Petrosian's gatherings in neighboring villages, were not on hand to stop the violence.

"Here is Serzh Sarkisian, here is Robert Kocharian, here is Hovik Abrahamian," Ter-Petrosian said as the ugly scene unfolded. "They are hooligans, thieves, gangsters who have plundered our country and want to infringe on the will of our people by means of such hooligans."

"The masters of these hooligans, thieves, gangsters, and rats will flee Armenia on February 19," he added.

The incident was still not over as the thugs attacked and beat the deputy chief of Ter-Petrosian's security service who guarded the opposition candidate's limousine parked nearby. "They were throwing stones at the people from here," Lieutenant-Colonel Sarkis Hovannisian told RFE/RL, pressing a handkerchief against his bruised cheek. "As soon as I tried to stop them they attacked me. There were seven or eight of them."

Hovannisian, accompanied by Ter-Petrosian and other opposition leaders, visited the local police headquarters and gave testimony about the assault after the troubled rally. He was taken to hospital later in the day.

As the situation escalated amid "Levon! Levon!" chants from the crowd, Alik Sargsian, the governor of the southern Ararat region, of which Artashat is the capital, emerged from his office overlooking the venue of the rally. "Mr. Governor, where are your police? Mr. Governor, you are not a governor, you are a hooligan," Ter-Petrosian shouted, demanding that Sargsian "rein in" the thugs and address the crowd.

Sargsian, who is a former police officer, insisted that the violence was not provoked by the local authorities. "The entire region knows that the governor is not a hooligan, and the political force that will throw mud at me will have a serious problem and will suffer losses, moral losses," he said. "I have not seen any scuffles here."

"You should have made sure that uniformed police had stood around the people here and protected all of us," Ter-Petrosian retorted angrily. "You failed to do that."

"I will bear responsibility for any





**Pro-government Thugs disrupting Ter-Petrosian rally**

incident and am going to watch things from here. I know everyone here by face," responded the governor.

Artashat and wine-growing villages around it are widely seen as the de facto fiefdom of Abrahamian and his extended family, who own many local businesses as well as large swathes of agricultural land. The town located about 30 kilometers south of Yerevan has already been the scene of pre-election violent incidents in the past. The Armenian opposition blamed those incidents, including the stabbing in 2003 of the campaign manager of an opposition presidential candidate, on Abrahamian.

Abrahamian was on Wednesday

**Continued on page 4**

## U.S. Administration Proposes $24 Million Aid For Armenia

WASHINGTON, DC -- The Bush Administration's Fiscal Year (FY) 2009 Budget calls for $24 million in economic assistance to Armenia, the lowest request to date made by the Administration. The figure represents $34 million less than what Congress approved last year, and $11 million less than the Administration's request in FY 2008.

As in years past, the Budget proposal calls for asymmetrical military assistance to Azerbaijan and Armenia. The Administration's spending plan recommends $3 million in Foreign Military Financing (FMF) to both countries, but Azerbaijan is slated to receive $600,000 more than Armenia ($300,000) in Military Education and Training (IMET) assistance.

In a budget that calls for over $39 billion in the International Affairs account, $24 million for Armenia is woefully inadequate.

"Given Azerbaijan's increased war rhetoric, I have strong concerns with giving any military aid to Azerbaijan, and we definitely should not give them more than we're providing Armenia," stated Armenian Caucus Co-Chair Joe Knollenberg (R-MI).

"I will work with my colleagues to ensure that Armenia has the resources needed to continue to strengthen its democracy as well as ensure its security," continued Knollenberg.

The announcement is the first step in a lengthy budget process. The next step is for the House and Senate to review the Administration's request through committee hearings.

## Arthur Baghdasarian Claims 'Death Threats' In Yerevan Rally

YEREVAN -- Former parliament speaker Artur Baghdasarian claimed to have received death threats from the Armenian authorities and expressed readiness to team up with another opposition candidate, Levon Ter-Petrosian, as he rallied thousands of supporters in Yerevan on Sunday.

"A murder threat was addressed to me last night," Baghdasarian said in a speech in the city's Liberty Square. "I want to say that if something happens to me, the current authorities will be directly responsible for that."

"Armenia's political elite was decapitated on October 27 [1999.] Now they want to terrorize me, a candidate for the president of Armenia. It is impossible to terrorize me. I am ready to sacrifice my life," he added.

Baghdasarian, who is one of Serzh Sarkisian's main opposition challengers, allegedly received the threats just hours after a Saturday news conference in which he pointedly declined to rule out



**Artur Baghdasarian**

the possibility of withdrawing his candidacy in Ter-Petrosian's favor. The former Armenian president claimed on Friday that Baghdasarian and another top opposition leader, Raffi Hovannisian, have agreed to "join" his bid to oust the country's leadership.

Speaking at the Yerevan rally, Baghdasarian confirmed that he is "in very active political negotiations" with Ter-Petrosian and Hovannisian but stopped short of promising to drop out of the presidential race.

## Support Grows For Hrant Dink Resolution

WASHINGTON, DC -- A congressional resolution condemning the murder of Turkish-Armenian journalist Hrant Dink (H. Res. 102) continues to gain strength, as five House Members added their support to the measure in recent days.

Within the course of a week, Congressmen Jerry F. Costello (D-IL), Stephen Lynch (D-MA), Edward Markey (D-MA), Ed Royce (R-CA), and Paul Ryan (R-WI) joined the growing list of cosponsors, bringing the total number of supporters to 49. A human rights defender, Dink was prosecuted under Article 301 of the Turkish penal code for his writings on the Armenian Genocide. He was murdered on January 19, 2007 in broad daylight outside of his office at Agos newspaper in Istanbul, Turkey.

To mark the one-year anniversary of his death, Representatives Joe Baca (D-CA), Michael Capuano (D-MA), Joseph Crowley (D-NY), Scott Garrett (R-NJ), Zoe Lofgren (D-CA), Frank Pallone, Jr. (D-NJ), Ed Royce (R-CA), and Adam Schiff (D-CA) made statements before Congress expressing their remorse and reiterating the importance of acknowledging the truth of the Armenian Genocide.

"Hrant Dink was a man who called for tolerance, peaceful dialogue, and greater civil rights for all Turkish citizens. He was a fierce defender of freedom and believed all people have equal rights under the law," said Crowley, who introduced H. Res. 102 shortly after Dink's murder. "I hope my colleagues will join me in honoring the memory of Hrant Dink and continue to urge the repeal of Article 301."

Armenian Assembly Executive Director Bryan Ardouny stated that . "Article 301 is part and parcel with Turkey's ongoing campaign to deny the historical truth of the Armenian Genocide. We will continue to push for passage of H. Res. 102."

# Abdullah Gül And His Teller Of Tales Emin Kivircik

**By Toros Sarian**

As Abdullah Gül, the Turkish President was visiting the USA at the beginning of January 2008 he found time to meet representatives of Jewish Associations. As part of the strategy of ensuring that the US Congress, as well as its Committees, does not recognize the Armenian Genocide, the Turkish government places great value on the continuing support of the Jewish Associations. However, recently the willingness of the Associations to support this Turkish strategy has declined. Doubts are being raised at the morality of their uncritical support of the Turkish "Denial Politic" Especially; the ADL has annoyed the Turkish regime with their commentaries concerning the mass murder of Armenians. The present Foreign Minister and co-founder of the ruling Party AKP, Ali Babacan, hinted at using the Jewish Community as hostage as he said "If Congress recognizes the Armenian Genocide the Government could not guarantee the safety of the Jewish Community in Turkey."

This willingness of many American Jews to accept the Turkish position has been one of the reasons for the repeated failure to secure Congressional recognition of the Armenian Genocide. However, this support is not just legitimized because Turkey is regarded as a close military and political ally for the USA and Israel in the Middle East. There are other aspects which are persistently stressed by the Turkish regime to win the support of the Jewish lobby. They claim that not only the Ottoman Empire but also the new Republic had saved Jews from persecution and annihilation. It is clear, judging by actions that many Jews believe in this very Turkish fairy tale, in which Turkish diplomats supported the Jews "above the call of duty" and where now the Jewish associations feel obliged to show gratitude and solidarity with Turkey.

During his State visit to the USA, Abdullah Gül had as one of his companions, and not by chance, a man who has proven to be an especially refined teller of tales. He is Emin Kivircik the author of a book called The Ambassador which was published in Istanbul early last year. Kivircik tells of the apparent "heroics" of his grandfather Behic Erkin who was the Turkish Ambassador in France between 1939 and 1943. The book became a best-seller in Turkey and there are even plans for it to be filmed. For the Turkish propaganda department this book is of rare value as it claims that Turkish diplomats had saved up to "20,000 Jewish lives" during the Second World War.

They had arranged with the Nazis the release of Turkish Jews living in Nazi occupied Europe, especial in France and their return to Turkey. Author Kivircik accompanied the Turkish President in the USA so as to relate to the local Jewish associations the Turkish fairy tale of saving "from the clutches of the Nazis" 20,000 Jewish lives. That a few Turkish Jews were saved through the intervention of Turkish diplomats cannot be denied. But at the same time thousands were robbed of their Turkish citizenship, thereby making possible their deportation to the concentration camps and certain death.



**Emin Kivircik's book cover showing his grandfather Behic Erkin's picture**

In a recent article published in Turkey, the historian Corinna Guttstadt proved that Emin Kivircik´s claims are pure fiction. Her research shows that the Turkish government had already begun in the 1920´s and 30´s to squeeze out Jews from economic and socially high standing positions. Guttstadt wrote in her article that from the end of the 20´s the Turkish state had already created an array of legal provisions and conditions under which minorities e.g. Jews Armenians and Greeks could lose their Turkish citizenship. This was of importance as holding a Turkish passport gave some protection to the Jews. In her article, Guttstadt provided evidence which proves that the number of Turkish Jews who lost their citizenship dramatically increased parallel to the Holocaust. This cannot be mere coincidence and shows that the Turkish government was not the saviour of the Jews in Nazi occupied Europe. Moreover, Guttstadt too, argues for an open and honest reappraisal of Turkish policy regarding minorities and the real Turkish policy regarding Jews and the Holocaust must at last take place. A big step in this direction would be the opening of the Foreign Ministry archives to independent researchers.

This claimed Jew-friendly policy of the Turkish Republic is one of the many tales produced and perpetuated by official Turkish institutions. Researchers, like Stanford Shaw, have played active roles in spreading the view of Turkey as protector of the Jews. In reality, the Jews were shortly after the grounding of the Republic victims of the radical Turkification policies and that despite leading Jews having supported the National movement of Mustafa Kemal Pascha. For example, at the negotiations in Lausanne, a leading representative of Turkish Jews, Chaim Nahum, was an advisor to the Turkish delegation. But, no sooner had the Turkish nationalists reached their goal, appeared the true face of Turkish Jewish policy . In the Nationalist press anti-Jewish sentiments began to be spread and deep rooted prejudices reinforced. Attacks on and boycotts of Jewish businesses took place. Jewish workers and civil servants lost their positions in the wake of the Turkeyfication of government offices and companies. The area worst affected was East Thrace where the Jews were confronted with life threatening situations and fled the area in droves. After the Armenian Genocide

**Continued on page 4**

# LA Lawyer Battles Giants For Armenian Genocide Heirs

**By Haro Chakmakjian**
**AFP**

Lawyer Vartkes Yeghiayan has been waging a long and hard battle against US and French giants for million-dollar claims from Armenians dating back to the waning days of the Ottoman Empire. Thousands of unpaid insurance policy claims have flowed in from the Armenian diaspora across the globe to Yeghiayan's small legal firm in Glendale, a Los Angeles suburb with the largest concentration of Armenians in the US.

In his two-decade crusade, Yeghiayan and a small team of lawyers have won $37.5 million for clients after settling two cases with New York Life in 2004 and later in 2005 with French insurers AXA in California courts. But the silver-haired, 71-year-old lawyer is pragmatic about his quest to seek a financial settlement for the heirs of Armenian account-holders, who lost their lives or assets in the mayhem of World War I and before the birth of modern Turkey in 1923.

Armenians say at least 1.5 million were killed from 1915 to 1917 in what they call a campaign of deportation and murder by the Ottoman Empire. The claims are denied by Turkey, which says hundreds of thousands died on both



sides after Armenians took up arms for independence. Several of Yeghiayan's own family members perished, including a grandfather whose name, however, does not appear on his lists of life insurance policies which were never honored.

"These are not genocide lawsuits. What we are talking about is companies making an immoral profit," said the former Peace Corps assistant director. "It's not for the money. It's the concept that your grandfather felt there was a danger and wanted future protection for his family. As one of the beneficiaries said, 'That's a sentiment I will always cherish.'"

The heirs of 9,500 Ottoman Armenians who had bought policies are eligible to benefit from the New York Life and AXA deals, which also have to cover more than seven million dollars in legal expenses and fees. Any unclaimed funds have been earmarked for Armenian charities and the church.

Yeghiayan's odyssey started back in 1986 when he was reading the memoirs of the US ambassador to Ottoman Turkey, Henry Morgenthau. In a meeting with then interior minister Mehmed Talaat Pasha, Morgenthau was asked for a list of Armenians who had taken out insurance policies with American companies. The Turkish minister argued the Ottoman government was the rightful beneficiary since there were no heirs. Morgenthau, who had reported back to Washington on the horrors which his consuls were witnessing, stormed out of the meeting.

For Yeghiayan, that passage was a moment of revelation. "That's when I jumped out of bed," says Yeghiayan.

With the enthusiasm of a detective, he launched a massive paper-trail hunt which took him from the State Department to the National Archives and finally into the insurers' annual reports and aging archives. Taking gambles, such as turning down an initial settlement offer, he courted the help of influential Armenians in California's political hierarchy to help clear legal hurdles.

In the November 2005 AXA settlement, the largest number of some 9,000 claims came from Armenia, where a poster campaign gave details about the case and sought claimants, followed by the United States, and France. As in the earlier New York Life case, for which the funds have already been disbursed, claimants from far apart as Brazil, Bulgaria and Lebanon were also represented.

Under the terms of the settlement, New York Life denied any wrongdoing, but "concluded that it is in its best interests to settle this action ... in order to avoid the expense, inconvenience and interference with its ongoing business operations that would result from further litigation." But treasure-hunters will be disappointed — the average award per policy amounts to a modest $6,000-7,000 in the so-called Class Action cases.

Undeterred by recent setbacks in court, Yeghiayan now has his sights set on Deutsche Bank and Dresdner Bank of Germany. Deutsche Bank told AFP they "do not comment on pending legal procedures," but both banks, through their lawyers, have denied any liability, arguing the suit amounted to "unconstitutional" meddling in Germany's foreign affairs.

Despite emergency heart surgery in 1999, Yeghiayan has no plans to step down. "I realize the other side may have 3,000 lawyers and that Vartkes will not be around forever, but what am I going to do if I retire?"

From the Book Shelf:

# "Le Génocide Des Arméniens"

**By Raymond H. [Haroutiun, S.K.] Kevorkian ( Odile Jacob Publications, Sagin-Canale Printer), Paris, 1008 pages (The text is 990 pages, plus Index of 12 pages and Table of contents 5 pages, September, 2006. A Preface of four pages by the historian Gerard Chaliand)**

**An Appreciation by**
**Sarkis Y. Karayan, M.D.**




This recently published book, in French, by Raymond Kevorkian may be considered a monumental work – at least by a layman like me- by any definition of the word "monumental". As the title indicates, it is of course about the genocide perpetrated on Armenians by the Ottoman government during the First World War. G. Chaliand, in the preface, summarizes tersely, in one line the content of this one thousand pages book as follows, "At the end of First World War, the Armenian population of Asia Minor disappeared". This simple appearing statement has stuck in my mind since I read it three months ago.

As it is well known by persons interested in the Armenian genocide, no scholarly work in any language devoted to the first genocide in history was published until about forty years after this ghastly crime was committed, namely starting 1955. Because of this lack of interest by the Armenian survivors of the genocide, the generation that followed the survivors were not taught in most Armenian schools, about the great calamity sustained by their parents. The children of the survivors were taught the national history of Jews, and the geography of Judea and Samaria, much more than Armenian history and the geography of our Fatherland of 5,000 years that was stolen from us only a few decades ago. This is because we were supposed to read as Christians, the Old and the New Testaments, if we wanted to remain Armenians. How ironical !!!

It is usually stated that the Genocide of Armenians was the first genocide of the twentieth century. I think this statement should be modified as follows, " In all human history, no planned genocide is recorded, as far as we know. So the genocide by the Ottoman government is the first planned genocide not only during the twentieth century, but in all human history". Races, ethnic groups and tribes have disappeared from the surface of the earth due to epidemics, religious intolerance, malnutrition and starvation or natural calamities, but not due to planned genocide.

The author of the book under consideration is Raymond Kevorkian, an academic historian in Paris, France. He teaches at "Institut Francais de Géopolitique" at Paris University, and is the Director of Armenian General Benevolent Union's Boghos Nubar Library in Paris. He is the author of several books devoted to modern history of Armenians, to mention a few:

(a) He is the co-author with Paul Paboudjian "Les Arméniens dans L'Empire Ottoman a la Veille du Génocide" [Armenians in the Ottoman Empire on the eve of the Genocide], (Paris,1992). This profusely illustrated book, mostly by post cards issued before 1914, has been highly praised both by scholars and laymen.

(b) He is the editor and co-author, again with Paboudjian, "La Cilicie: Les Massacres D'Adana au Mandat Francais 1909-1921" (Paris 1999, published as a special issue of 384 pages , by the "Revue D'Histoire Arménienne Contemporain". Kevorkian is the director of this scholarly magazine.

(c) "Lumière de l'Arménie Chrétienne" (Paris 2006), 160 pages. A history of Armenians and their culture through the ages.

(d ) "Les Arméniens 1917-1939- La Quête d'un Refuge [In search of a refuge]. Post-genocide diasporizaton of Armenians . The trials and tribulations of the survivors of the genocide in the countries of Middle East , Europe and other countries.

As of the 1950s, some books, written in French, devoted to the genocide started to appear, as follows:

(a) Naslian, Jean. "Les Memoirs de Mgr. Naslian, Eveque de Trebizonde, sur les Evenements Politico-Religieux en Proche-Orient de 1914 a 1928" 2 vols. (Vienna, Mkhitarist Press, 1955).

(b) Monseigneur Jean Mecerian, "Le Génocide Du People Arménien: Le Sort de la Population Arménienne de L'Empire Ottoman" Beirut, 1965.

(c) Moussa Prince, " La Génocide Oublié- Arménocide" Beirut, 1975. First part of this book appeared in 1969, again in Beirut. under the title "L'Arménocide- Un Génocide Impuni". This was translated into Armenian by Dikran Wosgouni, with the title, "Anbadij Tseghasbanoutiun Mç" (Hamaskain publication,Beirut, 1969. Moussa Prince (1925-1998) was one of the top lawyers and popular Christian leader in Lebanon.

(d) Yves Ternon, " Les Arméniens:histoire d'un génocide" (Paris 1977). Reprinted 2002 and 2006.

(e) Gerard Chaliand, "Le Génocide des Arméniens" (Paris, 1980) Reprinted in 2006 "1915, Le Génocide des Arméniens".

The scholarly works in English language on the Armenian genocide has appeared since 1960, authored by Vahakn Dadrian, Robert Melson. Leo Kuper. Israel Charny , Richard Hovannisian.

Kevorkian's present volume " Le Génocide des Arménien" fulfills the need for a comprehensive , detailed work on the genocide in the French language. I say this, without underestimating the value of the works written in French, as mentioned above,

There are still many francophone countries , specially in Northern Africa, as Niger, Mali, Senegal, Chad, Gabon Togo and Ivory Coast where the official language is French, and the education of the average citizen based on the French system. In some other countries as. Luxembourg, Belgium, Mauritania, Morocco, Algiers. Tunisia and Madagascar, French is a common language of the people. Kevorkian's book will be useful to the francophone student and scholar who is interested in the history of Genocide as a crime against humanity in general, and Armenian genocide in particular.

Kevorkian's book may be divided into three main sections: The first three hundred thirty pages gives the pre-genocide events , extending from 1908 to 1915, and deals mainly with the massacres in Cilicia, the so-called Adana massacres, and the relations between Armenian political parties and the Ottoman government and Young Turks. These events were covered also in the book published by Kevorkian mentioned above, "La Cilicie 1909-1921". One possible error that I have noted in this section is that Kevorkian mentions the Tashnag leader. Vahan Papazian – known also by his nick name as Goms- as Dr.Vahan Papazian. (Pages 33, 57. 77). The title of Doctor can not be correct, if it is meant Doctor of Medicine. He was not a physician. He might have had a doctoral degree in other branches of academia, Papazian's wife, Heghoush Papazian had a Doctor of Medicine Degree, but she did not practice her profession in Beirut. ( The Papazians were my next door neighbor in Beirut for several years).

The second part of the book, pages 331 to 852 gives , in great details, the deportation and massacres of Armenians from all over Turkey during 1915-1918. The author takes every Ottoman province , vilayet, sub-province – Sanjak and almost always subdivisions of the sanjak called Caza or Kaza. And gives in detail when and how the Armenians of such a province or main city were deported and massacred.Of course he relies on published archives, but in addition, he gives the memoirs of survivors of the genocide,that are in A.G.B.U's Boghos Nubar Library in Paris.

Any study of a genocide necessarily has to deal with population numbers.

The author gives the population figures of Armenians in the Ottoman Empire, on pages 333-344. He discusses the difficulties encountered by scholars interested in this subject.

Population figures for the Ottoman Empire continue to be debated up to the present. Since 1965, the statistical controversy, some call it the "war of numbers" has occupied an important place in the propaganda of the Turkish government in order to prove that no genocide was committed against the Armenians during World War I, or at least minimize the number of Armenians killed by lowering the number of Armenians in Turkey in 1914.

I wrote a research article several years ago, titled " An inquiry into the statistics of the Turkish genocide of the Armenians 1915-1918" (The Armenian Review, Winter 1972, pp. 3-44). My conclusion, given on page 8 was "Turkish official sources on the subject of the number of Armenians , excepting perhaps the census of 1844. are totally ficticious".

The census of 1844. is considered to be the first real census of the Ottoman Empire. During this census, the number of Armenians was found to be 2,400,000 . two million being in Asia Minor, and four hundred thousands in European Turkey. At the Congress of Berlin in 1878, the Turkish delegate dropped the total number of Armenians by 50 %, and continued to do so until 19l4, the official Ottoman figure being 1,294,851 for 1914.

My research had shown that the number of Armenians in 1914 was not less than two and a half million, thus official Turkish figures were underestimates. Justin McCarthy, in his book "Muslims and Minorities" p. 81 has criticized my conclusion, stating that Ottoman figures for Armenians were not underestimates.

My affirmation that he Ottoman government deliberately reduced the total population number of Armenians, after 1878 has been confirmed by three Turkish reliable sources. [I may note that although Kevorkian's population figures, concur, in general, with the figures of my article, however he does not mention these Turkish sources]. These three sources are : (a)Turkish author, Huseyn Kazim Kadri states that there was deliberate dishonesty in compiling official Armenian population figures. To quote him, "During the reign of Abdul Hamid II, we lowered population figures for Armenians. By the order of Abdul Hamid the number of Armenians had been deliberately put in low figures". Kadri's book originally appeared in Ottoman Turkish, with the title, "10 Temmuz Inkilabi ve Netayici, Turkiye Inkirazinin Sailleri: Macedonia , Ermenistan ve Suriye Meseleleri". (The July 10/23 Revolution and its outcome. The Reason for the demise of Turkey: the problems of Macedonia, Armenia and Syria). (Istanbul: Islam ve Asken publishers, 1920, page 123). Kadri at that time used his pen name Sheikh Muhsin Fani. He was a well educated person. During Abdul Hamid regime, he was a fiscal officer. After the Ittihadists, he was a cofounder of the party's mouthpiece, the Tanin newspaper. Subsequently he occupied several official posts, including District governor of Samsun. Governor-General of Aleppo province, prefect of Istanbul, twice governor of Salonik and deputy in the Ottoman Parliament. After the War, during the Armistice, he became vice president of the Ottoman Chamber of Deputies.

A second Turkish source to confirm my statement that Abdul Hamid deliberately reduced the number of Armenians is Alaedin Cetin and Ramazan Yildiz "Sultan II Abdul Hamid Han.Devlet ve Memleket Goruslerim ( Sultan Abdul Hamid II Khan, my views on the State and the Country) (Istanbul, 1970, p.158).

A third Turkish author to confirm my statement that the Ottoma government deliberately reduced the number of Armenians , is Cevdet Kucuk, who states that "The Sultan stated that the total Armenian population never exceeded 459,000. " Cevdet Kucuk, The Armenian Population in Anatolia, in the Nineteenth Century" translated from Turkish by H.Umune, in "The Eastern Question: Imperialism and the Armenian Community" (Ankara, Institute for the Study of Turkish Culture, 1987, p. 79).

**Continued on page 4**

## "Le Génocide Des Arméniens"

**Continued from page 3**

The third, final part of Kevorkian's book, pages 859 to 972 is mainly about post World War I trials of the leaders of Ittihad and Terakki (Young Turks) Party, Talaat, Enver and Jemal Pashas and more than a hundred fifty members of the party accused of wartime massacres, by special Turkish Courts. It is usually stated in history books that the Courts were organized by the Ottoman Sultan Mehmed the 6th Vahiddedin .Needless to say it was initiated under the pressure of the occupying Entente forces, mainly Great Britain and France.

In a recent publication about these trials, by a Turkish historian, Osman Selim Kocahanoglu, it is stated that the Ottoman Sultan Vahiddedine actually ordered his prime Minister Izzet Pasha, to force the main leaders, Talat, Enver and Jemal pashas to depart secretly from Turkey in six hours.

The Sultan adds that the calamities brought upon Turkish Empire by these leaders is more than enough. So they better run away from Turkey to a foreign land.(Reference S. Kocahanoglu, "Ittihat-Terakki'nnin Sorgulanmasi ve Yargilanmasi, `1918-1919) [The Interrogation and Indictment of Union and Progress Party] page 25.

The trial of the Turkish criminals, after the escape of the main leaders , turned out to be a farcical comedy. In March of 1920, after a few of the criminals had been tried, the remainder were transferred by the British from Istanbul to a prison in Malta. From here, their escape was facilitated by their captors.

It is now evident that the British were against punishing the Young Turk Criminals, even if they had caught Talat, Enver and Jemal Pashas in 1918.

In every book about World War I, one reads that on May 24, 1915, the Entente nations, namely France, Great Britain and Russia made known publicly to the Ottoman Sultan's government that they will hold personally responsible, all the members of the Turkish government, as well as those officials who have participated in the deportations and bestial massacres of Armenians. This stern declaration of the Entente powers did not make any difference in the genocidal acts of the Ottoman Government, planned and executed by Talat, Enver and Jemal and the inner criminal core of the Union and Progress Party.

Here I may add that Great Britain was against the Entente Declaration for punishing the Ittihadiasts as early as 1915. Nevertheless His Majesty's Government signed it, to show a united front against German-Turkish alliance.( On this point, see Hasmig Karamanougian, "Zoravar Aram Karamanougiani Gyankn ou Kordze" [ The life and work of General Aram Karamanougian] New Jersey, 1998, p.254 quoting French Foreign Office unpublished document no. 887-95). The reservation of Britain to sign the above declaration to punish the Ittihadist criminals was most probably due to the fact that the Ottoman Sultan was not only the King of the Empire, but also as Calif or Khalif, the spiritual head of the Moslems of the World. Great Britain had millions of Moslems in his Empire, and punishing their spiritual leader would be against the national interests of England.

Kevorkian does not mention that England was against punishing the leaders of Young Turks.

A few observations about Kevorkian's "Le Génocide des Arméniens"

1. Kevorkian too often gives his previous publications as a reference for a footnote in this book. Quoting an author's previous publications is not a defect in historiography and this practice is often done by historians, to the dislike of at least some readers/authors. In case of Kevorkian, he often gives his previously published book co-authered with Paboudjian, "Les Arméniens Dans Empire Ottoman a la Veille du Genocide" as a reference to an end-note in the current book. Let me give an example to make my point clear. On page 750 of the "Le Génocide des Arméniens" starts the chapter about deportations in the sanjak of Ayntab and and Antakya . As the first reference to the information about Ayntab, reference no. 2450. Kevorkian gives as reference his previous work mentioned above, pages 318-323. One has to assume that the reader already has or can easily get Kevorkian/s previous book, that I mentioned above. The previous work was well received by scholars as well as general readers. However, it is an expensive book and one does not expect that it had a wide sale, or is available to the reader of the current book.

2. A second observation. Kevorkian does not make full use of the histories of compatriotic Unions published about Armenian Communities in Turkey in 1914. For example, In writing about the Armenian community in the town of Kilis, (Page 750 in the book) he does not mention that there are two books about Kilis Armenians "Houshamadian Kilisi Hayots" by Hampartsoum Berberian and Rev. Father Khoren Nersesian, printed in Beirut 1969, and another volume titled "Giliza Haygagan Kilis" by Aliahan Bayramian, printed in Yerevan, 2001.

3. A select bibliography at the end of the "Le Génocide des Arméniens" would have been very desirable.

4. Kevorkian should have mentioned that, as a result of the genocide , the Armenian population of Turkey has been reduced from over two milion to about 80,000 persons in present day Republican Turkey.

## Abdullah Gül And His Teller Of Tales Emin Kivircik

**Continued from page 2**

and the forced repatriation of the Greek and Armenian Turkish population had been more or less completed, it was now the turn of the Jews to be the new target of Turkish Nationalism.

This anti-Jewish policy quickly bore fruit. Within a few years the Jewish population shrank from 200,000 in 1920 to 80,000 in 1929. Today only an estimated 25,000 Jews live in Turkey.

In 2005 Corinna Guttstadt had written an academic paper with the title "Turkish Jews in Europe between the wars and their fate during the Holocaust". In this paper she produces evidence that proves that the claims of Turkish researchers and politicians as "always being friends of the Jewish nation" were nothing but pure propaganda. This Fairy Tale has been carefully nurtured by Turkish and pro-Turkish researchers over the years in order to gain the support of Jewish organizations and the public, especially in the USA. It is well known that the Turkish regime has often tried, through the financing of research projects in the USA dealing with Turkish-Jewish history, to influence the outcomes of scientific research. Moreover, parallel to establishing a Political-Lobby, Turkey is working hard to establish a Researchers-Lobby to support the spread of "Historical Distortions".

Therefore, it was not by chance that Emin Kivircik published his work in 2007 in which he wrote about the "Saving of 20000 Jews" with the help of Turkish diplomats. It was also not by chance that the Turkish President asked this man to accompany him to the USA so as to give him the opportunity to tell his tale of Turkish diplomats saving Jewish lives to an audience of influential members of Jewish Associations. "The story of my Grandfather is the best weapon against the ADL" claimed Kivircik. The full story of Emin Kivircik grandfather stretches back to the years of the Armenian Genocide. At that time Behic Erkin was an officer and a member of the Special Organization Teskilati Mahsusa, which was created by the Young-Turk Ittihat Party. This Special Organization played a crucial role in the massacre of the Armenians. Sait Cetinoglu, who researched the role of members of the Teskilati Mahsusa in the Turkish nationalist movement under Mustafa Kemal Pascha, wrote about the later appointed Turkish Ambassador to France "As a member of the Teskilati Mahsusa , Behic Erkin took murderers out of the prisons and trained them to operate in bands to carry out the massacres on the expelled Armenians." Like so many members of the infamous Teskilati Mahsusa who participated in the Genocide, Behic Erkin began a successful career after the founding of the Turkish Republic. The man who apparently as Ambassador in France saved thousands of Turkish Jews was in fact during the First World War responsible for the murder of thousands of Armenians.

Germany

## Government Thugs Hurl disrupt Ter-Petrosian Rally

**Continued from page 1**

one of the main targets of Ter-Petrosian's harsh verbal attacks on Armenia's leadership, with the ex-president repeatedly using the deputy prime minister's derogatory nickname, Muk (Mouse), in his speeches in Artashat and other regional towns and villages.

"That provocation was a sign of the regime's wretchedness, misery and defeat," Ter-Petrosian told more than 200 people in Pokr Vedi, a village which he visited after Artashat. "Only a weak, wretched and miserable person can resort to such steps,"

"If the authorities were sure that they will win [the February 19 election,] they would not have resorted to such steps," said one of his top allies, Aram Sarkisian. "They already sense their imminent defeat. We will win before February 19."



## ԳՐԱԿԱՆ

# ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ
# (1926-1983)

*ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ*

*Իրար լրացնող ներդաշնակ ամբողջութիւն մը կը կազմեն Վահրամ Մավեանի կեանքը, գործը եւ խօսքը: Իր անձին, մտածողութեան եւ արուեստին մէջ հազուագիւտ հաւասարակշռութեամբ կը գոյակցէին մարդկային ազնուութիւնը, հայու աշխարհագրիւ բեկորներու ճակատագրին սուր զգացողութիւնը, մեր ազգային արժանապատուութեան բարձր բայց ոչ-այլամերժ գիտակցութիւնը, գրականութեան եւ արուեստի անպաճոյճ ու հարազատ հասկացողութիւնը:*

*Կրթական, մշակութային եւ գրական-գեղարուեստական հարցերու շուրջ Մավեանի կարծիքները, դիրքորոշումները, կշռադատումները կը բխէին նոյն աղբիւրէն _ յստակատես բաց միտք մը, բարեացակամ վճիտ հոգի մը, յանձնառութիւններուն հաւատարիմ նուիրեալ սիրտ մը:*

*Իրեն հետ ունեցած անձնական թէ խմբային հանդիպումներուս ու պահերուս զիս յատկապէս տպաւորած են իր պարզութիւնը, արդարամտութիւնը, խոհուն խառնուածքը: Ինչ ալ ըլլար խօսակցութեան նիւթը _ գրականութիւն, ազգային կամ միջազգային հարցեր, կամ անձերու վերաբերեալ նշումներ եւ հարցումներ _ ան միշտ կը խուսափէր հապճեպ հաստատումներէ: Պարագայական, բմայքոտ արտայայտութիւնները տեղ չունէին իր մտածողութեան ու բառապաշարին մէջ:*

*Ունի բերթուածներ, պատմուածքներ, վիպակներ եւ օրագրութիւններ: Որպէս բանաստեղծ եւ արձակագիր՝ գիտէր միտքերն ու յոյզերը տալ վճիտ առուակի մը պարզութեամբ ու հարազատութեամբ:*

*Որպէս հայ մարդ՝ գիտէր տոկալ, յուսալ _ ու կարեկցիլ, տա՛լ նոյն ատեն:*

## ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆԻ «ՀԱՅՈՒ ԲԵԿՈՐՆԵՐ»Ը
## (Յապաւումներով)

*Իր ներաշխարհին մտերմացած ու զինք ճանչցած էինք որպէս բանաստեղծ՝ Սփիւռքի ցուրտ հողմերէն ջերմութիւն վերծանող իր քնարերգութեամբ: Մամուլի էջերէն հետեւած էինք կազմաւորմանը իր իւրայատուկ արձակին՝ որու ճկուն ու արդիական աշխարհաբարի թարմութիւնը հետզհետէ աւելի հաւասարակշռուած զսպութեամբ կը զուգորդուէր բանաստեղծական խօսքի հազիւ նշմարելի ներթափանցումով: «Հայու Բեկորներ» արձակ հատորով առիթը կ՚ունենանք համադրական ամբողջականութեամբ ծանօթանալու ոչ միայն բանաստե՛ղծ արձակագրին, այլ նաեւ ու մանաւանդ հասուն մարդուն ու մտածող ողջմիտ հայուն:*

. 1 .

*Վահրամ Մավեանի «Հայու Բեկորներ»ը կը բաղկանայ զիրար ամբողջացնող եւ իմաստաւորող քսան գրութիւններէ, որոնք կը կազմեն սփիւռքահայ կեանքի մէկ համապատկերը: Տարածութեան մէջ այս համապատկերը կ՚երկարի Տապլինէն մինչեւ Նոր Ջուղա, Ամսթերտամէն մինչեւ Լիզպոն՝ ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն անցնելով աշխարհի գրեթէ բոլոր կեդրոններէն ու հայը իր գոյատեւումը կը ճգնի _ Անգլիա, Հոլանտա, Զուիցերիա, Գերմանիա, Իտալիա, Պոլիս, Կիպրոս, Լիբանան, Սուրիա, Յորդանան, Իրաք, Պարսկաստան, մինչեւ հեռաւոր Ամերիկա: Ընդգրկուած ժամանակաշրջանը յետեղեռնեան կիսադարն է, ու յատկապէս երկրորդ աշխարհամարտին վաղորդայնը:*

*«Հայու Բեկորներ»ու ընդհանուր ու միակ թեման գոյութեան անստոյգ կռիւը քաշքշող հայկական Սփիւռքն է՝ իր սեւով, գորշով ու ճերմակով: Հոն կը հանդիպին սփիւռքահայ կեդրոնախոյս ու կեդրոնաձիգ վիճակներու գլխաւոր տարրերը իրենց այլազան կերպարներով, որոնց հանրագումարը կը կազմէ գաղտնիքը մեր ազգային գոյատեւման՝ իր ողբերգական ու դիւցազներգական երեսներով՝ Արեւելքէն Եւրոպա անցած տղոց, որոնք երբեք դեռ «երազներ ունէին իրենց աչքերուն՝ կապոյտ, հայու աղուոր երազներ», բայց որոնք արեւմտեան համայնակուլ ովկիանին մէջ կաթիլի մը պէս կը կորսուէին անհետ: Աւելի բարդ վիճակի մը խորացած բացայայտման փորձ մըն է Սիրանը, ուր տրուած են մեր բեկորներու կորուստին ոչ այնքան արտաքին ազդակները, որքան ներքին պատճառներն ու գործօնները, այսինքն մեր հոգեկան տոհմիկ արժէքներուն ու սրբութիւններուն լքումը, ազգային նկատումներէ նոյնիսկ անկախաբար որպէս մարդ մեր բարքերուն աղարտումն ու այլասեռումը: Ինը միլիոն բնակչութիւն հաշուող Լոնտոնի մէջ, ուր մարդիկ «ազգութիւնով չեն զբաղիր այլեւս», առանձնութենէ տառապող հայ գիտակից աղջիկը անվերապահ սիրով եւ ամբողջական նուիրումով կը կապուի Արեւելքէն եկած հայ տղուն, կը խաբուի անկէ, «ինչու խաբեցիր» չկայ բնաւ», շնականօրէն կը փիլիսոփայէ բարոյական զառիթափին վրայ կանգնած պատեհապաշտ հայ տղան, այլ ««ինչու խաբուեցար» է միշտ»:*

*Մեր նահանջի կենցաղային մէկ ուրիշ երեսը կը պատկերէ Հայերէնի դասը, որ պատմութիւնն է իր լճացած ճղճիմ ու գորշ եսը որոճացող անգլիամոլ հայ պաշտօնեային: Օտարին հանդէպ ստորաքարշ է ան, իսկ իր ազգակիցներուն հանդէպ՝ սնափառութեամբ փքուն: Իր մայրենի լեզուն արհամարհող այս պզտիկ մարդուն աղջիկը «պիւլպիւլի պէս անգլերէն կը խօսի» եւ հայերէնը կը հասկնայ «կամաց խօսելու եթէ ըլլաք»: Սակայն անգլիական համալսարան մուտքի համար երկրորդ լեզուի մը պետական քննութեան պարտադրանքը զինք կը ստիպէ հայերէն սորվիլ տալ իր աղջկան:*

*Առանց ետին նայելու նահանջող ամերիկահայութեան համար բացառութիւն կազմող, իր տրամաթիկ ուժգնութենէն պարպուած եւ ըստ էութեան ուշացած յետդարձի մը խառն պատկերումն է «Կապուելիք Խենդ»ը: Հոս տրուած են երկու հակադիր կացութիւններ _ մէկ կողմէ՝ օտարացած զաւակներու եւ թոռներու տէր եօթանասունամեայ բարեկեցիկ ամերիկահայը իր ազգակիցներուն կարօտով Արեւելք կը վերադառնայ, վերջին տարիներուն վարժապետութեամբ զբաղելու եւ հայ մանչուկներու հայերէնը լսելու իղձով. իսկ միւս կողմէ՝ իրմէ օգնութիւն կը խնդրէ արեւելքաբնակ այլ վարժապետ մը, որպէսզի բժշկական ուսման մէջ մասնագիտանալու համար Ամերիկա ուղարկէ իր զաւակը: Այս վերջինը յետագային այդտեղ ալ կ՚ամուսնանայ օտարի մը հետ եւ կը բռնէ կորուստի ճամբան:*

*Իր հայու անցեալին ուղղուած սրտառուչ բայց անզօր կարօտով կը սպառի Կոռւեցէքտղէք... կոռւեցէքբաջ բաջ...ի փորթուկալաբնակ հայ գորգավաճառը: Ֆրանսուհի իր կինով եւ փորթուկալցի զաւակներով, ան մինչեւ վերջ օտար կը մնայ իր սեփական տան մէջն իսկ՝ կեանքին մէջ առած սխալ մէկ քայլին հետեւանքով: Անձնատուութեան այս ողբերգութեան խորապէս ցնցիչ եւ ուժգին մէկ պատկերն է Լեհաստանի վերջին քառորդ-հայը, որ յագեցած է տխուր առասպելի մը անյատակ թախիծով ու խոր հեւքով: Այստեղ այնքա՜ն խանդաղատանքով եւ ապրումի հարազատութեամբ տրուած է անհուն վիշտը՝ արդէն գրեթէ օտարացած հայուն, որ պատմութեան անողոք հեգնանքով հեռացուած է իր ազգութենէն, բայց որ կոտրտուած հայերէնով նամակին տակ իր օտարանուն ստորագրութեան կը կցէ «հայ» գրութիւնը՝ բարձրարժէք տիտղոսի մը առթած հպարտութեամբ:*

*Այլազան ձեւերով ու չափերով վիրաւոր բայց անձնատուր չեղող սփիւռքահայութիւնը տիրող թեման է շարք մը գրութիւններուն: Յատկանշական է որ, համապատկերը աւելի ամբողջական դարձնելու մտահոգութեամբ, հեղինակը չի վարանիր գրականութեան բերելու մեր կեանքի կարգ մը լուսանցքային երեւոյթները որոնք տիպական ըլլալէ աւելի խորհրդանշական են կամ երբեմն նոյնիսկ որոշ չափով երգիծական: Այսպէս, ծիծաղելիութեան հասնող միամտութեան մը ետին թաքնուած պարզ ու բարի հայու մը վսեմութեան քանդակն է Լոնտոնի «Անկլօ Արմինիըն Գլապ»ը, ուր ջինջ մարդկայնականութեան մը կը զուգակցի անտաշ բայց իմաստուն ազգասիրութիւն մը: Լուռ անձնազոհութիւն մը մարմնաւորող այս ժողովրդային հատուածին մէկ ամբողջացուցիչն է Մատթէոսը, անգլիական օտար ափերուն վրայ աւելի եւս կծկուած ու չփոթած կերպարանքով խեղճուկ ու անպէտք բեկորը, որ սակայն իր անգիտութեամբ իսկ բնաւ խնդրոյ առարկայ չի դարձներ հաւատարմութիւնը իր հայութեան հանդէպ: Լոնտոնի մայթերուն վրայ քաշքշուող, արտաքնապէս պատկառազդու եւ ներքնապէս աղքատիկ Լեւոնը տիպական ներկայացուցիչն է՝ իրենց տգիտութեամբ երանելի բեկորներուն որոնք կը մնան հայ, բայց որոնք զուրկ են հայկական զօտեպնդիչ աւանդութիւններու եւ անեղծ բարքերու իրաւ գիտակցութենէն: Այս կարգի լուսանցքային տիպարներէն, ամբողջութեամբ ժխտական եւ խորթ, միակ բացառութիւնն է Ազգային վրէժի «հերոս»ը, կեղծ-յառաջդիմական շառլաթանը, որ իբր թէ կ՚ուզէ գաղափարական աշխատանքով լուծել մեր զոհերուն ազգային վրէժը, բայց որ իր հայութիւնը կ՚ուրանայ առաջին պատահական փորձութեան իսկ:*

*Գոյութեան կռիւը շարունակող սփիւռքահայութեան մայր հոսանքը, իր ջինջ ու պղտոր կոհակներու իրերաթափանց բախումներով, կը կազմէ ծանրութեան կեդրոնը «Հայու բեկորներ»ուն: Ջերմ հայրենասիրութիւնն ու բովանդակալից ազգասիրութիւնը առանցքը կը հանդիսանան Մավեանի հատորը առաւելագոյնս արժեւորող այս կարգի գրութիւններուն:*

*Մեր մշակութային կոթողական իրագործումներու դրուատումին ետին, տոկալու եւ յարատեւելու աննկուն կամքին հաստատումն է Ուրեմն հա՛յ էք դուք: Հեռաւոր Իռլանտայի մէջ, չնչին ձեռագրի մը հանդէպ եղած գուրգուրանքի եւ հպարտութեան զեղումը տեսնելով, հայ ուսանողը ա՛լ անկարող կ՚ըլլայ զսպելու իր պոռթկումը:*

*Նոյնպէս, հայ գիրի ու գրականութեան ապրող հզօրութեան ոգեկոչումը եւ լուսապաշտ մեր մեծ մեռելներուն մօտ ուխտագնացութիւն մըն է Քաղաքը որ կ՚ապրի իր մեռելներով: Այնքա՜ն խոր սէր կայ այս գրութեան մէջ՝ մեր մշակութային արժէքներու եւ զանոնք իրենց կեանքով յաւերժացնող պարզ ու բարի մարդերու հանդէպ:*

*(Շարունակելի 1)*

**ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**
**Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն**

**Ի նպաստ**
**Նոր Հաճնոյ Մեծն Մուրատ դպրոցին**

Մեծ Պարգեւ՝ **2008 Lexus ES 350**
Ա. Պարգեւ՝ **Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան**
Բ. Պարգեւ՝ **Laptop Համակարգիչ**
Գ. Պարգեւ՝ **42" Plasma TV**
**Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ**
**Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. ժամը 8:00ին**
**Verdugo Hills Country Club**
**400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202**

**Նոր Հաճընը Քաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով**
**Նուէր՝ $100**

**Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝**
**(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029**

# ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» (ԺԳ ԴԱՐ)

Դոկտ. Տ. ԶԱՒԷՆ ՔՀՆՅ. ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ

## Մուտք

Կիրակոս Վարդապետ Գանձակեցիի «Պատմութիւն Հայոց» երկը 13-րդ դարուն գրուած անգնահատելի գործ մըն է իր ժամանակաշրջանի հայոց եւ միջազգային իրադարձութեանց վերաբերեալ, ընդարձակ, մանրամասն եւ ստուգապատում: Գործին տիտղոսանունը աւելի երկար է, նշելով պատմագրութեան շրջանը, Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ իր օրերը, ներառնելով նաեւ իր՝ Կիրակոսի անունն ու Գետիկ Վանքի իր պատկանելիութիւնը: Սոյն աշխատանքը լիովին սերտած ու քննական հրատարակութեամբ ի լոյս ընծայած է Կարէն Մելիք-Օհանջանեան 1961 թուին Երեւանի Ակադեմական հրատարակչութենէն:

## Հեղինակը

Գանձակեցիի երկը մեզի հասած է 40-է աւելի ձեռագիր օրինակներով որ ինքնին ցոյց կուտայ գործին մեծ կարեւորութիւնն ու օգտակարութիւնը սերունդէ սերունդ: Անոնցմէ 28 օրինակներ ի պահ դրուած են Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ: Անկասկած հեղինակին անունը եղած է Կիրակոս Գանձակեցի, ծնած Գանձակ քաղաքին մէջ 1200 կամ 1202 թուականներուն: Եղած է ուսեալ վարդապետներէն մին Գետիկ Վանքին, եւ բանասէրներ զինք նոյնացուցած են Կիրակոս Երզնկացիի եւ Կիրակոս Արեւելցիի հետ, յենելով «Յայսմաւուրք» մատեանի մէկ յիշատակարանին վրայ՝ ընդօրինակուած իր կողմէ 1269 թուականին.

Յիշեալ յիշատակարանը զինք Արեւելցի եւ ոչ թէ Գանձակեցի կը կոչէ տալով նաեւ իր ծննդեան ճիշդ թուականը: Բանասէրներ եզրակացուցած են թէ Կիրակոս պատմիչ երեք ազգանուններով նոյն անձնաւորութիւնը եղած է՝ Գանձակեցի, Երզնկացի, Արեւելցի:

Կիրակոս եղած է այն քիչերէն որ հետաքրքրական ինքնակենսագրութիւն մըն ալ հասցուցած է մեզի: Շատ կապուած ըլլալով իր ուսումնական կեդրոնին՝ Գետիկ Վանքին, աշակերտած է եւ հիացած նշանաւոր Վանական Վարդապետին, որ մեծ ուսուցիչներէն եղած է Գետիկ Վանքին, որուն շուքին տակ Կիրակոս ուսած է «երկար տարիներ», ինչպէս ինք կ'ըսէ: Վանական Վարդապետ Գետիկ Վանքէն ետք հաստատած է Խորանաշատ Վանքը 1220 թուականին, ուր Գանձակեցի եւս աշակերտեցաւ իրեն՝ մինչեւ 1225: Վանական Վարդապետ մեռած է 1251 թուականին: Սակայն Մոնկոլներ երբ Հայաստան արշաւեցին, կործանեցին Խորանաշատը, ու Կիրակոս գերի տարուեցաւ 1236 թուին, բանտարկուեցաւ, եւ սակայն նոյն տարին ազատ արձակուեցաւ, նոյնիսկ օգտակար հանդիսանալով Մոնկոլներուն որպէս թարգման իր գիտցած երկու լեզուներուն շնորհիւ՝ թրքերէնի եւ պարսկերէնի:

## Դիւանագիտական Յարաբերութիւններ

Կիրակոս՝ «Արեւելցի» անունը կրեց քանի որ Կիլիկիոյ լատինադաւան արեւմուտքի հակառակորդ խումբին կը պատկանէր՝ Արեւելեան Վարդապետներուն հետ: Իր կողմնորոշումը կուգար իր սիրեցեալ ուսուցիչ Վանական Վարդապետէն եւ դասակից Վարդան Արեւելցի Վարդապետէն, որոնք Գանձակեցիի բառերով «վարդապետական եւ դաւանական հեղինակութիւններ» էին: Հոն՝ դէպի Արեւելք էր ուղղուած հեղինակութեան ղեկը հայ եկեղեցւոյ դաւանութեան նկատմամբ:

Կիրակոս անձնական հանդիպում մը ունեցած է Կիլիկիոյ Հեթում Թագաւորին հետ 1225 թուին երբ Թագաւորը Մոնկոլիոյ մայրաքաղաք Սամարղանդէն կը վերադառնար, եւ ճամբու ընթացքին կը հանդիպէր Կիրակոսի Հայաստանի Արագածոտն Նահանգի Վարդենիս գիւղին մէջ, որմէ Գանձակեցին կը լսէր «իր տեսած բարբարոս ցեղի՝ Մոնկոլներու մասին»: Հեթում գացեր էր հաշտութիւն մը կնքելու, ազատելու համար իր երկիրը Մոնկոլեան արշաւանքներէն: Իր եղբայրը Սմբատ Գունդստաբլը նախ պաշտօնապէս ուղարկած էր Գարագորում 1248 թուին, որմէ հինգ տարի ետք 1253-ին Հեթում անձամբ գացած էր տեսակցելու Մոնկոլ Մանկու Խանին հետ: Այս բոլորի մասին կը կարդանք Կիրակոսի գիրքէն:

Կիրակոս Սիս կը գտնուէր վերոյիշեալ «Յայսմաւուրք» մատեանի գրութեան տարին, 1269-ին, զոր ինք գրեց ու աւարտեց: Իր մահուան թուականը կը ճշդէ Գրիգոր Ականց, երբ կ'ըսէ. «Հայոց 720 թուականին (Քրիստոսի 1271 թ.) իրենց հանգիստը մտան հայոց զոյգ բազմերախտ վարդապետները Վարդան եւ Կիրակոս»: Կիրակոս Գանձակեցի ծնած էր 1200 թուին եւ մահացած 1271 թուին:

## Բովանդակութիւնը

Կիրակոս Գանձակեցի իր «Պատմութիւն» գործին ձեռնարկեց 1241 թուի Մայիս 19-ին, Հոգեգալստեան կիրակի օրը, ինչպէս ինք կը նշէ: Աշխատած է անոր վրայ քսան տարիներ ու վերջացուցած զայն: Երկին Ա մասը թէեւ նախորդ պատմիչներու գրածներէն քաղուած է, Բ մասը շատ աւելի հետաքրքրական, արժէքաւոր եւ այժմէական նիւթեր կը բովանդակէ «ականատես»ի վկայութիւններով ու փորձառութեամբ ճոխացած: Գործը աւարտած է 1265 թուի Մոնկոլ Ապաղու Խանի եւ Բիւզանդիոնի Միքայէլ 8-րդի դստեր Դեսբոնիայի ամուսնութեամբ: Գիրքի եզրափակման մասին կը վկայէ իր դասակիցը՝ Վարդան Վարդապետ Արեւելցի, յայտնելով թէ «Նոյն 1265 տարին Վանական Վարդապետն ու Կիրակոս գրեցին Մոնկոլներու, պարսից, աղուաններու, հայոց, վրացիներու եւ յոյներու մասին»:

Կիրակոսի երկը ունի յատկանշական առաւելութիւն մը եւս: Ան օգտագործած է Գետիկ Վանքի եւ այլ հնութեանց պատերուն վրայ փորագրուած արձանագրութիւնները: Երբ գրած է Մխիթար Գօշի եւ Գետիկ Վանքի մասին, արտագրած է նման փորագրուած տեղեկութիւններ վանքի շինարարութեան, շինարարներու եւ բարերարներու մասին: Անտարակոյս Գանձակեցի իր յաջորդ սերունդներու պատմիչներուն կողմէ ընտիր ու վստահելի պատմիչ մը նկատուած է, յատկապէս Մոնկոլներու ի Հայաստան կատարած աւերիչ արշաւանքներու մասին:

Գանձակեցիի գործին զուգահեռ կ'ընթանայ պարսկերէն գրուած ժամանակակից պատմագրութիւն մը՝ գրուած Րաշիտ ալ-Տինի կողմէ (1247-1318), որ կը բովանդակէ լայն տեղեկութիւններ Մոնկոլներու պատմութեան, ինչպէս նաեւ Հնդկաստանի եւ Եւրոպիոյ մասին: Այս գիրքը որ կը կոչուի «Ճամիլ ալ-Թաւարիխ» (Պատմութիւններու Հաւաքածոյ), կուգայ լրացնելու Կիրակոսի գիրքին անաւարտ մնացած մասը: Նոյնը կարելի է ըսել նաեւ Վարդան Արեւելցիի, Կիրակոսի դասակիցին գրած «Պատմութիւն»ը որ եզրափակիչ մասը կարելի է նկատել Կիրակոսի գործին:

Կարեւոր է նշել նաեւ որ Գանձակեցիի գործի վերջաւորութեան հայ եկեղեցւոյ վարդապետութեան վերաբերեալ բաժին մըն ալ կայ, ուր Ներսէս Շնորհալի Հայրապետի Հաւատոյ Հանգանակը լրիւ արձանագրուած է: Բնագիրը հարազատ է եւ նոյնը ինչ որ իր «Ընդհանրական Թուղթ»ին մէջ կը կարդանք: Կիրակոս ընդգրկած է նաեւ Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի (1221-1267) կոնդակը Սիսի եկեղեցական ժողովի մասին որ գումարուեցաւ 1243 թուականին, ուր նաեւ 24 որոշումներ առնուեցան որոնք լրիւ կան այս երկին մէջ: Կիրակոս ունի նաեւ Սուրբ Հոգւոյ Բխման վարդապետութեան ուղղադաւան բանաձեւը, որ է «բխումն ի Հօրէ», որուն համար ալ ինք կ'աւելցնէ, ըսելով թէ «այդ Հայ Եկեղեցւոյ կողմէ եւ Կիրակոսին կողմէ ընդունելի է, այսինքն Ս. Հոգւոյ բխումն ի Հօրէ, եւ յայտնուած Որդւոյն կողմէ»:

## Կիրակոս եւ Վարդան

Վարդան Արեւելցի գրած է իր կարեւոր երկը յայտնելով որ օգտագործած է Կիրակոսի «Պատ-մութիւն»ը յատկապէս աղուաններու, պարսիկներու, հայերու եւ յոյներու մասին գրած ատեն: Վարդան Աղուանից ազգը կը կոչէ «Ազգին Նետողաց», այսինքն նետ քաշող ժողովուրդ: Կ'ըսէ նաեւ թէ օգտագործած է Վանական Վարդապետի գրածները նոյն ազգերու մասին թէ՝ «անոնք որոնք մանրամասնօրէն գրուած էին երանելի զոյգ վարդապետներուն Վանականի եւ մեր սրտակից եղբօր Կիրակոսի կողմէ, զորս չհամարձակեցանք գրել վերստին երրորդ անգամն ըլլալով, բայց միայն համառօտիւ կարեւոր նիւթերը արձանագրելով»:

Թէեւ Վարդան օգտուած է Կիրակոսէն, ինչպէս Մելիք Օհանջանեան նկատած է, երբեմն նորութիւններ եւս գտնուած են Վարդանի մօտ, որով յայտնի կ'ըլլայ տարբեր աղբիւրներու օգտագործումը Վարդանի եւ Կիրակոսի կողմէ անկախաբար իրարմէ: Նոյնիսկ, ըստ Մելիք Օհանջանեանի, թերեւս Վանական Վարդապետի կորսուած գործն է որ տեսած ըլլար Վարդան ու գործածած զայն: Գանձակեցիի անաւարտ մնացած մասը կը վերաբերի Մոնկոլ Ապաղու Խանի (1257-1267) արշաւանքի մասին դէպի Դարպանդ, Կուր գետի ափին, որուն դիմացի ափը դիրք գրաւած էր Ապաղուի բանակը:




Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company

Call now and let me help take the worry out of your health care!

HARUT DER-TAVITIAN
Authorized Independent Agent
1807 W GLENOAKS BLVD. #202
GLENDALE, CA 91201
(818) 502-3233
HARUT@EXCELHYE.COM
WWW.EXCELHYE.COM
CA Insurance
License #0B28270

BlueCross of California
The Power of Blue.℠

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

# ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 75-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

*ՀԱՑԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ*

*Վարդգէս Պետրոսեանի հետ առաջին հանդիպումս տեղի ունեցաւ 60-ական թուականի կէսերուն, երբ Սփիւռքի հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ Կ. Դալլաքեան Լիբանան այցելութեան ընթացքին մեզի ծանօթացուց նորայայտ գրողը՝ Թէքէեան Մշակութային Միութեան «Շիրակ» ամսագրին Լա Կոնտուլայի մէջ տուած ճաշկերոյթին ընթացքին: Բայց զինք աւելի մօտէն ու հանգամանօրէն ճանչցայ 1978ին տեղի ունեցած Հայաստանի Գրողներու 8րդ համագումարին առիթով, որուն հրաւիրուեր էինք Օ. Սարգիսեան, Ա. Սէփէթճեանը եւ ես «Շիրակ»ի կողմէ, մինչ արդէն ան նախագահն էր համանուն Միութեան: Իր աշխատասենեակը կատարած մեր առաջին այցելութեան ընթացքին ան ջերմօրէն ընդունեց մեզ, իր կողքին ունենալով Սաղաթէլ Յարութիւնեանը, Նորայր Ադալեանն ու Պերճ Զէյթունցեանը իբրեւ Ա. Բ. եւ Գ. քարտուղարներ: Կրկնուող մեր այցելութիւններուն ընթացքին առաջարկեցինք որ Պէյրութ այցելէ՝ նախագահելու համար «Շիրակ»ի հիմնադրութեան 25-ամեակի հանդիսութեանց:*

*- Եթէ դուք հրաւիրում էք ինձ, իմ պարտքն է անպայման ընդունիլ այդ պատիւը, ըսաւ ան, արագ ու ինքնավստահ, հաստատելով մեր մէջ այն համոզումը թէ առանձնաշնորհեալ մըն էր ան՝ վայելելով Հայաստանի թիւ մէկ ղեկավար Կարէն Դեմիրճեանի բարեկամութիւնն ու վստահութիւնը: Այլապէս, Սովետ վարչակարգին տակ ոչ ոք պիտի կարենար կանխաւ հաստատել իր արտասահման ուղեւորութիւնը:*

*1982ի Ապրիլին Մշակութային ձեռնարկներու շարքով մը կը նշուէր «Շիրակ»ի 25-ամեակը, որուն կը նախագահէր եւ գլխաւոր բանախօսն էր Վ. Պետրոսեան: Երեք շաբթուայ իր կեցութեան ընթացքին ան այցելեց մշակութային ու ընկերային բոլոր կեդրոնները, առանց խտիր դնելու հնչակին, դաշնակին, ռամկավարին ու համայնավարին միջեւ, բանախօսելով ու կատարելով ասուլիսներ նորայայտ գրողի կողքին ցուցաբերելով նաեւ քաղաքական հասունութիւն, տեսակէտներու յստակութիւն եւ հակադիր կարծիքներ իսկ արտայայտելու պատշաճ խիզախութիւն եւ դիւանագիտական ճկունութիւն: Հակառակ եկեղեցական մարզի մէջ այդ օրերուն շատ սուր բնոյթ ունեցող Անթիլիաս-Էջմիածին հակամարտութեան, եւ հակառակ այդ մասին իրեն եղած թելադրանքներուն, ան այցելեց Անթիլիասի Կաթողիկոսարանը՝ լսելու համար Խորէն Կաթողիկոսին ու Գարեգին Աթոռակից Կաթողիկոսին տեսակէտները հայ եկեղեցին պառակտող վէճին շուրջ, բայց մանաւանդ անոնց լսել տալու համար որ հայ եկեղեցին մէկ գերագոյն գլուխ ունի յանձին Ս. Էջմիածնայ Մայր Աթոռի Ամենայն Հայոց Կաթողիկոսին:*

*Ծածկող չէր Խորհրդային վարչակարգի տակ ուռճացած թերիները, սակայն այդ բոլորին դէմ պայքարելով հանդերձ հաւատացողն էր որ Սփիւռքահայութիւնը պէտք է բոլորուի Հայաստանի շուրջ, զայն պահպանելու համար իբրեւ միակ եւ Մայր Հայրենիք: Համայնավար վարչակարգին դէմ հակառակութեան պատճառով ան ճիշդ չէր գտներ Հ.Յ.Դաշնակցութեան Ս. Հայաստանի դէմ մղած պայքարը, որուն առնչութեամբ իր տեսակէտները հրապարակաւ արտայայտելու չվարանեցաւ ան: Սակայն, հակառակ այդ բոլորին, «Շիրակ»ի 25-ամեակի եզրափակիչ ճաշկերոյթին ընթացքին Մուշեղ Իշխան առաջարկեց Հայաստանի Գրողներու Միութեան նախագահը հռչակել նաեւ Սփիւռքահայ Գրողներու Նախագահ:*

*Վ. Պետրոսեանի նախագահութեան օրով Գրողներու Միութիւնը բարձր վարկ եւ հեղինակութիւն վայելող հաստատութիւն էր, որուն աւելի քան 350 անդամները ոչ միայն ապրուստի բաւարար ամսաթոշակ կը ստանային, այլեւ կը վճարուէին իրենց գրած գիրքերուն, կամ առանձին յօդուածներուն իւրաքանչիւր բառին համար: Գրողները նիւթապէս ու բարոյապէս վարձատրուած դասակարգ մըն էին: Այս էր գլխաւոր պատճառը որ այդ ժամանակշրջանին ստեղծուեցաւ ընտիր գրականութիւն եւ գիրքի սպառման ու ընթերցասիրութիւնը դարձաւ ընդհանուր երեւոյթ: Կրկնելու գինով կ՚արժէ ըսել որ այդ օրերուն գիրքի սեւ շուկայ կար, որմէ օգտուիլ ուզողները շատ աժան գիներով հրապարակ ելած գիրքերը գնելով կը պահէին, աւելի ուշ բազմապատիկ գիներով ծախելու համար:*

*Այս գեղեցիկ եւ յուսադրիչ պատկերի ուրուագծումէն յետոյ, շատ տխուր է անդրադառնալ այն հակապատկերին, որ ստեղծուած է ներկայիս անկախ Հայաստանի մէջ, ուր գրողները վերածուած են նիւթականի կարօտ եւ հեղինակութենէ զուրկ դասակարգ մը: Գրողը լքուած է իր ճակատագրին՝ այնպէս, ինչպէս եղեր էր սփիւռքահայ գրողին վիճակը: Առօրեայ ապրուստը ապահովելէ յետոյ եթէ աւելորդ դրամ ունի, ի միջի այլոց, կրնայ նաեւ գիրք մը հրատարակել, որպէսզի, լաւագոյն պարագային, մի քանի հարիւր օրինակ ծախուի, նոյնքան մըն ալ նուէր բաշխելով, եւ ծախուած գիրքերուն եկամուտը անոնց*

*Շար.ը էջ 19*

International Academy of Los Angeles
Presents
An Evening Honoring Composer, Director & Pioneer of Armenian Television
SARKY MOURADIAN



Manuel
Kevin George
Chuko
Andre Danik
Narine Shahbazian
Salpi Mayelian
Hovik Krikorian
Harut Hakopian
Jenny Armen
Flora Martirosian
Adiss Harmandyan
Vatche
Hovik Grigorian
Levon Sevan
Maxim
Raffi Khardalian
Razmik Mansourian
Armen Aloyan
Hosts: Anahit Martirossian, Aramayis Gharibyan, Noune Serobian
Thursday, April 10, 2008, 7:30 p.m.
ALEX THEATER
216 North Brand Blvd., Glendale, California 91203
FOR TICKETS CALL: (818) 913-2299
(818) 265-0506
FOR INFORMATION CALL: (818) 243-5722

# «ՎԱԼԵՆԴԱՅՆ»
# "VALENTINE"

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*

*Իւրաքանչիւր փետրուար ամսուան տասնըչորսին, ամբողջ Ամերիկայի Միացեալ Նահանգներում եւ մի քանի այլ երկրներում ծաղիկներ ու նուէրներ են փոխանակւում սիրելի անձանց միջեւ՝ եւ այդ բոլորը Սուրբ Վալենդայնի անունով: Սակայն ով է այդ խորհրդաւոր Սուրբը եւ ինչու են տօնախմբում այդ տօնը: Վալենդայնի օրուան պատմութիւնը քօղարկուած է խորհրդաւոր առեղծուածներով: Հնուց ի վեր աւանդաբար փոխանցուած է եղել, որ Փետրուար ամիսը հանդիսացել է «ռոմանս»ի ամիս: Սակայն Վալենդայնի օրը, ինչպէս այն գիտենք այսօր, բովանդակած է եղեր նաեւ Քրիստոնէական ու հին Հռովմէական աւանդութիւնների հետքեր: Այսուհանդերձ, ով էր Սուրբ Վալենդայնը եւ ինչպէս է այն առնչուած հին ծէսերի հետ: Այժմ Կաթոլիկ եկեղեցին ճանաչում է առնուազն երեք տարբեր Վալենդայն կոչուած սուրբեր, կամ Վալենդինոս, որոնք բոլորը նահատակուած են եղել:*

*Մի առասպել պնդում է, որ Վալենդայնը եղել է քահանայ, որը երրորդ դարի ընթացքում ծառայել է Հռովմում: Կլաուտիոս Երկրորդ կայսրը, նուաճողական պատերազմներ վարելու համար, հռչակել էր որ պետութեան զօրքի մարտունակ կորիզը կազմող ամուրի մարդիկ աւելի լաւ զինուորներ կարող էին լինել քան ամուսնացածները, որի պատճառով օրէնքից դուրս էր յայտարարել երիտասարդ մարդկանց ամուսնութիւնը եւ ընտանիք կազմելը:*

*Վալենդայնը յաւակնելով կայսեր հրովարտակի անարդարութիւնը, արհամարհել էր նրա որոշումը եւ շարունակել գաղտնի կատարել երիտասարդ սիրահարների ամուսնութիւններ: Երբ Վալենդայնի գործողութիւնները յայտնաբերուել էին, կայսրը հրամայել էր մահուան դատապարտել նրան: Սակայն տարբեր կարծիքներ ու պատումներ կան թէ ինչ է պատահել Վալենդայնին: Ոմանք պնդում են, որ նա գլխատուել է, ուրիշներ թէ բանտում հիւանդացել ու մահացել: Այլ պատումներ ենթադրում են, որ Վալենդայնը կարող էր սպաննուած լինել Հռովմէական բանտում՝ այնտեղից քրիստոնեաների փախուստին օժանդակած լինելուն համար: 1835 թուականին, Հռովմում, Վալենդայնի կարծեցեալ նշխարքը յանձնուել է Իրլանտացի մի քահանայի: Սեւ ու ոսկեգոյն դագաղը, Վալենդայնի ամէն տօնի ժամանակ ցուցադրւում է Իրլանտայի Տուպլին մայրաքաղաքի եկեղեցում:*

*Մի այլ առասպելի համաձայն, Վալենդայնը բանտում եղած ժամանակ անձամբ ինքը ուղարկել էր առաջին «Վալենդայն» կոչուած սիրային ողջոյնը: Հաւաստւում է, որ բանտարկութեան ընթացքում Վալենդայնը սիրահարուած է եղել մի երիտասարդ աղջկայ, հաւանաբար կարող է եղած լինել բանտապետի աղջիկը, որը յաճախակի այցելած է եղել իրեն: Ենթադրւում է, որ իր մահից առաջ մի նամակ է ուղարկած եղել աղջկան, որը ստորագրուած է եղել քու «Վալենդայնը», մի արտայայտութիւն, որը մինչեւ հիմա շարունակւում է փոխանակուել այս տօնին՝ որպէս սիրահարների ողջոյնի խօսք: Թէեւ Վալենդայնի առասպելների հետ ճշմարտութիւններ աղօտ են, սակայն պատումները հաստատապէս շեշտում են իր անձը որպէս համակրելի, հերոսական ու ամենաարժէքաւոր ռոմանդիկ անձնաւորութիւնը: Հետեւաբար զարմանալու ոչինչ, որ միջին դարերից սկսած Անգլիայում ու Ֆրանսայում Վալենդայնը ամենաժողովրդական սուրբն է համարւում:*

*Ոմանք հաւաստում են, որ Վալենդայնի օրը տօնախմբուել է մեր թուարկութեան 270 թուականի փետրուարի կէսերին՝ յիշատակելու համար նրա մահուան տարելիցը: Ուրիշներ յայտարարում են, որ Քրիստոնէական եկեղեցին կարող է որոշած լինել տօնելու Վալենդայնի հանդէսը Փետրուարի կէսերին, «Լուբերկուլիէա» հեթանոսական խրախճանքների տօնակատարութիւնը քրիստոնէացնելու համար: Հին Հռովմում Փետրուարը գարնան պաշտօնական սկիզբն էր նկատուել եւ համարուել էր մաքրագործութեան պահ: «Լուբերկուլիէա»ն, որը սկսուել էր Փետրուարի 15ին, պտղաբերութեան խրախճանքի օրն էր եղել, նուիրուած Հռովմի երկրագործութեան Ֆաունուս աստծուն, ինչպէս նաեւ Հռովմի հիմնադիրներ՝ Ռոմուլուսին ու Ռէմէուսին:*

*Հռովմի Ճիլասիուս Պապն է եղել, որ մեր թուարկութեան 498 թուականին, փետրուարի 14-ը յայտարարել է Վալենդայնի տօնակատարութեան օր:*

*Անգլիայում Վալենդայնի օրը համաժողովրդականօրէն սկսուել է տօնախմբուել տասնըեօթերորդ դարում: Տասնութերորդ դարում սկսուել եւ այնուհետեւ շարունակուել որպէս սովորոյթ դառնալ՝ ընկերների ու սիրահարների միջեւ փոխանակելու նուէրներ ու գրաւոր ողջոյններ: Սակայն միայն նոյն դարի վերջում սկսուել է տպագիր բացիկների փոխանակելը: Ամերիկայի Միացեալ Նահանգներում պատրաստի բացիկները դիւրին միջոց են եղել իրենց զգացումները արտայայտելու, քանի որ այն հեռաւոր ժամանակներին անձնական զգացումները ուղղակի արտայայտելը քաջալերուած չի եղել: 1840-ական թուականներին սկսել էին վաճառուել զանգուածային արտադրութեան առաջին «Վալենդայն» ողջոյնների բացիկները: ԱՄՆ-ում, Վալենդայնի ամէն տօնի ժամանակ մէկ երկիլիոն «Վալենդայն» բացիկներ են վաճառւում, որը երկրորդ ամենաշատ բացիկներ վաճառելու տօնակատարութեան օրն է, իսկ Քրիստոսի Ծննդեան տօներին վաճառւում են 2,6 երկիլիոն բացիկներ: Վաճառուած «Վալենդայն» բացիկների մօտաւորապէս 85 տոկոսը գնւում է կանանց կողմից:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

# Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

*Շարունակուած էջ 8-էն*

*թիւնը: Ապա թէ «Ղեւոնդեանց» քահանայից դասի եւ թէ ժողովուրդի հաւաքական մասնակցութեամբ երգուեցան վարդանանց նուիրուած երկու ծանօթ եւ հրաշալի «Նորահրաշ Պսակաւոր» շարականը եւ թէ «Հայրենեայց Պսակադիր» երգը, ղեկավարութեամբ Տ. Նարեկ Աւ. Քհնյ. Մատարեանի:*

*Ապա յաջորդաբար բեմ բարձրացան մեր գաղութի երկու տաղանդաւոր կատարողներ Գրիգոր Օգարեան, Վ. Թէքէեանի «Խորուրդ Վարդանանց» եւ Համօ Սահեանի «Վարդանանք»ի հրաշալի մատուցումով, իսկ Ռազմիկ Մանսուրեան՝ Դաւիթ Բէկ օփերայի «Գուսանի Երգը» մենակատարումով: Թէ Մաննիկ Մանսուրեանի եւ թէ Ռազմիկ Մանսուրեանի երգերն դաշնամուրով ընկերակցեցաւ Փրոֆ. Լեւոն Աբրահամեան:*

***

*Այդ երեկոյ, Վարդանանց Տօնակատարութեան երկու «յայտնութիւնները» հանդիսացան երկու տարբեր անձնաւորութիւններ, մէկը աշխարհական, իսկ երկրորդը եկեղեցական: Աշխարհականը մեզի ծանօթ եւ բարեկամ երիտասարդ խանդավառութեամբ լեցուն իր բժշկական ասպարէզին մէջ յաջողած, Բրշ. Տօքթ. Սարգիս Սրկ. Մեսրոպեանն էր, որ նաեւ կը ներկայացնէր Ս. Յակոբ եկեղեցին, իբրեւ Ծխական Խորհուրդի ատենապետ: Մենք իր մէջ մեծապէս կը գնահատենք իր արտա-ասպարէզային հետաքրքրութիւններն ու մանաւանդ նուիրուածութիւնը, հոգեւոր, եկեղեցական հարցերու վերաբերեալ: Քիչ թէ շատ ծանօթ ըլլալով առ հասարակ բժշկական ասպարէզի նուիրուած անհատներու գործունէութեան, հազուագիւտ են այն բժիշկները որոնք իրենց անմիջական, բժշկական ասպարէզներէն դուրս տրամադրութիւն ցոյց տան նուիրուելու ոչ-ասպարէզային, ազգային-հասարակական, եւ իր պարագային հոգեւոր-եկեղեցական հարցերու: Այս իմաստով մեծապէս գնահատելի կը գտնենք այս պարագան: Նաեւ յայտնութիւն էր մեզի համար իր ելոյթի բեմականութիւնը, մատուցման ոճը, քիչ մը ներշնչուած եւ ճարտասանական իր մտքերու դրսեւորման ընթացքին: Ի վերջոյ եթէ իրեն յանձնուած էր «Տէրունական Աղօթքի ուղղափառ մեկնութիւն» նիւթը, որ մեզի յանձնուած գեղեցիկ գրքոյկներուն մէջէն յայտնի կ'ըլլար որ այդ «Մեկնութիւնը» կը պատկանէր «Եղիշէ Պատմիչի, Յովհան Ոսկեբերանի, Որոգինէսի, Տէրտուղիանոս Հայրապետի, Օգոստինիս Երանելիի սուրբերուն, թերեւս նախընտրելի պիտի ըլլար քիչ մը աւելի խոհական, աւելի վերագրելի թուէր այդ սուրբերուն, քան թէ ինչ որ ստացանք յարգելի բանախօսէն: Ամէն պարագայի, իր ելոյթը խանդավառ ծափահարութիւններով դիմաւորուեցաւ եւ տրուած ըլլալով օրուայ տօնական հանգամանքը, աւելի նախընտրելի էր որ ներկաներու տրամադրութիւնները բարձր պահուէին, քան թէ իրենց հրամցուէր քննական լուրջ մեկնութիւն մը: Գրքոյկէն կ'իմանանք նաեւ որ յարգելի բժիշկը նաեւ այս նիւթին շուրջ դասախօսած է Երուսաղէմի մէջ եւ Ս. Յակոբ եկեղեցւոյ շրջանակէն ներս: Անկախ այս բոլորէն անգամ մը եւս կ'ուզենք ջերմօրէն շնորհաւորել մեր պաշտօնակիցը հոգեւոր, եկեղեցական մարզերէն ներս իր նուիրումին համար:*

*Երկրորդ «յայտնութիւնը» կը հանդիսանար Գանատայի առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ Եպս. Գալստանեանը, որուն բեմ պիտի հրաւիրէր այդ առիթով խօսելու, օրուայ նախագահող Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Մենք Տէրտէրեան սրբազանի պերճախօս ելոյթներուն յաճախ ներկայ եղած ենք եւ գնահատած եւ ուրեմն մեզի համար նորութիւն էր լսել մէկ ուրիշ բարձրաստիճան եկեղեցական մը, որ քանի մը կարճ վայրկեաններու մէջ Վարդանանց խորհուրդը ներկաներուն փոխանցեց կարծես թէ այս օրերու համար խիստ անհրաժեշտ երեւոյթ: Սրբազանը հաճելի բեմականութիւն մը ունի, գիտէ իր մտքերը լաւապէս արտայայտել եւ կը խուսափի աւելորդ, ծանրաբեռնուած դարձուածքներ գործածելէ: Այս իմաստով միշտ ալ բախտաւորութիւնը ունեցած ենք իբրեւ ժողովուրդ, մեր մէջ տեսնելով բարձրաստիճան եկեղեցական ղեկավարներ:*

*Երեկոյի աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:*

*Իր իւրայատուկ հանգամանքին համար գնահատելի այս երեկոյի համար շնորհակալութիւն եւ վարձքը կատար բոլոր մասնակցողներուն:*

*Յ. Ս.*

Հայ Թելեժամը Կը Վերադառնայ 18ը Ալիքի Վրայ
Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ այլ Օրուան 24 Ժամերը
Շաբաթը 7 օր անվճար
Հարկ չկայ բաժանորդագրուելու – 40 Յաւելեալ ալիքներ
Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել
Հայկական Թելեժամ (818) 982–2400
*********
The Armenian Teletime Is Back On Channel 18
Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day
7 Days Per Week, Free
No Subscription Fee - Plus 40 Additional Channels
For info call The Armenian Channel (818) 982-2400

# ԲԱԶՄԱԽՆԴԻՐ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 6-էն*

*Նախկին դաշնակցի գործունէութեան ամօթաբեր բծերը: Երբեմն նրանք Ցուղայավարի՝ համբուրելով, են «դաւաճանում» Նախկին դաշնակցին: Քոչարեան-Սարգսեան մեծ դժկամութեամբ են ընդունում նրանց որպէս ինքնուրոյն թեկնածու, ինքնուրոյն ծրագրով հանդէս գալու փաստը: Նրանք այդպիսի արարք թոյլատրելի են համարում, եթէ վերջիններիս գործունէութիւնը ուղղուած լինի լոկ Տէր Պետրոսեանի թուլացման: Վերջին հաշուով այնպէս է ստացւում, որ իշխանական ուժերին տարբեր խորութեամբ ու եղանակներով քննադատում են բոլորը, միաժամանակ, որոշ ուժեր հիմքեր են գտնում նրանց ներկան ու ապագան արդարացնելու համար:*

*Հակապետրոսեանական ճակատը գլխաւորում է Քոչարեան-Սարգսեան շտապը, որը ոչ միայն իր մանկլաւիկներից պահանջում է հնազանդութիւն, այլեւ առաւելաբար ի գործ է դնում ոչ թէ պայքարի գաղափարական, այլ վարչական, ուժային եւ հակասահմանադրական եղանակներ: Նա փորձում է ժողովրդին վախեցնել, որ Տէր Պետրոսեանի յաղթանակի դէպքում կարող է երկրում քաոս, քաղաքացիական պատերազմ, տնտեսական ճգնաժամ, սոցիալական փոթորիկ, պետութեան երեք ճիւղերի միջեւ (Ազգային ժողովի, Նախագահական մեքենայի,ու իրաւական-դատական ուժերի) հակասութիւն ու անհամաձայնութիւն առաջանալ, քանի որ իրենք հեշտութեամբ չեն զիջելու իրենց դիրքերը, քանի որ զինուորական ու ոստիկանական ուժը դեռ իրենց հսկողութեան տակ է, քանի որ երկրի տնտեսական սիւները եւ անօրէն խմբակցութիւնները իրենց հետ են, քանի որ իրենց դրածոյ երեսփոխանների ու նորընտիր Նախագահի միջեւ գոյութիւն ունեցող էական տարբերութիւնը կարող է խախտել ստեղծուած «ներդաշնակութիւնը», քանի որ ժողովուրդը վախկոտ, անտարբեր ու անողնաշար է: Այսպիսով, փաստօրէն իշխանութիւնը ձգտում է բացառել դեմոկրատական ընտրութիւնների միջոցով Հայաստանի վարչակարգը փոխելու, բարելաւելու ու դեմոկրատացնելու նուազագոյն հնարաւորութիւնն անգամ:*

*Քոչարեան-Սարգսեան ճակատը իր ձեռքբերումների, նուաճումների մասին արտայայտուելիս շեշտում է Երեւանում ծաւալուած շինարարական աշխատանքները: Վերջինս փաստօրէն հիմքն ու աղբիւրն է բոլոր տեսակի թուարկուող «նուաճումների»: Նախ նշենք, որ Երեւանեան շինարարութիւնը անհնարին է տեղաւորել Հայաստանի առաջնահերթ նախապատուութիւնների շարքում, քանի որ դրանք, ըստ պաշտօնական ու ժողովրդական անուանակոչման, «էլիտար» են՝ վերնախաւային են: Երբ երկրում կան տասնեակ հազարաւոր անտուն, խրճիթներում ու թիթեղեայ տնակներում շուրջ քսան տարի տառապող քաղաքացիներ, որոնց շարունակ բնակարան է խոստացուել, «էլիտար», վերնախաւային շինութիւններով, մայրաքաղաքի ճանապարհների բարելաւումով եւ քաղաքի գեղագիտական տեսքի փոփոխութեամբ հրապուրուելը կորցնում է իր բարոյական, սոցիալական, ժողովրդային իմաստը: Նկատենք, որ նշուած շինարարութիւնների զգալի մասը կատարւում է տուեալ տարածքների կամ շինութիւնների օրինական տէրերի բռնի իրաւազրկմամբ, նրանց ունեցուածքի անօրինական բռնագրաւմամբ: Մինչեւ օրս շարունակւում է պետութեան այդ անիրաւութիւնների դէմ պայքարող հազարաւոր ազնիւ քաղաքացիների պայքարը: «Էլիտար» շինարարութիւնը ծաւալւում է այնպիսի պայմաններում, երբ բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը աղքատանում է ու երկրի հարստութիւնը կուտակւում բնակչութեան աննշան փոքրամասնութեան ձեռքում: «Էլիտարը» «էլիտար» շինութիւններ է անում «էլիտարի» համար, «էլիտարի» հարստացման համար, այն ժամանակ երբ աղէտի գօտու բնակչութեան զգալի մասը տառապում է թիթեղեայ խրճիթներում ու կիսափլատակ տներում: Նկատենք, որ շինարարական աշխատանքները ծաւալւում են հիմնականում Երեւանում, անուշադրութեան մատնելով Հանրապետութեան այլ վայրերը: Միւս կողմից, պատմութիւնը վկայում է, որ նման շինարարութեամբ միակողմանիօրէն հրապուրուող քաղաքականութիւնը, որը կատարւում է մարդու բուն ընկերային, բարոյական ու դեմոկրատական պահանջների արհամարհման պայմաններում, չի կարողանում փրկել երկիրն ու ժողովուրդը: Դա ակնյայտ կերպով նկատելի դարձաւ հիթլերեան Գերմանիայում, Մուսոլինիի Իտալիայում, Ֆրանքօյի Սպանիայում եւ այլ բռնատիրական երկրներում:*

*Լեւոն Տէր Պետրոսեանը դաժանօրէն քննադատւում է Հայաստանի Հանրապետութեան առաջին տարիներում ստեղծուած մութ, ցուրտ օրերի համար, երբ նորածին հանրապետութիւնը պայքարում էր իր գոյութեան, կազմաւորման, Արցախի ազատագրման ու թշնամիների զինուորական միաւորումների դէմ: Ճիշդ ասած, ես ուսումնասիրեցի պատերազմի մէջ գտնուող Եւրոպայի քարտէզը գտնելու համար մի երկիր, որը կռուի ժամանակ ապրել է լոյսի, վառելանիւթի եւ սննդամթերքի առատութեան պայմաններում: Անկեղծ ասած, չգտայ: Սովետական միութիւնը նուազագոյնն ունէր: Անգլիան յաճախ ապրում էր մի քանի օրուայ պաշարի առկայութեան ծանր պայմաններում: Հանրապետութիւնը կամ պիտի կարողանար պահպանել իր գոյութիւնը, կերտել իր պետական մեքենան ու բանակը եւ յաղթել, կամ չգոյանար: Ամէն մի բանիմաց ու ազգասէր նախագահ պիտի նախընտրի պահել երկիրը, կազմակերպել բանակն ու յաղթանակը՝ բնակչութեան ժամանակաւոր զոհողութիւնների ու նեղութիւնների հաշուին: Հակառակը կը լինի դաւաճանութիւն ու օրինազանցութիւն: Ես յիշում եմ հազարաւոր մարդկանց, որոնք կրկնում էին ու շարունակում են այսօր կրկնել հետեւեալ խօսքերը՝ «Ներելի են բոլոր ընթացիկ մանր ու մունր սխալները, քանի այսօր գոյութիւն ունի Հայաստանի պետականութիւնը, քանի մենք ունենք հերոսացած ազգային բանակ, քանի ազատագրուած է Արցախը ու գործում է Արցախի պետութիւնը»:*

*Լեւոն Տէր Պետրոսեանը իր մրցակիցների կողմից քննադատւում է նաեւ նորից գործօն քաղաքական կեանք վերադառնալու համար, քանի որ նրա այդ քայլը անսպասելի էր, եւ զգալի փոփոխութիւններ, տեղաշարժեր եւ ցնցումներ առաջացրեց հայ քաղաքական կեանքում, արդի ընտրարշաւում: Այն փոխեց հայ կեանքում առկայ քաղաքական ուժերի յարաբերակցութիւնը: Այն ոչնչացրեց Քոչարեանի եւ Սարգսեանի կողմից մշակուած մի շարք ծրագրեր ու հարկադրեց նորերի որդեգրումը:*

*Երբ Լեւոն Տէր Պետրոսեան յայտարարեց, որ իր հիմնական առաքելութիւնն է վերացնել Հայաստանում նկատելի անօրինականութիւնն ու բռնատիրութիւնը ու վերահաստատել օրէնքի իշխանութիւնն ու սահմանադրական կարգերը , տիրող իշխանութիւնն անմիջապէս նրան վերադարձի նպատակը պիտակաւորեց որպէս վրէժխնդրութիւն, վիրաւորուած ինքնասիրութիւնից բխող չարիք գործելու ու անկարգութիւն հրահրելու մարմաջ: Այս պիտակաւորումը կարող է ունենալ երկու հաւանական հիմք կամ բացատրութիւն:*

*Քոչարեան-Սարգսեան խմբակը քաջ գիտի, որ ինքը Տէր Պետրոսեանին իշխանազուրկ արեց ոչ օրինական ճանապարհով, երկրում քաղաքացիական պատերազմ հրահրելու սպառնալիքով: Դրանից յետոյ նա Տէր Պետրոսեանին զրկեց անցեալ պաշտօնից բխող առաւելութիւնների մեծ մասից, անընդհատ վիրաւորեց նրա անձը, խիստ հսկողութեան տակ դրեց նրա յարաբերութիւններն ու գործունէութիւնը: Այդ պատճառով էլ տիրող իշխանութիւնները կարծում են, որ Տէր Պետրոսեանը լցուած է ատելութեամբ, վրէժխնդրութեան զգացումով եւ վերադառնալով նա պիտի գործի համապատասխանաբար: Բայց ՀՀ անդրանիկ Նախագահը անընդհատ շեշտեց, որ իր նպատակը կառուցողական է, որ ինքը գալիս է Հայաստանը կործանումից փրկելու առաքելութեամբ:*

*Խորհրդային Ղարաբաղում որպէս կոմերիտական փոքր առաջնորդ, մետաքսի գործարանի ղեկավար ու փլուզման տարիներին զանազան յանձնարարութիւններ կատարելիս Քոչարեանը աչքի ընկաւ անհանդուրժողականութեամբ, յիշաչարութեամբ ու վրէժառութեամբ: Նա նոյնիսկ սպաննել տուեց իր այն հին ընկերներին, որոնք պահպանեցին ողջունելու նախկին ընկերային ձեւը: Այդ հիման վրայ շրջապատը նրան մկրտեց Կոպրա (ակնոցաւոր օձ, ամէնից վտանգաւոր օձերից մէկի) մականունով: Բնականաբար նա միտում է ուրիշների մօտ կոպրայական յատկութիւններ նկատել:*

*Քաղաքական գործիչների եւ ուժերի վերադարձը դէպի իշխանութիւն այնքան էլ անսովոր երեւոյթ չէ: Այն պատմութեան մէջ ունեցել է ինչպէս դրական, այնպէս էլ բացասական կամ աննշան դերակատարում: Իւրաքանչիւր վերադարձ ունեցել է իր առանձնակի իմաստն ու նշանակութիւնը: Հակագիտական կը լինի վերադարձը կանխակալ կերպով դիտել որպէս բացասական, ինչպէս փորձում են այդ անել Քոչարեան-Սարգսեան խմբի ներկայացուցիչները, երբ քննարկում են Լեւոն Տէր Պետրոսեանի վերադարձը:*

*Նափոլէոն Պոնապարտը Ազգերի Ճակատամարտում պարտուելուց յետոյ ստիպուած հրաժարուեց իշխանութիւնից ու աքսորուեց Էլբա կղզին: Իր համախոհների օգնութեամբ նա վերադարձաւ Ֆրանսա, նորից վերցրեց իշխանութիւնը եւ հարիւր օր անց պարտուելով Վատերլոյի ճակատամարտում աքսորուեց Սբ. Հելէն կղզին: Նափոլէոնի վերադարձը բացասական դեր խաղաց, քանի որ այն առաւելաբար միտում էր իրականացնել աշխարհակալական նպատակներ: Դրանով Ֆրանսայում վերականգնուեց Բուրբոնների թագաւորութիւնը: Պատմութեան ծանօթ է նաեւ Վինստոն Չերչիլի վերադարձը դէպի գործօն ու ղեկավար քաղաքական կեանք: Նա անգլիական բանակի, 1915-ին, Տարտանելի աղէտաբեր ցամաքահանման գլխաւոր ճարտարապետներից էր: Նա մեծապէս վնասեց անգլիական տնտեսութեանն ու իր հեղինակութեանը Ոսկու Հին արժէքաւորումը պահպանելու որոշումով ( 1925-1926): Որոշակի ժամանակով ենթարկուեց քաղաքական մեկուսացման ( 1925-1933): Պաշտպանելով Անգլիայի Էդուարդ Է-ի պարզ ծագումով ամերիկացու հետ*

*Շար.ը էջ 18*

**MELODY INTERNATIONAL MUSIC SCHOOL Inc.**

**ՄԵԼՈՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**



Join Our New Music School in Pasadena
By Experineced & Educated Teachers

Piano, Keyboard, Violin, Viola, Vocals, Singing, Guitar, Bass, Flute, Duduk, Drums & Percussion lessons for all ages and levels
Professional Digital Recording studio
for all your audio recording needs

**1060 N. Allen Ave. #D Pasadena, CA 91104**
**Phones: (626) 797-8867 & (818) 599-1606**
**and**
**334 N. Central Avenue Unit 202**
**Glendale, CA 91203**
**Phones: (818) 244-8244 & (818) 599-1606**
**Visit us at: www.musiclessons4u.com**

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՄԱԼԹԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ԱՌԱՋԱՏԱՐ



*Ֆութպոլի Հայաստանի հաւաքականը Փետրուար 2-ին իր առաջին հանդիպումը անցկացրեց Մալթայի միջազգային մրցաշարում: Հայ ֆուտբոլիստները 1:0 հաշուով յաղթեցին Մալթայի հաւաքականին: Հանդիպման միակ գնդակը 63-րդ րոպէին խփեց Արա Յակոբեանը: Այսպիսով դանիացի մարզիչ Եան Պոուլսենը իր նորամուտը Հայաստանի հաւաքականում նշեց յաղթանակով:*

*Նոյն օրը Պելառուսի հաւաքականը 2-0 արդիւնքով յաղթեց Իսլանտիայի թիմին:*

*Փետրուար 4-ին Հայաստանի ֆութպոլի ազգային հաւաքականը 2:1 հաշուով յաղթելով Պելառուսի թիմին Մալթայում ընթացող ֆուտբոլի միջազգային մրցաշարի երկրորդ փուլում, վաստակել է 6 միաւոր՝ դառնալով մրցաշարի միանձնեայ առաջատարը:*



*Հայաստան-Պելառուս խաղում գոլերի հեղինակներ են դարձել Վ.Գլեբը (Բելառուս)՝ 5-րդ րոպէ, Արարատ Առաքելեանը՝ 19-րդ եւ Արա Յակոբեանը՝ 77-րդ րոպէ: Նշենք նաեւ, որ սա Արա Յակոբեանի երկրորդ գոլն է այս մրցաշարում:*

*Մրցաշարի միւս խաղում Մալթայի ֆուտբոլիստները 1:0 հաշուով յաղթել են Իսլանտիայի թիմին եւ վաստակել 3 միաւոր: Իսլանդիայի ֆուտբոլիստներն առայժմ միաւոր չունեն:*

*Փետրուար 6-ին Հայաստանի հաւաքականը մրցելով Իսլանտիայի հետ 0-2 արդիւնքով պարտութիւն կրեց: Նոյն օրը Պելառուսի հաւաքականը 1-0 արդիւնքով յաղթեց Մալթային:*

*Այսպիսով՝ մրցաշարի աղիւսակը հետեւեալն է.*

| | Խաղ | Յաղթ. | Հաւս. | Պարտ. | Կոլեր | Միաւորներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1.Հայաստան | 3 | 2 | 0 | 1 | 3-3 | 6 |
| 2.Բելառուս | 3 | 2 | 0 | 1 | 3-3 | 6 |
| 3.Մալթա | 3 | 1 | 0 | 2 | 1-2 | 3 |
| 4.Իսլանդիա | 3 | 1 | 0 | 2 | 2-3 | 3 |

## ՀԱՅ ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԸ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՆ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ

*Մոսկուայի շախմատի 4-րդ բաց առաջնութեան հիմնական մրցաշարում Հայաստանի գրոսմայստերներ Կարէն Ասրեանը եւ Զաւէն Անդրէասեանը վաստակել են 2,5 միաւոր 3 հնարաւորից եւ 3-րդ փուլից յետոյ կէս միաւորով ետ են մնում առաջատարների խմբից: Գրոսմայստեր Վլադիմիր Յակոբեանը, ինչպէս նաեւ վարպետներ Հրանտ Մելքումեանը, Դաւիթ Քալաշեանը եւ Գէորգ Հայրապետեանը վաստակել են 2-ական միաւոր:*

*Կանանց մրցաշարում գրոսմայստեր Էլինա Դանիէլեանը 3 փուլերից յետոյ ունի 2,5 միաւոր եւ գտնւում է առաջատարների խմբում, իսկ լիբանանցի գրոսմայստեր Քնարիկ Մուրադեանը վաստակել է 2 միաւոր:*

*Մրցաշարի «Բ» խմբում Հայաստանի միանգամից 4 շախմատիստներ՝ Վահագն Խաչատրեանը, Վարդան Խոջայեանը, Տիգրան Գասպարեանը եւ Վարդան Մելքոնեանը 3 հնարաւորից վաստակել են 3 միաւոր եւ տեղ են զբաղեցնում առաջատարների խմբում:*

## ՎԻԿ ԴԱՐՉԻՆԵԱՆ - ՋԵԴ ԳՈՐԵՍ ՄՐՑԱՄԱՐՏՆ ԱՌԱՅԺՄ ԱՒԱՐՏՈՒԵԼ Է ՈՉ-ՈՔԻ

*Հայաստանի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ, պրոֆեսիոնալ բռնցքամարտի միջազգային ֆեդերացիայի եւ պրոֆեսիոնալ բռնցքամարտի կազմակերպութեան վարկածով աշխարհի նախկին ախոյեան Վախթանգ Դարչինեանը ոչ-ոքի է աւարտել Փետրուարի 2-ին Ֆիլիպինների Ջեբու քաղաքում կայացած յաւակնորդների իր մրցամարտը ֆիլիպինցի Ջեդ Գորեսի հետ մինչեւ 52,163 կգ քաշային կարգում:*

*Մրցաւարներից մէկը յաղթանակը տուել է Վ.Դարչինեանին՝ 114:112 հաշուով, միւսը՝ 113-112 հաշուով՝ Ջ.Գորեսին, իսկ երրորդն արձանագրել է ոչ-ոքի՝ 113:113:*

*Նշենք, որ Վիկ Դարչինեանը մրցամարտի ընթացքում նոկդաունի է ենթարկել մրցակցին:*

*Այս զոյգի յաղթողը կը ստանայ աշխարհի ախոյեանի տիտղոսի հաւակնորդի կոչումը եւ այդ կոչումը կը վիճարկի այս քաշային կարգում գործող ախոյեան, ռուս բռնցքամարտիկ Դմիտրի Կիրիլովի հետ մրցամարտում:*


## ԳՐԱՒՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| Փետրուար 14 | Valentine Dinner |
| Մարտ 1 | Comedy Night |
| Մարտ 23 | Զատկուայ Տօնակատարութիւն |
| Ապրիլ 5 | Spanish Night |
| Ապրիլ 26 | Las Vegas Trip |
| Մայիս 11 | Մայրերու Օրուայ Նախաճաշ |
| Յունիս 14 | Հայրերու Օր |
| Օգոստոս 10 | Հանգանակային Ճաշկերոյթ «Մասիս» շաբաթաթերթի |
| Հոկտեմբեր 4 | Հ.Մ.Մ.ի Տարեկան Պարահանդէս |
| Դեկտեմբեր 31 | Նոր Տարուայ Խրախճանք |


## ՖՈՒԹՊՈԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ Կ'ԸՆԴՈՒՆԻ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԹԻՄԻՆ



*Խորուաթիայի մայրաքաղաք Զագրեբում Յունուարի 30-ին տեղի ունեցաւ ֆութպոլի աշխարհի 2010թ.-ի առաջնութեան ընտրական փուլի 5-րդ խմբի վիճակահանութիւնը: Խմբում ընդգրկուած Հայաստանի ազգային հաւաքականի մասնակցութեամբ ընթացիկ մրցաշրջանի խաղացանկը այսպիսին է.*

2008

| | |
|---|---|
| Սեպտեմբերի 6-ին | Հայաստան - Թուրքիա, |
| Սեպտեմբերի 10-ին | Սպանիա - Հայաստան, |
| Հոկտեմբերի 11-ին | Պելճիգա - Հայաստան, |
| Հոկտեմբերի 15-ին | Պոսնիա - Հայաստան |

2009

| | |
|---|---|
| Մարտի 28 | Հայաստան-Էստոնիա |
| Ապրիլի 1 | Էստոնիա-Հայաստան |
| Սեպտեմբերի 5 | Հայաստան-Պոսնիա |
| Սեպտեմբերի 9 | Հայաստան-Պելճիգա |
| Հոկտեմբերի 10 | Հայաստան-Սպանիա |
| Հոկտեմբերի 14 | Թուրքիա-Հայաստան |

*Հարկ է նշել, որ Հայաստանի հաւաքականի համար խաղացանկը բաւական ծանր ու դժուարին մեկնարկ է նախատեսել: Ընդամէնը չորս օրում մեր ֆութպոլիստները պէտք է մրցեն ընտրական 5-րդ խմբում ուղեգրերի հիմնական յաւակնորդներ Թուրքիայի եւ Սպանիայի հաւաքականների հետ: Թուրքերի հետ երեւանեան հանդիպումից չորս օր յետոյ հարկ կը լինի հիւրընկալուել Սպանիայի ահեղ հաւաքականին: Մինչ օրս սպանացիների հետ անցկացրած բոլոր չորս հանդիպումներում էլ հայ ֆութպոլիստները պարտուել են՝ չկարողանալով գէթ մէկ գնդակ խփել մրցակցի դարպասը, փոխարէնը սեփականն ընդունելով 10ը: Հոկտեմբերին էլ կրկին մրցակիցների դաշտերում մեր հաւաքականը պէտք է մրցի իր միւս անցանկալի մրցակցի՝ Պելճիգայի եւ Բոսնիայի ընտրանիների հետ: Բելգիացիների հետ էլ անցկացրած չորս խաղերում մեր հաւաքականը միայն պարտութիւններ է կրել ընդհանուր 0-8 հաշուով: Իսկ Բոսնիայի հաւաքականի հետ մեր ֆուտբոլիստներն առաջին անգամ են հանդիպելու:*

---

## ԲԱԶՄԱԽՆԴԻՐ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 17-էն*

*ամուսնանալու ծրագիրը, Ջերչիլ զգալիօրէն վնասեց իր հեղինակութեան: Հակառակ այս բոլորին, 1940-ին նրան վստահուեց Անգլիայի Վարչապետի պարտականութիւնը, քանի որ նա ի սկզբանէ դէմ էր Գերմանիան վերազինելու ու նրան զիջումներ կատարելու քաղաքականութեան: Նրա վերադարձը դրական քայլ էր, քանի որ նպաստեց Եւրոպայի ազատագրման, ֆաշիզմի պարտութեան ու նոր Եւրոպայի ստեղծման: Խիստ դրական էր նաեւ Շարլ Դը Գոլի վերադարձը իշխանութեան: Երկրորդ Աշխարհամարտի սկզբում Ֆրանսայի պարտութիւնից յետոյ Դը Գոլ ստեղծեց «Ազատ Ֆրանսա» (Մարտնչող Ֆրանսա) շարժումը, վերակազմեց արտերկրի ֆրանսական բանակը, կազմակերպեց Ֆրանսայի ներքին ընդդիմութիւնը: Նա յաղթական դաշնակիցների հետ մտաւ Ֆրանսա եւ դարձաւ ժամանակաւոր կառավարութեան ղեկավարը (1944): Հիմնադրեց «ֆրանսական ժողովրդի Միաւորում»-ը (1947): Շուտով ստիպուած հեռացաւ գործօն քաղաքական գործունէութիւնից (1953) տարբեր կուսակցութիւնների խարդաւանքների պատճառով: Երբ ֆրանսան չկարողացաւ պահպանել իր քաղաքական կայունութիւնը ու կորցնում էր իր միջազգային հեղինակութիւնը, Դը Գոլ (1958) վերադարձաւ գործօն քաղաքական կեանքի ու հակառակ իրեն դէմ եղող ընդդիմութեան կերտեց ֆրանսայի Հինգերորդ Հանրապետութիւնը ՝ դառնալով դրա անդրանիկ նախագահը: Նա երկրորդ անգամ լինելով փրկեց Ֆրանսան: Հայ իրականութեան մէջ դրական է նաեւ Կարէն Սերոբի Դեմիրճեանի վերադարձը գործօն քաղաքական կեանք: Նա Խորհրդային Հայաստանի լաւագոյն կոմկուսի ղեկավարներից էր, որին պատմութեան բերումով վիճակուած էր «չէզոքացնել» 1988-ին ծաւալուող ազգային ազատագրական շարժումը, Ղարաբաղի կարգավիճակը փոխելու համար մղուող շարժումը: Որպէս հայրենասէր չհամաձայնելով Մոսկուայի ծայրայեղական ու սխալ դիրքորոշման հրաժարուեց իր պաշտօնից: Սակայն հանրապետութեան ստեղծումից յետոյ եկաւ մի պահ, երբ նա զգաց որ նոր Հայաստանը կարիք ունի իր փորձառութեան ու նա միացաւ ՀՀ ղեկավարութեան: Նրա վերադարձը այնքան յուսադրող ու նշանակալից դարձաւ, որ հակառակորդները նրա հետ ֆիզիքական հաշուեյարդար տեսան: Դաշնակցութեան կողմից որպէս նախագահական թեկնածու իջած Վահան Յովհաննիսեանը գտնում է, որ անցեալում որպէս Քոչարեան-Սարգսեան իշխանութեան լծորդ հանդէս եկած դաշնակցութեան վերադարձը դէպի ինքնուրոյն քաղաքական ասպարէզ նոյնպէս հիմնաւորուած է ու արդարացի:*

*Լեւոն Տէր Պետրոսեանը նկատելով, որ ՀՀ աստիճանաբար կորցնում է իր պետականութիւնը, որ նա տնտեսապէս, բարոյապէս ու իրաւապէս քայքայւում է, որ նրա քաղաքացիները զրկւում են իրենց բնական իրաւունքներից վերադարձաւ գործօն քաղաքական կեանք՝ որպէսզի ՀՀ դնի իր ժողովրդավարական հունի մէջ, ու նորից հնարաւոր դարձնի նրա կենսունակութիւնն ու առաջընթացը: Նախագահական պայքարի մէջ ընդգրկուած եւ ոչ մի ուժ, բացի Քոչարեան-Սարգսեան ճակատից, այժմ չի կարողանում շրջանցել այդ անհրաժեշտութիւնը: Այսպիսով, դրական, հիմնաւորուած ու արդար է ՀՀ առաջին նախագահի վերադարձը:*

*Այսպիսով, ակնյայտ է, որ արդի նախագահական ընտրութեան նպատակը լոկ նախագահի ընտրութիւնը չէ: Նրան վիճակուած է լուծել բազմաթիւ կարեւորագոյն պատմական, քաղաքական, իրաւական, տնտեսական, ընկերային, բարոյական, գաղափարական ու կազմակերպչական հիմնախնդիրներ: Դրանք իրենց բնոյթով ու տարողութեամբ այնպիսին են, որ լուծելի չեն լոկ իրեն վերարտադրել ձգտող Քոչարեան-Սարգսեան իշխանութեան կողմից:*

# ՄԱՀԱԽՕՍԱԿԱՆ ԸՆԿԵՐ ՅԱԿՈԲ ԱՂԱՅԵԱՆԻՆ

*Անսպասելի մահուան բօթը, ցրտաշունչ այս օրերուն, անգամ մը եւս եկաւ դաժանօրէն բախելու՝ Հնչակեան մեծ ընտանիքին դուռը, գուժելով մահը ընկ. Յակոբ Աղայեանին: Մարդ մը, ընկեր մը, որուն իմացական կեանքը եղաւ համակ նուիրում՝ իր սիրելի կուսակցութեան համար, ինչպէս նաեւ որպէս ամուսին եւ ծնող՝ իր կնոջ եւ զաւակներուն համար: Կը գիտակցինք, որ ծանր պարտականութիւն մըն է խօսիլ ընկերոջ մը մասին, որ խառնուածքով բռնկուն էր եւ յախուռն, բոցաշունչ ելոյթները՝ ոգեւորող, խանդավառութիւնը՝ վարակող, մանաւանդ այն տարիներուն, երբ ինքը դեռ նոր կը մտնէր հասարակական կեանք, ուր եւ նո՛ր կը ձեւաւորուէր ինքը՝ որպէս կուսակցական, որակներ զորս ունէր բնածին, ի վերուստ տրուած՝ շռայլօրէն: Սակայն չենք կրնար ամբողջացնել իր կերպարը. եթէ չյիշենք իր փխրուն եւ զգայուն հոգին, որ կը յուզուէր արցունքոտուելու աստիճան ու արցունքներուն հետ ծիծաղիլ մանուկի մը պէս:*

*Բարդ ու հակասական կեանք մը վերապահուած էր իրեն, զորս մենք բոլորս ճակատագիր կ՚անուանենք, արդարեւ, կենցաղի անհարթ ու ամէնօրեայ տագնապները դեռ մանուկ հասակէն իրեն ուղեկից ըլլալով, շարունակեց զինք հետապնդել նաեւ յետոյ, իր յորձանուտին մէջ խեղդելու, երբ աւելի յարմարաւէտ կեանք մը կրնար նոյն յաջողութեամբ՝ մտաւոր բարձունքներու հասցնել:*

*Ողբացեալ ընկերը զաւակն էր «Տէործ-Եուլցի» Հայրապետի եւ Մարիամի: Հայերէն առաջին բանաստեղծութիւնը լսեց՝ հօրմէն, որ գոց կ՚արտասանէր «Թումանեանի Ապրէք երեխէք բայց մեզ պէս չապրէք»ը: Ջարդէն փրկուած հօր կրքոտ արտասանութիւնը խորհուրդ մը ունէր անպայման եւ դեռ մանուկ՝ Յակոբի ներաշխարհին մէջ քանդակուեցաւ հօր ընդվզուն արտասանութիւնը: Այնուհետեւ ինքը Կիլիկեանի գրասեղաններէն ծծեց հիւթը՝ Մեսրոպեան ոսկեղնիկի, անտեսելով այլ նիւթեր տարրական, որոնք պէտքական պիտի ըլլային յետագային... Մայրենիի հանդէպ բոլորանուէր սէր մը, որ աւա՜ղ օտար ափերու մէջ հացի խնդիրը պիտի չլուծուէր երբէք: Դեռ դպրոցական պատանի, համարձակութիւնը ունեցաւ կարգ մը հասակակիցներու հետ կազմելու՝ «Տիրունի» Ուսանողական Միութիւնը՝ 1969ին: Ոգեշնչուած ըլլալով Ս. Տիրունիէն, ամէն գնով կը փորձէր նմանիլ մեծ երախտաւորին: Արդար ու անկեղծ փափաք մը, իղձ մը, որ կը փայփայէր իր սրտի գաղտնարաններուն մէջ, կրցա՞ւ հասնիլ իր երազանքին, կարելի է ըսել մասամբ մը, որովհետեւ ինչպէս յիշեցինք, հացի խնդիր մը ունէր լուծելիք, իր քրոջ եւ արդէն ծերունազարդ ծնողքին համար...: Իրեն պէս փխրուն երիտասարդի մը համար, հաւանաբար ճակատագրական սխալ մը եղաւ մեկնումը Դամասկոս, անկէ ալ ծովուն բացերը, որմէ չօգտուեցաւ երբէք, եւ օր մը յուսահատ՝ կրկին երեւցաւ Հալէպի մէջ... Այս անգամ Տիրունիական ընկերները չթոյլատրեցին իրեն կրկնելու նոյն սխալը: Նշանակուեցաւ Հայերէնի ուսուցիչ՝ իր սիրելի Կիլիկեան ճեմարանի մէջ, ապա հերթապահ, յետոյ ամուսնութիւն՝ օր. Էլիզապէթ Գազանճեանի հետ, այս ամուսնութիւնը երիտասարդ զոյգին պարգեւեց մանչ եւ աղջիկ մը: Նոյն միջոցին հրատարակեց իր բանաստեղծութիւններու գիրքը: Բայց օրաւուր շատցող ընտանիքի հոգերը, չէր կրնար ուսուցչութեամբ ապահովել: Լքելով իր սիրած պաշտօնը, նետուեցաւ այլ ասպարէզներու մէջ, յետոյ իր սիրելի կողակիցին երկարատեւ հիւանդութիւնը, ուժասպառ ըրաւ զինք, թէ՛ հոգեպէս, թէ նիւթապէս, որքան ալ հարազատներն ու ընկերները փութացին օգնութեան, սակայն անողոք հիւանդութիւնը աւելի զօրաւոր եղաւ ու գերեզման տարաւ իր սիրած էակին... Հարուած մը, որուն տոկալու համար քարն ալ կը փշրուէր: Ինքը էութեամբ՝ հոգեւորի համար ծնած էր, մշակոյթի անդաստան մը կար սիրտին մէջ, ազգային-կուսակցական եռանդ մը ունէր իր հոգիի խառնարանին մէջ, բայց աւա՜ղ կեանքի խելայեղ քամիները բոլոր այդ երազանքները պատրանաթափ կ՚ընէին: Իր բարի սիրտը, երբէք չկրցաւ լուծել իրեն ի նպաստ վճիռ մը: Ինքը հասունցաւ տարերայնօրէն, ապրեցաւ տարերքին հետ, կնճռոտ ու բարդ իրողութիւններուն, տրամադրուեցաւ յեղափոխականօրէն, որոնք բոլորն ալ իրը ըլլալով, անմեղ մանկական շաղախով թրծուած՝ իր կերպարին ընդգծուածութիւնը կը բնորոշէր: Բնականաբար այս հակիրճ սրտի խօսքին մէջ, կարելի չէ բովանդակել Յակոբ Աղայեան մարդուն, հօր, ընկերոջ, կուսակցականի մը փոթորկայոյզ եւ ալեբախ կեանքը:*

*Այսօր տխուր ենք ու սգաւոր բոլորս, իր զաւակներէն, հարազատներէն, ընկերներէն մինչեւ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան մեծ ընտանիքը:*

*Մեր սուգին չկայ դարման, որովհետեւ կորսնցուցինք պայքարի անվեհեր ընկեր մը, նուիրեալ մը, կորսնցուցինք զինք դեռ երիտասարդ, երբ բեղուն եւ արգասաբեր գալիք մը կ՚ակնկալուէր իրմէ: Սակայն ինչպէս խելայեղ սրտով մտաւ կեանք, այդպէս ալ հեռացաւ:*

*Խաղ մըն է կեանքը, մերթ ուրախ, մերթ արցունք թափելու չափ տխուր... ինքը լացի ատեն ալ խնդաց, ու խինդին մէջ լացաւ եւ այսօր ցուրտ հողին յանձնելով զինք, իր սկսած խաղը՝ անժամանակ ու անսպասելի աւարտին հասաւ, դժբախտութեան մատնելով իր երկու զաւակները, հարազատները եւ իր պատկանած կուսակցութիւնը: Եւ սակայն դժբախտութիւնը մատնանշելով, պէտք չէ յուսահատիլ, քանի որ իր գաղափարական սերմերը կրցաւ սերմանել երիտասարդներուն մէջ:*

*Իր եւ իր ընկերներուն հիմնած «Տիրունի» Ուսանողականը՝ արդէն 39 տարեկան է:*

*Հանգիստ իր յոգնաբեկ մարմնին,*

*Փունջ մը ծաղիկ առ ընկեր ու հետդ տար անդենական:*

*Հոն ծաղիկները շաղ տալով գարուն սփռէ ամենայն:*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

# ԴԻԼԻՋԱՆ ՍԵՆԵԿԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐԳԱՇԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ

*Շարունակուած էջ 8-էն*

*Սոյն գործը «Ոսկէ Մետալ»-ի արժանացած է Երիտասարդութեան Համաշխարհային 6-րդ Փառատօնին, որուն նախագահն էր Դմիտրի Շոստակովիչը:*

*Հետաքրքրական, գեղեցիկ ստեղծագործութիւն է, գրաւիչ մեղեդիներով, ջերմ խառնուածքով. զգացումը պարզ է ու անկեղծ: Մշակման մէջ զգալի է Խաչատուրեանի եւ Չայկովսքիի քնարական սկզբունքներու ազդեցութիւնը: Կտորի բնոյթը քնարա-դրամատիկական է, հակասական մտքերու լարուած անցումներուն մէջէն յառաջադէմ արդի մարդ անհատին կեանքը կ՚ուզէ ուրախ, երջանիկ տեսնել:*

*Ա մասը* (Allegro Patetico) *յուզանակօրէն թատերական է, թաւ ջութակահար* Steven Erdody *հիանալի դրսեւորեց անհանգիստ խռովայոյզ վիճակը:*

*Լուսաւոր, պայծառ* (Allegro Gracioso) *Բ մասը կը յուշէ ժողովրդական ուրախութեան պատկերներ: Պարեղանակներ: Դարձեալ, թաւ ջութակի ռիթմիկ ընկերակցութիւնը մնացեալ գործիքներու հմայիչ մեղեդիներուն՝ պայծառ տրամադրութիւններ ստեղծեցին: Իսկ երրորդ մասը* (Andante Mesto) *հնչեց մեղմ, զգայուն եւ սրտամօտ, կարծես իւրաքանչիւր երաժիշտ տարբեր մեղեդի մը կը նուագէր՝ միաձոյլ եւ արտայայտիչ: Գրուած է ոգեշունչ եւ բանաստեղծական բարձր տրամադրութիւններով:*

*Վերջին մասը* (Allegro Impetuoso) *ուրախ, պարային տրամադրութեամբ, նուագուեցաւ եռանդուն, աշխոյժ եւ կենսուրախ )Արամ Խաչատուրեանի Սուսերամարտ-ը յիշեցուց): Մերթ յուզախռով, մերթ թրթռուն ու սրնթաց վազքով, երաժիշտները գործը հասցուցին աւարտին: Օրբելեան լաւատես, երջանիկ, բարի սիրտ ունենալու է: Այս ստեղծագործութիւնը իր սրտին, նկարագրին հայելին էր: Սիրեցինք: Շատ ծափահարեցինք:*

*«Դիլիջանցի»ները յաջողեցան ճիշդ մեկնաբանութեամբ, վարպետ նուագածութեամբ, գունեղ արտայայտչականութեամբ բացայայտել գործին էութիւնը՝ հասնելով մեր ալ սրտերուն: Երկար ծափահարութիւններ խլեցին: Ապա հեղինակը բեմ հրաւիրուեցաւ, յուզուած շնորհաւորեց արուեստագէտներուն, գոհունակութիւնը յայտնեց նաեւ ներկաներուն: Օրբէլեան գոհ էր եւ ուրախ: Միթէ լաւագոյն նուէրը չէ՞ր իր ութսունամեակը տօնախմբելու: Արուեստագէտ մը երջանիկ եւ հարուստ կը զգայ, երբ վայելէ ժողովուրդին ջերմ սէրն ու գուրգուրանքը:*

*Գովասանքի արժանի են* Dimitri Shostakovich*-ի գործերուն հրաշալի կատարումները: Մանաւանդ Թիւ 8 քառեակի* (1960) *մեկնաբանութիւնը: Այս գործը ժամանակակից քառեակային երաժշտութեան գոհարներէն է, հարմոնիկ լեզուի պարզութիւնը, մեղեդայնութիւնը խորապէս կը յուզէ ունկնդիրին: Հեղինակը գրած է զայն իր կեանքի այն խոցաւոր օրերուն, երբ մէկ կողմէ ողնածուծի հիւանդութեան ախտաճանաչում ստացաւ, եւ, միւս կողմէ, հարկադրաբար համայնավար կուսակցութենէն հեռացուեցաւ: Գործը նուիրուած է «Հայրենական պատերազմի զոհերուն», բայց ըստ իր դստեր, ան գրուած է ինքզինքին համար՝ որպէս դամբանական: Դիլիջանցիները յաջողեցան, մաքուր մեկնաբանութեամբ, հակասական, յուսահատ, երբեմն մռայլ, եւ երբեմն փոթորկուն վիճակները լաւապէս ցոլացնել:*

*Ա. մասը սկսան թախծոտ տրամադրութեամբ, որ շուտով փոխուեցաւ զուարթ թէմաներու )*Allegro Molto*), հրէական պարի ռիթմերով: Նուագեցին աշխոյժ, եռանդուն: Շոստակովիչի ազգային արժանապատուութեան զգացումը արթննալով, ճամբարներու մէջ հրեայ տառապեալ բանտարկեալներու ցասումը կ՚արտայայտէր զօրաւոր յեղափոխական երգերով: Սահմռկեցուցիչ, սրտաճմլիկ վերջաւորութիւն: Վայրկեանի մը քար լռութենէն ետք, ունկնդիրներու երկարատեւ, որոտընդոստ ծափահարութիւններուն արժանացաւ:*

*Փայլուն կրթութիւն ստացած, ինքնատիպ, նուրբ երաժիշտ է Ղազարոս Սարեան: «Բ. Քառեակ»-ը գրուած է բուռն խանդով, մրրկող անկեղծութեամբ: Առաջին ունկնդրութիւն ըլլալուն, չկրցայ լաւ թափանցել գործին: Թէեւ խիստ զգալի էր գործին իմաստուն զսպուածութիւնը, բարձր ճաշակն ու ճարտարամիտ հիւսուածքը, մերթ լուսաւոր, մերթ վշտակոծ պատկերները, հմայիչ, մեղեդիաձոյլ հնչիւններով:*

*Շնորհաւորութիւններ:*

# ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

*Շարունակուած էջ 15-էն*

*առաքման յատկացնելով:*

*Խորհրդային Հայաստանի մէջ գրականութեան ծաղկումը, Վ. Պետրոսեանի նախագահութեան շրջանին, իր գագաթնակէտին հասաւ, նաեւ Հայրենիք-Սփիւռք մշակութային յարաբերութիւնները ընդարձակուելով փոխադարձ այցելութիւնները աննախընթաց չափերու հասան:*

*Բայց, ափսո՜ս, անկախ Հայաստանի Քոչարեան-Սարգիսեան իշխանութեան շրջանին գործուած ազգային մեծ ոճիրներու շարքին, 1994ին սպաննուեցաւ նաեւ Վ. Պետրոսեան, որ կեանքի հասունութեան տարիներուն տակաւին շատ բան կրնար տալ հայ գրականութեան, միաժամանակ առաջնորդողի դեր կատարելով Հայրենիքի՛ ընկերային ու քաղաքական կեանքին մէջ: Այս տխրահռչակ իշխանութիւնը իր աւարտին հասած ըլլալով, կը մաղթենք որ նոր իշխանութիւնը վերջ տայ այս ոճրաբոյր եւ ագգավնաս մթնոլորտին՝ հայրենիքը առաջնորդելով դէպի բարգաւաճում, արդարութիւն եւ հզօրացում:*

*Իր մեծ ծառայութիւններուն առ ի գնահատանք, Վարդգէս Պետրոսեանի կիսանդրիին բացումը կատարուեցաւ անոր ծննդեան 75-ամեակին առթիւ, այդ փողոցն ու յարակից դպրոցը կոչելով հայրենիքի տաղանդաւոր զաւակին անունով:*

*Յարգանքով, երախտագիտութեամբ եւ մտերմաբար կը խոնարհիմ հայրենիքի մեծ զաւկին՝ Վարդգէս Պետրոսեանի վաստակին ու յիշատակին առջեւ:*

# Դիմեցէ՛ք Բժ. Դաւիթ Դաւթեանին

NewHope Bariatrics®



**Բժ. Դաւիթ Դաւթեանը կը սեպուի LAPBAND-ի լաւագոյն մասնագէտ ռահվիրան որն ունի եզակի փորձառութիւնը եւ՝ իբրեւ մասնագէտ եւ՝ իբրեւ LapBand կրող անձ:**

**David G. Davtyan M.D., FACS, FICS,**
Board Certified - American Board of Surgery, American Board of Bariatric Medicine
American Society for Metabolic and Bariatric Surgeons

***110 Փաունդ կշիռք կորսցնելէն վերջ սկսեցի ինքզինքս բոլորովին նոր անձ մը պեսնալ: LapBand-ը եղաւ կեանքիս փրկութիւնը:***
*-- Տանիա Պ.*









***114 Փաունդ կշիռ կորսցնելը եւ հազուադէպներէն 22 չափէն 4 չափին իջնալը, կեանքիս ամենէն յաճելի երեւոյթներէն մին եղած է, ԲԱՅՑ միայն մէկ ափսոսանք ունիմ՝ երանի աւելի կանուխէն LapBand ըլլայի:***
*-- Ռիմա Ք.*

Յիշեցէք՝
Եթէ հոգնած էք նիհարնալու միջոցներ փորձելէն եւ որոնելէն
Եթէ հոգնած էք չնիհարնալու յուսախաբութենէն
Եթէ կ՛ուզէք՝ ՆԻՀԱՐՆԱԼ ԱՐԱԳ եւ ԸՆԴՄԻՇՏ
Եթէ կ՛ուզէք՝ ըլլալ ԱՌՈՂՋ եւ ԳԵՂԵՑԻԿ
Դիմեցէ՛ք Բժ. Դաւիթ Դաւթեանին

NewHope Bariatrics®

BEVERLY HILLS OFFICE
11847 Wilshire Blvd., Suite 200
Los Angeles , CA 90025
(310) 500-3750

GLENDALE OFFICE
1141 N. Brand Blvd., Suite 300
Glendale, CA 91202
(818) 546-1500

www.LapBandLA.com
www.NewHopeToday.com
Info@NewHopeToday.com